

ՅՈՒ. ՖԻՆԿԼԵՐ

ՊԱՏՐԱՍ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԵՄԷ ԿԱՐԻՐԻ ԵՍՉԻ ԿՆՆՏՎՈՄԻ

ՅԵՐԵՎԱՆ

1939

30 JAN 2018


ՅՈՒ. ՅԻՆԿԼԵՐ

ՊԱՏՐԱՍՏ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ԶԵՌՆԱՐԿ «ՊԱՍՊ»-Ի I ԱՍՏԻՃԱՆԻ
ՆՇԱՆԻ ՆՈՐՄԱ ՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմ. ԱՐՇ. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Կ
-
Վ
Բ
Կ
Կ



ՀԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿ. ԽՍՀ ԿՍՐՄԻՐ ԽՍԶԻ ԿԵՆՏԿՈՄԻ

ՅԵՎԱՆ

1938 թ.

Բարգմանությունը խմբագրեց՝ Ֆ. ՄԱՏՈՒՐՅԱՆ
Տեխնիկական ձեվավորում՝ Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ

ՅՈՒ. ՖԻՆԿԱՆԵՐԻ—«ՊԱՏՐԱՍ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏ-
ՊԱՆՈՒՅՅԱՆ» գիրքը «ՊԱՍՊ»-ի առաջին աստիճանի
նշանի նորմա տվող աշխատավորների համար հանդի-
սանում է, վորպես ձեռնարկ



11-28327 գր

ՌԵԿԼԱՄ-ՉՐԱՏ. ԲՅՈՒՐՈ. ՊԱՏՎԵՐ № 362
«Խ. Հ.» Հրատարակչության Տպարան


ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՄԱՐԴՈՒ ՈՐԳԱՆԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ծարգու մարմինը կազմված է գլխից, պարանոցից, իրանից, վերին վերջավորություններից (ձեռքերից) և ստորին վերջավորություններից (վտաքերից): Կմախքն ու մկանները կազմում են զանգի, կրծքի, վորովայնի և կոնքի խոռոչները, վորոնցում գտնվում են մարդու համար ամենակարևոր օրգանները: Գանգի խոռոչում գտնվում է գանգուղեղը: Կրծքի խոռոչում գետեղված են թոքերն ու սիրտը: Վորովայնի խոռոչում գետեղված են մարսողության և կոնքի խոռոչում՝ միզասեռական օրգանները: Վոսկորները, մկանները, մարդու օրգանիզմի առանձին օրգաններն ու հյուսվածքները կազմված են մանրագույն բջիջներից, վորոնք տեսանելի չեն միայն մեծացնող ապակիների տակ, հատուկ կազմություն ունեցող մի գործիքի միջոցով, վոր կոչվում է միկրոսկոպ (մանրադիտակ):

Կ Մ Ա Խ Ք

Կմախքը կազմված է առանձին վոսկորներից, վորոնք միացած են իրար հետ կցուձիների միջոցով (զանգի վոսկորները, առանձին վողները) կամ շարժական հոդերի միջոցով (վերին և ստորին վերջավորությունները): Կմախքի հետևյալ մասերն են տարբերում՝ 1) վոզնաշարային սյուն, 2) կրծքի վանդակ, 3) գանգ, 4) վերին վերջավորություններ, 5) ստորին վերջավորություններ, 6) ուսային գոտի, 7) կոնքային գոտի (նկ. 1):

Վոզնաշար: Վոզնաշարը (նկ. 2) մարդկային կմախքի հատվածավորված հիմնական սյունն է կազմում: Վոզնաշարի վրա յե պահվում գանգը: Վոզնաշարին է ամրացված կրծքի վանդակը: Կոնքի գոտու ողնությամբ վոզնաշարին են ամրացած ստորին վերջավորությունները:



Նկ. 1. ԽՄԱՐԴՈՒ ԿՄԱՆՔԸ

1. Գաղաթոսիկը, 2. քունքոսիկը, 3. վերին ծնոտ, 4. թիակ, 5. կողեր, 6. արմունկի հոդ, 7. կոնքի վոսկրներ, 8. ծոցիկը—գաստակոսկրային հոդ, 9. ազդը, 10. մեծ վոլոդ, 11—12. սրունք—վոտնաթաթային հոդ, 13. կրունկոսկր, 14. վոտնաթաթ, 15. փոքր վոլոդ, 16. ծնկան հոդ, 17. նստատեղի վոսկր, 18. կոնք-աղջրային հոդ, 19. գավակ, 20. արմունկոսկր, 21. ծղոսկր, 22. գոտկատեղի վոզներ, 23. բազկոսկր, 24. կրծքոսկր, 25. ուսահոդ, 26. անրակ, 27. ստորին ծնոտ, 28. ճակատոսկր:

Վոզնաշարը կազմված է առանձին վոսկրներից, վորոնք վոզներ են կոչվում և բաժանված է հինգ բաժինների՝ պարանոցային, կրծքի, գոտկատեղի, գավակ և պոչուկ: Պարանոցի բաժինը բաղկացած է 7 վոզներից, կրծքինը՝ 12 վոզներից, գոտկատեղինը՝ 5 վոզից, գավակը՝ միակցված ու մեկ վոսկր դարձած 5 վոզներից և, վերջապես պոչուկը՝ 3—7 փոքր վոզներից: Յուրաքանչյուր վոզն կազմված է մարմնից, դրանից դուրս յեկող աղեղից և յեղուստներից: Մարմնի և աղեղի միջև կազմվում է վոզնանցքը:

Մեկը մյուսի վրա դարավելով վոզնաշարի վոսկրները կազմում են վոզնաշարային խողովակը, վորի մեջ գետեղվում է վոզնուղեղը: Վոզների միջև առաձգական կրճիկային միջադիր կա, վոր պահպանում է վոզներին ցնցումներից և վոզնաշարն ավելի դյուրաշարժ ու ճկուն է դարձնում:

Կրծքի վոտնուղեղ: Կրծքի վանդակը կազմվում է վոզնաշարի կրծքային բաժինով, հողերով—մարդը 12 զույգ կող ունի—և կրծվոսկրով:

Կողերը յերկար, կորացած վոսկրներ են, վոր վոզնաշարից դեպի առաջ ու ներքև են ուղղվում: Կրծքային վոզների հետ կողերը միանում են շարժական հողերի ոգնությամբ: Կրծվոսկրը գտնվում է առջևում՝ կրծքի վանդակի աջ և ձախ կիսի կողերի միջև: Կրծվոսկրին անմիջականորեն ամրացված են կողորի միայն վերին 7 զույգը: Կողերի 3-րդ զույգը ամրացված է 7-րդ զույգին, 9-րդ զույգը՝ 8-րդին, 10-րդ զույգը՝ 9-րդին՝ կողերի 11-րդ և 12-րդ զույգերն իրենց առջևի ծայրերով կախված են ազատ: Կրծքի վանդակի այսպիսի կազմվածքի շնորհիվ նրա ծավալը ներօնջվան ժամանակ ավելանում է, իսկ արտաշնչման ժամանակ պակասում է, քանի վոր յուրաքանչյուր անգամ ներօնջելիս կողերը բարձրանում, իսկ արտաշնչելիս՝ իջնում են:

Կրծքի վանդակի մեջ գետեղվում են թորերն ու սիրտը:



Նկ. 2. ՎՈՂՆԱՇԱՐ


1. Պարանոցային մաս, 2. կրծքային մաս, 3. գոտկատեղի մաս, 4. գավակ, 5. պոչուկ:

Գանգ: Գանգը կազմված է գանգի տուփի վոսկորներին և դեմքի վոսկորներին:

Գանգի տուփը կազմված է մեկ ճակատակրից, յերկու դազաթվոսկրից, յերկու քունքոսկրից, մեկ ծոծրակոսկրից և յերկու փոքր վոսկորներից՝ մազոսկրից և սեպաձև վոսկրից: Այս վոսկորներն իրար հետ պինդ միակցված են:

Գանգի զեմքային մասը կազմվում է գլխավորապես վերին ծնոտի յերկու վոսկրից, յերկու այտոսկրից, ստորին ծնոտից և յերկու քթոսկրից: Վերին ու ստորին ծնոտի յեզրերի վրա բնոր կան, վորոնց մեջ զետեղվում են ատամները:

Գանգի տուփի մեջ զետեղվում է գանգուղեղը: Գանգի տուփը միանում է վոզնաշարային խողովակի հետ, վորի մեջ է գտնվում վոզնուղեղը:



Նկ. 3. ՎՈՂՆ.

1. մարմին, 2. աղեղ, 3. յելուստներ, 4. անցք մարմնի և աղեղի միջև:

գտնվում է բուք մասի ուղղությամբ, իսկ արմուկնուկը՝ նկույթի ուղղությամբ:

Դաստակը բաղկացած է յերեք մասերից՝ դասակի վոսկորներից (8 փոքրիկ վոսկորներ), մասնարմասի 5 խողովակաձև վոսկորներից և մասվոսկրներից: Չեռքի յուրաքանչյուր մատը, բացի բութից, բաղկացած է յերեք վոսկրիկներից (Ֆալանգ): Բութ մատը միայն յերկու վոսկրիկից է կազմված (Ֆալանգ):

Ուսագոսի: Վերին վերջավորությունը (ձեռքը) ամրացված է իրանին յերկու վոսկրների՝ քիակի և անոակի ոգնությամբ: Այս յերկու վոսկրներն ել—անրակը կրծքի վանդակի առաջից և

թիակը կրծքի վանդակի հետեից, այսպես կոչված ուսագոսի յեն կազմում:

Ստորին վերջավորությունների վոսկորներ: Ստորին վերջավորությունը (վոտքը) նույնպես յերեք մասից է կազմված՝ ազդրեր, արմնեքներ և բաբեր:

Ազդրը, վոր կմաթքի ամենայերկար վոսկրն է, զետեղվում է աճուկի և ծնկան միջև:

Մրումբը կազմված է յերկու վոսկրից մեծ և փոքր վոլոգներից, վորոնք զետեղվում են ծնկան ու թաթի միջև: Մեծ վոլոգը ուղղվում է զեպի վոտքի բութ մասը, իսկ փոքր վոլոգը՝ զեպի վոտքի ձկույթը:

Վոտքի բաբը կազմված է բազմաթիվ վոսկրիկներից, վորոնք կազմում են վոտնաթաթը (7 վոսկր), մասնարմասներ (5 վոսկոր) և մասվոսկրներ: Վոտքի, ինչպես և ձեռքի յուրաքանչյուր մասն ունի յերեք վոսկոր, բացի բութ մասից, վորը միայն յերկու վոսկրից է կազմված:

Կոնկագոսի: Ստորին վերջավորությունները (վոտքերը) ամբողջած են իրանին կոնկվոսկրների և գավակի միջոցով: Կոնկվոսկրներ և գավակն այսպես կոչված կոնքագոսի յեն կազմում:

Հոդեր: Վերին վերջավորությունների (ձեռքերի) և ստորին վերջավորությունների (վոտքերի) վոսկրները միմյանց հետ հոդերի միջոցով են միանում: Հոդերը կազմվում են յերկու կից վոսկրների ծայրերով, ըստ վորում միացող վոսկրներից մեկը, սովորաբար հասացած հոդային ծայր ունի, իսկ մյուսը համապատասխան փոսիկ, խորե կամ հասացում ունի:

Վոսկրների հոդային ծայրերը ծածկված է կրնիկով, իսկ հոդերը՝ հոդային պարկով, վոր ազուցում է հոդին վորպես քիպ շապիկ: Հոդային պարկի վերևում հոդերն ամրացվում են պինդ կապերով:

Հոդերով միացված վոսկրները կարող են շարժվել մեկը մյուսի մոտ:

Ձեռքի վրա մենք ունենք հետևյալ հոդերը:

Ուսահոդ, վոր միացնում է բաղկվոսկրը թիակի հետ:

Արմուկի հոդ, վոր միացնում է բաղկվոսկրը և նախարակի յերկու վոսկրի (արմուկնկվոսկրի և ճաճանչոսկրի) վերին ծայրերը:

Թղվուսերա-դասակվուսիքային հոդ, վոր միացնում է նախա-
բազկի վուսկերը դաստակվուսկրի հետ:

Մատնների վուսկրներն ել միմիանց հետ հոդերով են միա-
ցած:

Վոտքի վրա հետևյալ հոդերը կան:

Կոնֆազդրային հոդ, վոր ազդը միացնում է կոնքվուսկրի
հետ:

Ծնկան հոդ, վոր սրունքը միացնում է ազդրի հետ:

Մուկնֆարթային հոդ, վոր միացնում է սրունքի վուսկրնե-
րը վոտնաթաթի հետ:

Վոտքի մատների վուսկրներն ել միմյանց հետ հոդերով են
միացած:

Մ Կ Ա Ն Ն Ե Ր


Մարդու կմախքը ծածկված է շատ մկաններով (մսով): Բա-
ցի այդ մկանները մտնում են ներքին զանազան որգանների
(սրտի, ստամոքսի, աղիքների, միզափամփուռչտի և այլն) հյուս-
վածքների մեջ:

Կմախքը ծածկող մկաններն ամենարագմազան մեծութունն
ու ձև ունեն:

Մկանները գրգռվելիս կծկվելու (կարճանալու և հաստանա-
լու) (Նկ. 4) և գրգռումը դադարելիս իրենց նախկին վիճակին



Նկ. 4. ՄԿԱՆԻ ԿՑԿՈՒՄԸ:



Նկ. 5. ՄԿԱՆԻ ՔՈՒԼՍՈՒՄԸ
1. Ձիւ, 2. Մկանի փորկիւ:

վերադառնալու (Նկ. 5) հատկութունն ունեն: Այս հատկության
շնորհիվ մկաններն որգանիզմի շարժիչներն են հանդիսանում:
Յուրաքանչյուր մկան մտտ ծայրով ամրանում է մեկ վուսկորի,

իսկ շրտ ծայրով՝ մյուս վուսկրին: Իրենց կծկումների ժամանակ
նրանք շարժման մեջ են դնում այդ վուսկորներին: Մկանները
խիստ բազմազան շարժումներ են առաջ բերում հոդերում՝ ծա-
լում և բացաճողում, առերում և հեռացում, որինակ ձեռքը՝ մար-
մընից, պտտել դեպի ներս և դեպի դուրս:

ԱՐՅՈՒՆ ՅԵՎ ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐ

Արյունը բաղկացած է հեղուկ մասից, վոր կոչվում է պլազ-
մա և արյան ձեւավոր տարրերից՝ կարմիր ու սպիտակ արյան
մարմնիկներից կամ գնդակներից, վորոնք միայն մանրադիտակի
տակ են յերևում, և արյան թիթեղիկներից:

Արյան պլազման մակարդվելու հատկութունն ունի: Ար-
յան այս հատկութունը հսկայական նշանակութունն ունի մար-
դու կյանքի համար: Փոքրիկ վիրավորման ժամանակ արյունը
մակարդվում է վերքի վրա, ծածկում է դա լերդով և չորանում
է: Յեթե արյունն այս կարևոր հատկութունը չունենար, ապա
ամեն մի քերծվածք կարող եր մահացու լինել, քանի վոր ար-
յունը, չլիրգանալով, աստիճանաբար ամբողջովին դուրս կհոսեր
այս վերքից:

Յեթե մակարդված արյունը մզենք, ապա հեղուկ հյուսթ
կստացվի, վորը արյան ռիսուկ է կոչվում:

Արյան շիճուկի մեջ են գտնվում մարդու համար բոլոր
անհրաժեշտ սննդարար նյութերն ու աղերը: Շիճուկի մեջ են
նաև առաջանում հակաբույցներն ընդդեմ զանազան վարակիչ հի-
վանդությունների:

Արյան կարմիր մաւմնիկները (երիտրոցիտները) հատուկ նյութ
են պարունակում, վորը հեմոգլոբին է կոչվում: Հեմոգլոբինը ու-
ղից իր մեջ է կրանում քթվածիմը: Դա տեղի յե ունենում այն
ժամանակ յերբ արյունը անցնում է այն արյունատար անոթ-
ներով, վորոնք արյուն են մատակարարում թոքերին: Կլանած
թթվածինը մատակարարվում է որգանիզմի բոլոր բջիջներին:
Առանց թթվածնի՝ այրման նպաստող դաղի—անհնարին կլիներ
մարդկային որգանիզմի կյանքը:

Արյան սպիտակ գնդակները (լեյկոցիտներ) որգանիզմին ծա-
ռայութուն են մատուցում վարակիչ հիվանդությունների միկ-
րոբների դեմ պայքարելիս: Լեյկոցիտները շատ զգայուն են մար-
դու որգանիզմի մեջ թափանցած միկրոբների նկատմամբ: Այս

սպիտակ մարմնիկները մասսաներով ուղղվում են դեպի որդանիզմի այն տեղը, վորտեղ թափանցել են միկրոօրները, բունում են նրանց իրենց մարմնից բաց թողած հատուկ յեղուստների միջոցով և լավում են նրանց:

Միկրոօրներ լափող լեյկոցիտները Ֆագոցիտ են կոչվում:

Արյան բնդիսանուր ֆունկուլոլունը մարդու մարմնի մեջ միջին թվով մոտ 5 լիտր է, այսինքն մոտ 25 բաժակ: Մարդու արյան քաշը մոտավորապես կազմում է ամբողջ մարմնի քաշի $\frac{1}{13}$ մասը: Ամբողջ արյան $\frac{1}{3}$ կոուլուսը կաթող է մահ առաջ բերել:

Արյունը հոսելով շրջում է մարդու մարմնի մեջ արյունասար անոթներով՝ զարկերակներով (արտերիա), յերակներով (վենաներով) յեվ մազանոթներով (կապիլյարներով):

Չարկերակներ (արտերիաներ) են կոչվում այն արյունատար անոթները, վորոնցով արյունը հոսում է սրտից:

Յերակներ (վենաներ) են կոչվում այն արյունատար անոթները, վորոնցով արյունը հոսում է դեպի սրտը:

Չարկերակները յերակներից ավելի խորն են գտնվում, ունեն ավելի թանձր ու ավելի առաձիղ պատեր, քան յերակները:

Մազանոթներ (կապիլյարներ) կոչվում են այն մանրազույն արյունատար անոթները, վորոնցով արյունը թափանցում է մեր որդանիզմի բոլոր բջիջների մեջ:

Արյան շարժումը արյունատար անոթների միջով կատարում է սրտը: Սիրտը կոնաձև մկանային դատարկ պարկի ձև ունի, գտնվում է կրծքի վանդակի ձախ կիսում (մոտավորապես Չ-րդ և Ծ-րդ կողերի մակարդակի վրա) հիմքով դեպի վեր, իսկ դազաթով դեպի ցած:

Սիրտը ներքին յերկայնական միջապատով բաժանված է յերկու միմիանց հետ հաղորդակցութուն չունեցող կետերի՝ աջ և ձախ: Սրտի այդ կետերից յուրաքանչյուրը լայնական միջապատով, վոր անցք ունի, բաժանվում է յերկու մասի՝ վերին (նախասրտ) և ստորին (փորոք): Այսպիսով սիրտը չորս բաժանմունք ունի՝ յերկու նախասրտ (աջ և ձախ) և յերկու սրտայտուր (փորոք—աջ և ձախ): Նախասրտերը միմիանց հետ հաղորդակցութուն չունեն: Փորոքներն ել միմիանց հետ հաղորդակցութուն չունեն: Միմիանց հետ հաղորդակցութուն ունեն միայն նախասրտերի և փորոքների միջև յեղած անցքերը փականեր ունեն:

Արյան շրջանառութունը տեղի յե ունենում սրտի մկանի

կծկման հետևանքով, վորը վորպես պոմպ է գործում՝ մի կողմից դուրս է շարժում արյունը, իսկ մյուս կողմից՝ ներս է ծծում:

Սրտի կծկումները տեղի յեն ունենում անընդհատ, մի բուպեյում 60-ից մինչև 80 անգամ:

Սրտի աջ կիսով անցնում է յերակային արյունը, այսինքն այն արյունը, վորի մեջ քիչ թթվածին, բայց շատ ածխաթթու և այլ որդանիզմին անպետք նյութեր կան: Այս նյութերը, վոր որդանիզմի բջիջներում առաջանում են բջիջների աշխատանքի ժամանակ, նյութերի փոխանակության արդյունքներ են կոչվում: Նյութերի փոխանակության արդյունքները բջիջներից մտնում են մազանոթների և յերակների մեջ:

Վեոային (յերակային արյունը) սրտի աջ կեսից աջ սրտախորշի կծկումներով դուրս է վանվում և ուղղվում է դեպի թոքերը: Թոքերի մազանոթներով անցնելիս արյունն իր մեջ է ծծում թթվածինը և դուրս է տալիս ածխաթթուն: Այսպիսով թոքերի մեջ արյունը զարկերակային է դառնում, այսինքն հարստանում է թթվածնով: Արտերային արյունը թոքերից հոսում է սրտի ձախ կեսը: Չախ սրտախորշի կծկումներով արտերային արյունը սրտի ձախ կեսից դուրս է շարժվում արտերիաների (զարկերակների) մեջ: Չարկերակներով և մազանոթներով արյունը շրջում է ամբողջ որդանիզմը, բջիջներին թթվածին և տալիս, բջիջներից դուրս է բերում ածխաթթուն և նյութերի փոխանակության այլ վնասակար արդյունքները, դառնում է յերակային ու վերադառնում է սրտի աջ կեսը դեպի թոքերն ուղղվելու համար: Արյան այն ճանապարհը, վոր նա անցնում է ձախ սրտախորշից և ամբողջ որդանիզմը շրջելով հասնում է աջ նախասրտը, կոչվում է արյան մեծ շրջանառութուն:

Արյան այն ճանապարհը, վոր նա անցնում է աջ սրտախորշից և թոքերի միջով հասնում է ձախ նախասրտին, կոչվում է արյան փոքր շրջանառութուն:

Պուլս—Չարկ: Սրտի բաժանմունքների կծկումներին հաջորդում է թուլացում ու հանգիստը, ըստ վորում յերը կծկվում են սրտախորշերը, նախասրտերը հանգստանում են և ընդհակառակը:

Սրտի ձախ սրտախորշի կծկումները արյունով են լցնում արտերիաները: Իրանց առանձգական պատերը մատների համար զգալի զարկ են ունենում: Այս զարկը կոչվում է պուլս:

Բոլոր զարկերակները տալիս են պուլսացիա: Ըստ պուլսի

(զարկերի) հեշտ և գտնել այն տեղերը, վորոնցով անցնում են մարմնի մակերևույթին ավելի մոտիկ գտնվող արտերիաներ:

Մարմնի մակերևույթի վրա կարելի չէ հետևյալ զարկերակների պուլսը վորոշել՝ ֆուևնի, ֆնեռակի, յեմքանրակային, կունասակի (ամորային), ուսի, նանանչի, ազդրի և սրունչի:

Այս գլխավոր զարկերակների տեղերը անհրաժեշտ է իմանալ, վոր զարկերակային արյունահոսությունների ժամանակ մարդ կարողանա սեղմել դրանց (նկ. 7):


Սովորաբար առողջ, հասակ առած մարդու պուլսի զարկերի թիվը տատանվում է մեկ րոպեյում 70-ից 80-ի միջև:

Պուլսով կարելի չէ դատել սրտի աշխատանքի մասին: Յեթե պուլսը նորմալից ավելի արագ է խփում, ապա սիրտը հաճախ է կծկվում:


Իսկ յեթե պուլսը նորմալից պակաս է, ապա սիրտը դանդաղ է աշխատում:

Ջերմաստիճանը բարձրանալիս պուլսը հաճախակիանում է: Սովորաբար ջերմության բարձրացման յուրաքանչյուր աստիճանին համապատասխանում է պուլսի 10—15 զարկով արագացում: Այսպես 38° ջերմության դեպքում պուլսը սովորաբար մեկ

րոպեյում տալիս է 90—95 զարկ:
 Պուլսը համարվում է լեցուն, յեթե նրա զարկերը պարզ զգացվում են, և՛ թույլ, յեթե նրա զարկերը հազիվ են զգացվում:
 Պուլսը համարվում է կանոնավոր, ուրիշիկ, յեթե նրա զարկերը մեկը մյուսին հաջորդում են միատեսակ ընդմիջումներով,



Նկ. 6. ԱՐՅԱՆ ԵՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՍԵՄ և ՓՈՔԻ ԵՐՁԱՆ:



Նկ. 7. ԶԱՐԿԵՐԱԿՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԻԱՆՑ ՍԵՂՄԵԼՈՒ ՏԵՂԸ ԱՐՅՈՒՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

- 1. բունքի զարկերակի, 2. ծնոտային զարկերակի, 3. քներակի, 4. յենթաճակատային զարկերակի, 5 և 6, ուսի զարկերակի, 7. արտա, 8. ազդրի զարկերակի, 9—10. սրունքի զարկերակի:

և՛ անկանոն, առիքովիկ յեթե նրա զարկերի միջև ընդմիջումները միատեսակ չեն:

Պուլսը հաճախակիանում է բազմաթիվ պատճառների հետևանքով: Նույնիսկ հոգեկան ապրումները, որինակ, սպորտամեններինը ստարտում, հաճախ հաճախակիացնում են պուլսը մինչև 90 զարկ: Հանգիստ քայլելիս պուլսը հասնում է 80-ի, արագ քայլելիս՝ 100-ի, վազելիս, հեծանիվ քշելիս՝ մինչև 200-ի: Պուլսի հաճախակիանալը 140-ից ավելի մարզանքի պարսպմունքների ժամանակ և 180-ից ավելի մրցությունների ժամանակ, ցույց է տալիս, վոր սպորտամենը բավականաչափ չի մարզված և նրա սիրտը զեռ բավականաչափ չի հարմարվել: Կարճատև վազքից, ցատկումից և այլ ֆիզիկական կարճատև վարժություններից հետո պուլսը պետք է վերադառնա նորմալի 2—3 րոպեյից հետո: Ֆիզիկական տևական և ծանր վարժությունների ժամանակ պուլսը հաճախակիանում է, բայց 20—30 րոպեյից հետո դա պիտի նորմալ դառնա: Յեթե 30 րոպեյից հետո պուլսը շարունակում է հաճախակի զարկել, ապա դա վկայում է, վոր սիրտը խիստ հոգնած է:

Արյան ու արյան շրջանառության որգանների մասին այս հատվածում ամբողջ ասածից հետո պարզ է, վոր այդ որգանները հետևյալ կարևորագույն գործն են կատարում որգանիզմի մեջ:—

1) Որգանիզմի բջիջներին դրանց համար անհրաժեշտ սնունդարար հյուսվածք են հասցնում:

2) Որգանիզմի բջիջներին կյանքի համար անհրաժեշտ զաղ—թթվածին են հասցնում և միաժամանակ որգանիզմի բջիջներից հեռացնում են ածխաթթուն ու նյութերի փոխանակության այլ վնասակար արդյունքները:

Արյունը հատուկ հակաթուններ է մշակում վարակիչ հիվանդությունների դեմ, իսկ արյան լեյկոցիտները մեծ դեր են խաղում վարակիչ հիվանդությունների միկրոբների դեմ որգանիզմի մղած պայքարում:


ՇՆՁԱՌՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՇՆՁԱՌԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐ

Մեզ շրջապատող ողբ գազերի թառնուրդ է ներկայացնում: Ողի բաղադրության մեջ մտնում են հետևյալ գազերը՝ բրվածին (20,7%), բորակածին (78,8%), ածխաթթու 10,03%): Բացի այդ, ողի մեջ կան շրի գոլորշիներ և զանազան թառնուրդներ:

Ողի բաղադրիչ մասերից մարդու, և բնդհանրապես բոլոր կենդանի եակների համար կենսական անհրաժեշտություն են ներկայացնում բրվածինը, այրման նպաստող գաղբ: Որգանիզմի բջիջներում թթվածինը նպաստում է սննդարար նյութերի այրմանը, վորի շնորհիվ բջիջներում ստացվում է որգանիզմի կյանքի համար անհրաժեշտ ջերմությունը և հներգիա յե կուտակվում: Այս հներգիան անհրաժեշտ է որգանիզմի աշխատանքի համար:

Թթվածին է մատակարարվում որգանիզմի բջիջներին արյան կարմիր մարմնիկների (երիտրոցիտների) ողնությունով՝ արյան շրջանառության որգանների սիստեմի միջոցով:

Շնչառական որգանների կառուցվածքը: Շնչառական որգանները խոզովակների սիստեմ են ներկայացնում (Նկ. 8), վորոնցով ողբ քթից թոքերի մեջ է մտնում: Այս խոզովակները՝ կոկորդ, շնչափող և բրոնխներ—որգանիզմի շնչառական ուղիներ են կոչվում:



Նկ. 8. ՄԱՐԴՈՒ ՇՆՁԱՌԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԸ

1. կոկորդ, 2. շնչափող, 3. աջ բրոնխ, 4. ձախ բրոնխ, 5. բրոնխիոլներ, 6. թոքային փամփուշտիկներ:

արյունատար անոթներով՝ մազանոթներով:

Բիթը, կոկորդը շնչափողը և բրոնխները ներսից պատած են յուրաքանչյուրով, վոր շարունակ լորձունք է արտադրում: Այս յուրձունքը խոնավացնում է թոքերն անցնող ողբ և իր մեջ է ձծում ողի մեջ յեղած փոշին և այլ թառնուրդները: Շնչառական

ՄԱՐՍՈՂՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐ

Մարսողության ապարատը ծառայում է կերակուր ընդունելու, դա մարսելու, այսինքն զանազան սննդանյութերը մեկ սննդարար հյուսթի վերածելու և յուրացնելու համար, այլ և կերակրի չյուրացված մասերը արտաթորելու համար:


Այս ապարատը կազմված է չընդհատվող խողովակից, վոր սկսվում է բերնի խոռոչից ու վերջանում է հետույքով:

Սողովակը մի քանի մասերի յե բաժանվում՝ բերնի խոռոչ, կլան, կերակրափող, ստամոքս, բարակ աղիքներ և հաստ աղիքներ (Նկ. 9): Այս մասերը տարբերվում են միմյանցից իրենց կառուցվածքով և այն աշխատանքով, վոր նրանք կատարում են մարսողության պրոցեսում:

Մարսողության խողովակի պատերում, ինչպես և դրանից դուրս մի շարք գեղձեր կան: Այդ խողովակից դուրս գտնվող գեղձերն են՝ թուքի գեղձերը, լյարդը և յեմթաստամոքսային գեղձը:

Կերակուրը բերնի մեջ մանրացվում է, թքով թացանում և քամկած գուլպի ձևով կուլ է դնում և ըմպանի միջով անցնում է կերակրափողը: Վերջինս յերկար մտտ խողովակ է, վոր ըմպանի խոռոչը միացնում է ստամոքսի հետ: Կերակրափողի մկանները կծկվելով ներքև են հրում կերակրի այն գուլպները, վոր ըմպանից կերակրափող են մտնում: Այսպիսով կերակուրը կերակրափողով ստամոքսն է իջնում:

Ստամոքսը մկանային մի պարկ է ներկայացնում, վորը գտնվում է մկանային պատվարի տակ: Այս պատվարը, վոր ստոծանի (դիաֆրագմա) յե կոչվում, բաժանում է կրծքի խոռոչը ստամոքսից:



Նկ 9. ՄԱՐՍՈՂՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԸ

1. Թուքի գեղձեր, 2. կերակրափող, 3. ստամոքս, 4. ուղիղ աղիք, 5. վորդանրման յերուտ, 6. կուլոր աղիք, 7. հաստ աղիքներ, 8. բարակ աղիքներ, 9. ստամոքսի մատնյա աղիք, 10. լյարդ, 11. լեզու:

11-289279

ուղիները փոշին ու սոփի վնասակար խոռոչները դուրս են շարտվում հազալիս խուխի հետ: Զանազան հիվանդությունների ժամանակ, այլ և շնչառական սրգանների մեջ գրգռող, ուտիչ և թունավոր նյութեր ընկնելիս լորձուկներ կարող է դուրս շարտվել վորպես քառախախառն, արյունախառն, փրփրոտ խուխ:

Ինչպես է կատարվում ընչառությունը: Շնչելիս կրծքի վանդակը մեկ վերև է բարձրանում, մեկ էլ վար է իջնում: Կրծքի վանդակը վերև բարձրանալիս նրա ծավալն ավելանում է և ձգվում, ընդլայնված թոքերի մեջ ներս է քաշվում արտաքին ոդր: Արտաքին ոդր, կրծքի վանդակը բարձրանալու ժամանակ, թոքերի մեջ մտնելն հենց կոչվում է ներշնչում: Կրծքի վանդակը վար իջնելիս նրա ծավալը պակասում է (թոքերը իջնում են) և ոդր թոքերից դուրս է դալիս: Դա—արտաշնչում է:

Այսպես շարունակ միմյանց հաջորդում են ներշնչումն ու արտաշնչումը: Մարդ մեկ րոպեյում 16—18 անգամ է շնչում: Շնչելիս դբսի ոդր քթի միջոցով մտնում է քթաբեմպանի մեջ, ապա անցնում է կոկորդը, շնչափողը, բրոնխները և մազանոթային բրոնխներով հասնում է թոքային փամփշտիկներին: Վերջիններիս խիստ նուրբ պատերի միջոցով ոդր կլանվում է այն երիտրոցիտների հեմոգլոբինի կողմից, վորոնք գտնվում են թոքային փամփշտիկները խիստ կերպով շրջապատած մազանոթների արյան մեջ: Արյան միջոցով թթվածինը տարածվում է դեպի սրգանիզմի բոլոր բջիջները: Ածխաթթու և ջրի գոլորշիները, ընդհակառակը արյունատար մազանոթներից անցնում են թոքային փամփշտիկներին մեջ և արտաշնչելիս հեռանում են սրգանիզմից: Այսպիսով, շնչելիս լրացվում են թթվածնի պաշարներն սրգանիզմում և նրանից հեռանում են ածխաթթու և ջրային գոլորշիները: Մի շարք հիվանդությունների ժամանակ, այլ և մկանային ու ժեղ աշխատանքի ժամանակ, փոխվում է շնչառության ուղիքը:

Հեվոցը—դա շնչառության հաճախակիացումն է: Հետոյն առաջանում է շնչառական սրգանների մի շարք հիվանդությունների ժամանակ: Հետո կարող է առաջանալ նաև ուժեղ մկանային աշխատանքի ժամանակ: Շնչառության հաճախակիացման թուլության սահմանը ֆիզիկական վարժություններից հետո համարվում է մեկ րոպեյում 28—30 անգամ շնչելը: Ֆիզիկական վարժություններից հետո մեկ րոպեյում 30—40 և ավելի անգամ, իսկ 15 րոպե հանգստից հետո մեկ րոպեյում ավելի քան 25 անգամ շնչելը վկայում է, վոր զգալի գերհոգնածություն է տեղի ունեցել:

վորովայնի խոռոչից: Ստամոքսի պատը պատած է լորձաթափանթով, վորի գեղձերը ստամոքսային հյուսթ են արտադրում:

Ստամոքսի մեջ կերակրի գուղձերը պահվում են 3-ից 6 ժամ և ստամոքսային հյուսթի ազդեցության տակ ջրիկ խյուս են դառնում, վորը և աստիճանաբար անցնում է աղիքների մեջ:

Ստամոքսի հյուսթի մեջ աղաթթու յե պարունակվում: Դա սպանում է կերակրի մեջ գտնվող միկրոօրգանիզմը, անվարակ է դարձնում կերակրին: Աղիքները յերեք բաժին ունեն՝ աստղաձև ուսնյա աղիք, վորի մեջ է կերակուրն անմիջականորեն մտնում ստամոքսից, բարակ աղիքներ և հաստ աղիք: Աղիքների ընդհանուր յերկարությունը մոտ 8,5 մետր է: Վորովայնի խոռոչի մեջ աղիքները սղակներով են դասավորված: Վորովայնի խոռոչի աջ կիսում, կողերի տակ, գտնվում է ամենամեծ և մարդու կյանքի համար խիստ կարևոր գեղձը՝ լյարդը: Ստամոքսի տակ է գտնվում այսպես կոչված յեմբասասմոսային գեղձը:

Կերակուրը բարակ աղիքները մտնելով յենթարկվում է իրենց հենց աղիքների հյուսթի, յենթաստամոքսային գեղձի հյուսթի, այլ և լյարդից յեկող լեղիյի ազդեցության: Այս հյուսթերի ազդեցության տակ կերակրի խյուսը վեր է ածվում սննդաբար հյուսթի:

Այս հյուսթը ծծվում է բարակ աղիքների պատերի միջով արյան մեջ և դրա միջոցով մատակարարվում է որդանիզմի բոլոր բջիջներին:

Զծծված կերակրի մնացորդները բարակ աղիքներից անցնում են հաստերի մեջ և այստեղ արտաթորության մասսա դառնալով ուղիղ աղիքի միջով դուրս են գալիս:

ԼՅՈՐԴ, ՓԱՅՄԱԼ

Վորովայնի խոռոչում, բացի ստամոքսից ու աղիքներից, ինչպես վերևում ասվեց, գտնվում են նաև լյարդը (աջ կողմում կողերի տակ) և փայծաղը (ձախ կողմում կողերի տակ):

Լյարդը մշակում է լեղի, վորն անհրաժեշտ է կերակրի ճարպերը մարսելու համար: Բացի այդ լյարդը անվնաս է դարձնում այն թունավոր նյութերին, վոր գալիս են դեպի նա աղիքներից յեկող արյունատար անոթների արյան հոսանքով:

Փայծաղի մեջ մշակվում են արյան սպիտակ մարմնիկները (լեյկոցիտները): Փայծաղում, բացի այդ, պահվում ու վոչնչացվում են շատ վարակիչ հիվանդությունների միկրոօրգանիզմները:

ԱՐՏԱԹՈՐՄԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

Ինչպես վերևում ասվեց, որդանիզմի բջիջներում, դրանց աշխատանքի հետևանքով, քլասակար նյութեր են առաջանում, վորոնք արյան մեջ են մտնում մազանոթների պատերի միջով: Արյունից այս նյութերը մասամբ հեռանում են թոքերի միջոցով՝ շնչելիս, իսկ գլխավորապես որդանների հատուկ սիստեմի՝ յերիկամների, միզատար խողովակների, միզափամփուշտի և միզանցքի միջոցով: Յերիկամները գտնվում են վորովայնի խոռոչի հետին պատի յերկու կողմերում: Դրանք այն որդաններն են, վորոնց մեջ արյունը մի տեսակ ֆիլտրացիայի յե յենթարկվում և որդանիզմից մեզի ձեղով դատվում են քլասակար նյութերն ու ջրի ավելցուկները: Մեղը յերիկամներից հատուկ խողովակներով, միզաբար խողովակներով կաթիլ առ կաթիլ ծորում է միզափամփուշտի մեջ, վոր զետեղված է կոնքի խոռոչի մեջ: Միզափամփուշտի մկանային պատերի կծկումներով մեղը միզաբար խողովակով դուրս է գնում:

Բջիջների կենսագործության հետևանքով առաջացած, որդանիզմի համար քլասակար, նյութերը արտաթորվում են նաև քլորատիքի հետ մաշկի միջով:

Մ Ա Շ Կ Ը

Մաշկը, վոր ծածկում է մարդու մարմինը դրսից, կազմված է վերին շերտից—վերնամաշկից և ստորին—պակային շերտից: Մաշկի պակային շերտի մեջ են գտնվում մազերի արմատները, հատուկ շոշափողական մարմնիկները, ճարպային գեղձերը, արյունատար մազանոթները, քրտնքային գեղձերի խողովակները:

Մաշկի պակային շերտի տակ գտնվում է ճարպային շերտը, վոր շրջապատում է համարյա ամբողջ մարմինը:

Մաշկը հակայական նշանակություն ունի որդանիզմի համար:

1. Մաշկը պաշտպանում է մարմինը փոշուց, կեղտից ու

միկրոօրններից: Քոլորովին փողը ու չֆնասված մաշկի միջով միկրոօրնները չեն կարող թափանցել որգանիզմի մեջ:

2. Մաշկը պաշտպանում է մարմինը չափից ավել սառնեցումից տարվա ցուրտ յեղանակին և չափից ավելի ջերմացումից՝ տարվա տաք յեղանակներին:

3. Մաշկը հանդիսանում է զգայություն որգան, նա հատկապես շոշափման որգան է:

4. Մաշկի միջով վորպես քրտինք մարմնից շարունակ արտաթորվում են վնասակար նյութերը և ջրի ավելցուկները:

Մաշկի ամբողջականությունը խախտումը հաճախ այն հետեվանքն է ունենում, վոր վերքի, քերծվածքի միջով զանազան միկրոօրններ են թափանցում և տարբեր հիվանդություններ (թարախապալար, կարմիր քամի, կարկամախտ, սիֆիլիս, արյան բնդհանուր վարակում) են առաջացնում: Մաշկի մեծ այրվածքը մարմնի մակերեսի $\frac{1}{3}$ -ից ավելի) կարող է ամբողջ որգանիզմի համար ծանր կացություն և անզամ մահ առաջ բերել:


ՆՅԱՐԴԱՅԻՆ ՄԻՍԵՄ

Մարդկային որգանիզմի որգանների և բջիջների գործունեությունը կարգավորվում է վորոշ ուղղություն և ստանում նյարդային սիստեմի միջոցով: Դա բաժանվում է կենսոսնական նյարդային սիստեմի՝ գանգուղեղ և վողնուղեղ և պերիֆերիկ նյարդային սիստեմի՝ նյարդեր ու դրանց վերջավորությունները:

Դանգուղեղը կազմված է 4 ուղեղային կիսագնդերից, վոր գանգի խոռոչի մեծ մասն են բռնում, փոքր ուղեղից և յերկայնաձիգ ուղեղից: Յերկայնաձիգ ուղեղի շարունակությունն է մեջքի ուղեղը: Ուղեղի կիսագնդերը շատ ակոսներ ու զալարներ ունեն, վորոնք մի շարք բաժանմունքներ ու տեղամասեր են առաջ բերում: Նրանցից յուրաքանչյուրը կարգավորում է վորոշ որգանների գործունեությունը: Ուղեղի տեղամասերից վոմանք, կենտրոնախույս շարժիչ նյարդերի միջոցով, կառավարում են դեմքի, ձեռքերի, վորտքերի և այլն շարժումները: Մյուս մասերը, զգացողական նյարդերի միջոցով, կառավարում են զգայական որգանները՝ տեսողության, լսողության, հոտառության զգայարանները: Ուղեղի ճակատային մասում գտնվում է մարդու մտավոր գործունեությունը վարող մասը: Ենչառությունն ու սրտի գործունեությունը կարգավորող կենտրոնը գտնվում է յերկայնաձիգ

ուղեղի մեջ (նկ. 10): Դրա համար ել յերկայնաձիգ ուղեղի վնասումը վայրկենական մահ է պատճառում:

Վողնուղեղը սպիտակ քուղի (շնուր) տեսք ունի ու զետեղված է վողնուղեղային խողովակի մեջ: Նրա ամբողջ յերկարությունամբ զանազան տեղերից դեպի մարդու տարբեր որգանները գլխավորապես դեպի շարժողություն որգանները, մեծ թվով նյարդեր են գնում: Վողնուղեղում այնպիսի տեղամասեր կամ կենտրոններ են գտնվում, վորոնք մաշկից յեկող գրգիռներն են ընդունում և ապա դա հաղորդում են գլխի ուղեղին կամ ել հենց



Նկ. 10 ԳԱՆԳՈՒՂԵՂ ՑԵՎ ՎՈՂՆՈՒՂԵՂ

1. Մեծուղեղի կիսագնդեր, 2. մաշկ, 3. ճակատուղի, 4. մազուկ, 5. քիտուկ, 6. հոտառության նյարդ, 7. թևաձև վոսկոր, 8. քիտ խոռոչ, 9. վերին ծնոտ, 10. քիմքի վոսկոր, 11. փափուկ քիմք լեզվակի հետ, 12. ստորին ծնոտ, 13. լեզու, 14. մակկոկորդային կրճիկ, 15-16. կոկորդ, 17. վողնի մարմինը, 18. միջվողնային կրճիկ, 19. շնչափող, 20. կերակրափող, 21. վողնի քիստավոր հավելված, 22. մաշկ, 23. վողնուղեղ, 24. յերկայնաձիգ ուղեղ, 25. ծոծրակի վոսկոր, 26. փոքր ուղեղ, 27. ուղեղը փոքր ուղեղից բաժանող հավելված, 28. գազաթուղի, 29. կոշտուկավոր մարմին:

իր շարժիչ կենտրոններին: Որինակ, յեթե գնդասեղով ծակենք ապա գրգիռը մաշկից կհաղորդվի վոդնուղեղի համապատասխան բնդունող կենտրոնին: Այսպեղից այս գրգիռը հաղորդվում է ուղեղի շարժիչ կենտրոնին և դրանից դուրս յեկող շարժիչ նյարդերին: Դրանից հետո մկանի կծկում է տեղի ունենում գնդասեղով ծակված տեղում (որինակ ձեռքը կամ վոտքը) հետ և քաշվում:


Նյարդային սխտեմը մարդկային մարմնի կարևորագույն որգանն է:

Առանց նյարդային սխտեմի մարդը չեր կարող ապրել:

ՏԵՍՈՂՈՒՅԱՆ ՈՐԳԱՆ

Մարդու աչքերը գտնվում են հատուկ խոռոչների՝ ակնախոռոչի մեջ, վորոնք կազմվում են ճակատասկրով, քթոսկրերով, վերին ծնոտով: Առաջից աչքը պաշտպանված է յերկու կոպերով (վերին և ստորին) ու արտևանունքներով: Կոպերի և աչքի խնձորի միջև յեղած տարածութունը պատած է լորձաթաղանթով: Այս թաղանթը աչի շարակցական քաղանթ (կոնյունկտիվա) յե կոչվում: Այս թաղանթի բորբոքումը, վորի հետևանքով դա կարմբում, ուռչում կամ ել թարախակալում է, կոնյունկտիվիտ և կոչվում:

Աչքի խնձորը դրսից ծածկված է սպիտակուցային (կաթնագույն) թաղանթով, վորը աչքի խնձորի առաջին մասում թափանցիկ է: Աչքի խնձորի սպիտակուցի այս թափանցիկ մասը յեղջերաքաղանթ է կոչվում. դա լույսի ճառագայթները իր միջով անց է կացնում աչքի ներսը: Յեղջերաթաղանթի հետևում գտնվում է ծիածանաքաւերը, վորի գույնով է վորոշվում աչքի գույնը: Ծիածանաթաղանթն իր կենտրոնում ունի մի անցք՝ բիբլ, վորը լույսի ճառագայթներն ուժեղանալիս նեղանում, իսկ թուլանալիս լայնանում է:




Նկ. 11. ԱՁՔ

1. Վոսոնյակ, 2. ապակեման մարմին, 3. տեսողութայն նյարդ, 4. յեղջերաթաղանթ, 5. սպիտակուցաթաղանթ, 6. անոթաթաղանթ, 7. ցանցաթաղանթ:

Աչքի ներսում, բիրի հետևում գտնվում է վապնյակը, վոր մի յերկուուցիկ մարմին է ու բեկում է աչքի մեջ ընկած լույսի ճառագայթները: Վոսոնյակի հետևում գտնվող թափանցիկ մասան ապակեման մարմին է կոչվում: Աչքի ամենաներսի թաղանթը ցանցաթաղանթ է կոչվում. Այս թաղանթը հատուկ տեսողական նյարդի միջոցով աչքը կապում է գանգուղեղի հետ: Աչքի խնձորի սպիտակուցային թաղանթի և ցանցաթաղանթի միջև գտնվում է անոթաքաղանթը, վորի մեջ ճյուղավորված են աչքին արյուն մատակարարող մազանոթները:

ԼՍՈՂՈՒՅԱՆ ՈՐԳԱՆ

Լսողութայն որգանի արտաքին մասը (արտաքին ականջը) կազմված է ականջաթեցակից և լսափողից: Արտաքին ականջը



Նկ. 12. Ա Կ Ա Ն Ջ

- I. Արտաքին ականջ, II. միջին ականջ, III. ներքին ականջ, 1. ականջաթեցի, 2. արտաքին լսափող, 3. թմբկաթաղանթ, 4. մրձիկ, 5. ոտլ, 6. ասպանդակ, 7. Յեվտախյան խողովակ, 8. կիսաշրջանաձև խողովակներ, 9. լսողութայն ներկ, 10. իսունջ:

հերմետիկ կերպով բաժանված է միջին ականջից հատուկ թաղանթով, վոր թմբկաթաղանթ է կոչվում: Միջին և ներքին ականջը զետեղված են քունքի վոսկորի մեջ: Միջին ականջում կա

յերեք վոսկոր՝ մրճիկ, սալ և ասպանդակ: Այս վոսկրիկներով ուղի ալիքների տատանումները հաղորդվում են ներքին ականջին: Միջին ականջը հաղորդակցութուն ունի քթաբլմպանի հետ Յեվստախյան խողովակի միջոցով: Ներքին ականջը հատուկ լսողության նյարդի միջոցով լսողության որդանը կապում է գանգուղեղի հետ (նկ. 12):

II

ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մարմնի վնասվածքը, յերբ նա ուղեկցվում է մաշկային կամ շորձաթաղանթների ամբողջության խանգարմամբ և կամ շատ թե քիչ զգալի չափի արյունհոսությամբ կոչվում է վերք:

Վերքերը լինում են գանազան տեսակ.—կտրված, ծակված, պատռված, ջարդված և հրազենի:

Կտրված վերքերն են այն վերքերը, վորոնք հասցված են կտրող սուր գործիքով (դանակ, անձիլի, թուր, հարթ կողերով ապակի): Կտրված վերքերը ունենում են հարթ, հավասար կողեր, սովորաբար տալիս են առատ արյունհոսություն, հաճախ ընթանում են առանց բարդությունների և առողջանում են, չթողնելով մարմնի վրա վորակե նկատելի սպի:

Ծակված վերքեր հասցվում են՝ ըզով, ասեղով, սփինով և այլն: Դրանք ունենում են, սովորաբար մուտքի նեղ, վոչ մեծ բացվածք, բայց ներքին խոր անցքեր: Ծակված վերքերի դեպքերում կարող են վնասվել մարմնի ներքին որգանները: Այդպիսի վերքերում հաճախ ընկնում են ոտար մարմիններ (ասեղի ծայր, շորի կտորտանք, հող և այլն), վորոնք և ուժեղացնում են վերքի վարակման վտանգը:

Պատռված վերքեր հասցվում են՝ սղոցով, վայրի և կատաղած անասունների ատամներով, ուղմբերի կտորտանքով, պայթուցիկ գնդակներով: Այդպիսի վերքերը ունենում են անհավասար, խածոտված կողեր և արյունածորումը լինում է խիստ թույլ:

Պատռված վերքերը հաճախ լինում են վարակված, տալիս են թարախակալում և համեմատած այլ վերքերի հետ առողջանում են ուշ:

Ջարդվածի վերքեր հասցվում են՝ քարով, փայտով, հրա-

ցանի կոթով, ընկնելու դեպքում: Նրանք ունենում են թեթև ուռուտած կողեր: Ջարդված վերքերը յերբեմն հասնում են խոշոր չափերի, ունենում են անհարթ տրորված հատակ, վորտեղ ցցված են լինում հյուսվածքների կտորներ (կաշվի—մաշկի, մկանների): Ջարդված վերքերը, շատ անգամ ուղեկցվում են վոսկորների ջարդվածքով: Այս վերքերը հեշտությամբ աղտոտվում են և իրենց առողջացման համար պահանջում խիստ յերկարատև ժամանակ:

Հրազենի վեբերը նմանություն են ունենում թե ծակվածի և թե պատվածի—կախված լինելով նրանից թե գնդակով և հասցված վերքը, թե ուղմրի կտորներով: Մոտ տարածությունից հասցված հրազենի վերքը ուղեկցվում է վերքի շրջապատի մաշկի այրուցքով:

Վիրավորելու դեպքում, յեթե գնդակը կամ շրապնելը կանգ է առնում մարմնի մեջ, ապա այդպիսի վիրավորումը կոչվում է կուլք: Իսկ յեթե վիրավորելիս գնդակը կամ շրապնելը անցնում է մարմնի միջով մյուս կողմը, ապա այդպիսի վիրավորումը կոչվում է միջանցիկ:

Միջանցիկ վիրավորումը ունի յերկու վերքային բացվածք մուսթի (գնդակի մտնելու տեղում) և յեխի (գնդակի մարմնից դուրս գալու տեղում):

Մուտքի բացվածքն ավելի փոքր է լինում քան յեթինը:

ՎԻՐԱՎՈՐՎԱԾԻՆ ՍՊԱՌԵԱՅՈՂ ՎՏԱԵԳԸ

Ինչ բանից էլ առաջացած լինի վերքը, հետևյալ յերկու պատճառներով նա մարդու կյանքի համար կարող է վտանգավոր դառնալ:

Նախ և առաջ, ամեն մի վերք ուղեկցվում է արյունհոսությամբ: Ջարկերակից արյուն հոսելու, այսպես կոչված դարկերակային արյունհոսության դեպքում, կարող է տեղի ունենալ արյան խոշոր կորուստ, վորը վիրավորվածի կյանքի համար լուրջ սպառնալիք է:

Յերկրորդ, ամեն մի վերք իրենից ներկայացնում է մի բաց դուռ, մարդու օրգանիզմը վարակիչ միկրոբներ ներս թափանցելու համար:

Վերքի մեջ կարող են ընկնել այնպիսի վտանգավոր հիվանդությունների միկրոբներ, վորպիսիք են՝ կարկամայս (СТОЛБ-НЯК), կառմիբ քամի (рожа), կարող է տեղի ունենալ արյան բեղ-հանուր վարակում:

Վերը ասվածից պարզ է, վոր վիրավորվածին առաջին ող-նություն հասցնող անձանց առաջ դրված է յերկու խնդիր.

- 1) վորքան հնարավոր է, արագորեն դադարեցնել արյուն-հոսությունը և
- 2) արգելել վերքի աղտոտումը:

ՋԱՐԿԵՐԱԿԱՅԻՆ, ՅԵՐԱԿԱՅԻՆ — ՎԵՆՈՋ ՅԵՎ ՍԱՉԱՆՈՓԱՅԻՆ (КАПИЛЛЯРНОЕ) ԱՐՅՈՒՆՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Կախված նրանից, թե վոր արյունատար անոթն է փաս-ված, արտաքին արյունհոսությունը վերքից լինում է՝ դարկերակային, յերակային (ВЕНОЗНОЕ) և մազանոթային (КАПИЛЛЯРНОЕ): Ջարկերակային արյունհոսության դեպքում, (յերբ փասված է դարկերակը) վառ-կարմիր գույնի արյունը դուրս է ցայտում հրոցներով, Շշատվան է խփում):

Ջարկերակային արյունհոսությունը (նկ. 13) առավելա-



Նկ. 13. ՋԱՐԿԵՐԱԿԱՅԻՆ ԱՐՅՈՒՆՆՈՍՈՒԹՅՈՒՆ



Նկ. 14. ՅԵՐԱԿԱՅԻՆ ԱՐՅՈՒՆ-ՆՈՍՈՒԹՅՈՒՆ

դույն զգալի չափի և վտանգավոր արյունհոսություն է, վորը կարող է արագորեն մահվան հասցնել:

Մեծ քանակությամբ արյուն կորցնելու դեպքում—խիստ սակավարյունության նշանները հանդիսանում են:

- ա) Մարմնի մաշկի խիստ գունաթափություն, առանձնապես ականջների, ձեռքերի, վոտքերի:
- բ) Ականջների, ձեռքերի և վոտքերի սառում, արագացած, թույլ (հազիվ նշմարելի) զարկ, արագացած շնչառություն:
- գ) Գիտակցության կորցնելը:

Յերակային արյունհոսությունը (յերակների փասվելու դեպքում) տալիս է մուգ-կարմիր գույնի արյան համաչափ արտահոսում: Արյան արտահոսման արագությունը յերակային արյուն-

հոսության դեպքում շատ ավելի պակաս է, քան զարկերակային արյունհոսության (նկ. 14):

Մտադանքային արյունհոսության դեպքում (յերբ ֆուսոված են մազանոթները) արյունը դուրս է ցայտում կաթիլներով և ծորում դանդաղ: Սովորաբար մազանոթային արյունհոսությունը դադարում է շուտ և ինքնորեն — արյան մակարդման — թանձրացման և վերքի շուրջը նրա չորանալու հետևանքով:

ԻՆՁՄԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԶԱՐԿԵՐԱԿԱՅԻՆ ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Զարկերակային արյունհոսությունը դադարեցնելու համար կիրառվում են հետևյալ միջոցները. — զարկերակի սեղմումը, սեղման դնելը, վուրբան գնելը:

Զարկերակի սեղմումը կատարվում է վերքից վեր (սրտին մոտ) բավականաչափ ուժով և պետք է շարունակվի մինչև այն ժամանակ, վոր հնարավոր կլինի սեղմումը փոխարինել սեղման գնելով:

Մի քանի որինակներ, թե ինչպես պետք է սեղմել զարկերակները: 1) Ուսային զարկերակի սեղմումը: Ձեռքի վրա յեղած զարկերակային արյունհոսության դեպքում պետք է սեղմել ուսային զարկերակը, վորը անցնում է կոնատակի թոռոչի և արմունկի կեովածքի միջև: Զարկերակը չորս մատով պետք է սեղմել զեպի ուսոսկրի արտաքին յեղրի ուսային (յերկգլխյա) մկանը (տես. նկ. 7):

2) Ազդրային զարկերակի սեղմում: Վուրքի զարկերակային արյունհոսությունը դադարեցնելու համար բավական է սեղմել ազդրային զարկերակը աճուկային շրջանում: Վիրավորվածին պակեցնում են հորիզոնական դրությամբ: Վիրավորված վուրքի ազդրը գրկվում է յերկու ձեռքով և ապա մեծ մատերով ազդրային զարկերակը աճուկում սեղմվում է զեպի համապատասխան վասկրը:

3. Քունքի զարկերակի սեղմումը կատարվում է քունքի մոտ, վերքից ցած (նկ. 15):

4. Քներակի սեղմում: Քներակը սեղմվում է մեծ մատով զեպի պարանոցային վողնաշարը (նկ. 16):

ՍԵՂՄԱՆԻ ՎՐԱԴՆԵԼԸ

Բուժական պրակտիկայում հաճախ գործադրվող սեղմանը լինում է գործվածքային և ուտինից:

Գործվածքային սեղմանը բաղկացած է. 1) 100 սմ. յերկարություն և 32 մմ. լայնություն ունեցող վուրբած յերիզակից, կաղմված ողակից, փայտից (վուրբելու համար) և յեր-




Նկ. 15. ՔՈՒՆՔԱՅԻՆ ԶԱՐԿԵՐԱԿԻ ՍԵՂՄՈՒՄԸ



Նկ. 16. ՔՆԵՐԱԿԱՅԻՆ ԶԱՐԿԵՐԱԿԻ ՍԵՂՄՈՒՄԸ

կու փոքր ողակներից փայտի ծայրը ամրացնելու համար (3, 4, 5). 2) ամրահյուս ողակից, վորը միացնում է յերիզակը վուրբվածքի հետ (6), և 3) ճարմանդներ հատուկ աղեղնակով (ДУЖКА) յերիզակը բռնելու համար (1, 2) — (նկ. 17):



Նկ. 17. ԳՈՐԾՎԱԾՔԱՅԻՆ ՍԵՂՄԱՆԻ ՍԽԵՄԱՆ

Գործվածքային սեղմանի դնելու կարգը: 1) Սեղմանը վերցնում են աղեղնակից (ДУЖКА) բռնած, յերիզակը անցենկացնում ծայրանդամի (վերջավորության) շուրջը, յերիզակի ծայրը մտցնում են ողակի մեջ, ծայրանդամի շուրջը յերիզակը անցենկացնում յերկրորդ անգամ և հազցնում ճարմանդի (ПРЯЖКА)

մեջ: Անհրաժեշտ է հոգալ, վոր յերիզակը նորից շրջաբերելիս կողերը ուղիղ ընկնեն իրար վրա և վորպեսզի վորտանը գա փերեից, ծայրանդամի (վերջավորության) առաջից:

2. Յերիզակից բռնած, ճարմանդի հակառակ կողմով ուժեղ շարժումով սեղմանը թիստ ձգում են վեր-վար և ապա կոճկում են ճարմանդը յերիզակի հակադարձ, դեպի վեր շարժմամբ:

3. Վորտանի ողակը ձգելով դեպի վեր և պտտելով փայտիկը մտցնում են նրա ծայրը փոքրիկ ողակի մեջ: Յեթե վորտանի ողակը թեթև կերպով է ձգվում, պետք է այն ձիգ տալ և ավելի ուժով քաշել ճարմանդը, միաժամանակ իջեցնելով փայտիկը. դրանից հետո փայտիկը նորից քաշում են դեպի վեր և նորից պտտում են: Նրա համար, վորպեսզի հնարավորություն ունենան ոգտվելու սեղմանից ինքնագնության կարգով, պետք է պահել սեղմանը վորտած յերկու դարձի: Վիրավորվածը առողջ ձեռքով սեղմանը հազցնում է իր միսսոված ձեռքին (վորպես ողակ) և այնուհետև վարվում է այնպես ինչպես նշված է վերը՝ 2 և 3 կետերում: Ազդրից արյունհոսություն լինելու դեպքում, վիրավորվածը բաց է անում իր յերկու ձեռքերով սեղմանը և դնում ըստ վերը նշված կանոնի 1, 2 և 3-րդ կետերի:

Ռեօինե սեղմաեր իրենից ներկայացնում է առաձգական ռետինե խողովակ 1—1½ մետր յերկարությամբ, վորը մի ծայրին շղթա ունի, իսկ մյուս ծայրին մի կեռ (նկ. 18):


Այս սեղմանը դնելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները:

Վիրավորված ծայրանդամին (վերջավորության) — (ձեռքը, վոտքը) անհրաժեշտ է տալ մի փոքր բարձրացված դրություն (վեր բարձրացնել):

Սեղմանը դրվում է վերքից բարձր (սրտին մոտիկ):

Ձեռքի (վոտքի) այն մասը, վորի վրա դրվում է սեղման անհրաժեշտ է նախապես փաթաթել թանդիֆով կամ բամբակով: Այս արվում է նրա համար, վորպեսզի սեղմանը փաթաթելիս և ամրացնելիս մաշկը չձմրվի նրա տակ:

Սեղմանը դնելուց առաջ, անհրաժեշտ է նրան բացել և ձգել, վորպեսզի հնարավոր լինի ավելի ամուր փաթաթել և վորտրել:



Նկ. 18. ՌԵՏԻՆԵ ՍԵՂՄԱՆ

Իրված սեղմանը ամուր վորտրում են և ամրացնում կեռի և շղթայի ոգնությամբ:

Սեղմանը ծայրանդամի (վերջավորության) վրա կարելի է թողնել յերկու ժամից վոչ ավելի, վորովհետև արյան ներհոսման ավելի յերկարատև կասեցումը դեպի ծայրանդամի այն մասը, վորը գտնվում է սեղմանից ցած, կարող է առաջացնել կաթված (պարալիչ) կամ մարմնի այդ մասի մեռուկ (նկ. 19):

Ձեռքի զարկերակային արյունհոսության դեպքում սեղմանը դրվում է միայն ու-



Նկ. 19. ԱՋԴԻԻ ՎՐԱ ՍԵՂՄԱՆ ԴՆԵԼԸ.

Նկ. 20. ԿՈՆՍՍԱԿԻ ԽՈՌՈՊՈՒՍ ՍԵՂՄԱՆ ԴՆԵԼԸ

սին (նախարաղկին չի դրվում), վոտքի զարկերակային արյունհոսության դեպքում, սեղմանը դրվում է միայն ազդրին (սրունքին չի դրվում):

Ձեռքի (ուսային հողի մոտերքում գտնված վերքի) զարկերակային արյունհոսության դեպքում, սեղմանը դրվում է ութնոցի ձևով կոնստակի խոռոչում (նկ. 20):

Վոտքի (կոնքազդրային հողի մոտերքում գտնված) զարկերակային արյունհոսության դեպքում, սեղմանը դրվում է աճուկային շրջանում:

Մեմբրապես, սեղման դնելուց հետո անհրաժեշտ է վերքը կապել:

ՍԵՂՄԱՆԸ ԻՆՁՈՎ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՓՈՒԱՐԻՆԵԼ

Ռեաինս սեղմանի փոխարեն կարելի յե ոգտագործել—փոկ, պարան, տարատակալ (ПОДТЯЖКИ), սրբիչ և այլն:

Կարելի յե նաև գործադրել վոլորանը:

Վոլորանը արվում է այս ձևով. վիրավորված ծայրանդամը (վերջավորութունը) կապվում է թաշկինակով վերքից վերև, վոչ շատ ամուր (պարանով, փոկով և այլն):

Թաշկինակը կապվում է հանգույցով, այդ հանգույցի տակ մտցվում է մի կտոր կարճ փայտ (քանոն, հաստ գրչակոթ և այլն), վորի ոգնությամբ թաշկինակը վոլորվում է մինչև անհրաժեշտ ամրութուն (նկ. 21):


ՅԵՐԱԿԱՅԻՆ ՅԵՎ ՄԱՋԱՆՈՒՅՅԻՆ ԱՐՅՈՒՆՆՈՍՈՒՅՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

Յերակային արյունհոսության դեպքում վերքի վրա դնել վիրակապ և ծայրանդամը (վերջավորութունը) կախել դեպի վեր:

Մազանոթային (капиллярное) արյունհոսութունը դադարեցնելու համար բավական է վերքի վրա վիրակապ դնել:

ԱՌԱՋԻՆ ՈՐԳԱՆԵՐԻՑ ԱՐՅՈՒՆՆՈՍՈՒՅՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

Քրի արյունհոսության դեպքում—հիվանդին նստեցնել գլուխը հետ գցած դրությամբ: Բաց անել ոձիքի կապերը, վորոնք կարող են սեղմել պարանոցային արյունատար անոթները: Քթածակի այն մասը, վորտեղից արյուն է հոսում պետք է մտցնել մաքուր չոր բամբակ, վորի ծայրը պետք է կախված լինի դրսից, վորպեսզի հեշտ լինի նրան քթից հանել: Քթի վերի մասի վրա պետք է դնել սառը թրջոց: Քթի զգալի չափով արյունհոսության վտանգավոր դեպքում անհրաժեշտ է սեղմել քնե-



Նկ. 21. ՎՈՒՈՐԱՆԻ ԴՆԵԼԸ ԹԵՎԻ ՎՐԱ:

րակը համապատասխան կողմից և հրավիրել բժիշկ:

Ասանք փաշիոց հետ շարունակվող արյունհոսութունը դադարեցնելու համար, ասամի արմատում (УЗЕЛ) մտցնել մաքուր, չոր բամբակի խծուծ—ասամյոն: Բերանը վորոզել 1% տանինի լուծույթով:

Արյունախուլամի դեպքում—հիվանդին տալ կիսանստած դրություն: Տալ սառն ըմպելիք: Մրտի շրջանին դնել սառույցով ուտինե պարկ կամ սառը թրջոց: Բժիշկ հրավիրել:

Արյունոտ փսխումների դեպքում—բժիշկ հրավիրել: Մինչև բժիշկի գալը պետք է անհանգիստ հիվանդի հանգստութունը և պահել նրան կիսանստած դրության մեջ: Կուլ տալու համար ապա հիվանդին սառույցի փոքրիկ կտորներ: Փորին (սրտագրավի տակ) դնել սառույցով ուտինե պարկ:

Ընդհանուր ցուցում արյունհոսության դեպքում առաջին օգնություն ցույց տվողին: 1. Ձեռնզովել և պահպանել լիակատար հանգստութուն:

2. Արագորեն վորոզել արյունհոսության բնույթը (զարկերակային, յերակային):

3. Ջարկերակային արյունհոսության դեպքում չափս է դանդաղել, պետք է սեղմել փնտոված զարկերակը, ապահովել շտապ կարգով և կանոնավոր դնելու սեղմանը կամ վոլորանը և ձեռք անել միջոցներ տուժածին շուտափույթ կերպով հասցնել բուժարան:

4. Արյունհոսութունների բոլոր դեպքերում պետք է հիշել, վոր վերքի միջոցով կարող են ներս թափանցել վարակիչ հիվանդութունների միկրոբներ, ուտի—անմիջապես պետք է վերքը կապել:

ԱՐՅԱՆ ՓՈՒՆԵՐԱՐԿՈՒՄ

Շատ ծանր հիվանդութունների ժամանակ և առանձնապես խոշոր չափով արյուն կորցնելու դեպքում լավ ոգնում է արյան փոխներարկումը: Համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակ, 1914—1918 թ. թ. արյան փոխներարկումը փրկելից նրանցից շատերի կյանքը, վորոնց մեծ չափով արյուն կորցնելու հետևանքով—մահ էր սպասում:

Այն մարդը, վորը իր արյունը տալիս է հիվանդին փոխներարկելու համար, կոչվում է դոնոր:

Դոնոր կարող է լինել միմիայն միանգամայն առողջ մարդ:

Առողջ մարդու արյան քանակը կազմում է նրա մարմնի քաշի $1/13$: Յեթե մարդու քաշը հավասար է 65 կգ., ապա ուրեմն նրա արյան քաշը պետք է լինի մոտ 5 լիտր: Առողջ մարդը առանց վախենալու իր առողջության վրա ազդելուց, կարող է տալ 400—500 գրամ արյուն:

Արյունն տալուց հետո դոնորների մեջ հայտնվում է լավ ախորժակ, ուտել են ցանկանում և շնորհիվ ուժեղացրած սնունդի, արյան կորուստը արագորեն լրացվում է հավելուրդով:

Բժշկականություն պրակտիկայում արդեն հայտնի յեն դոնորներ, վորոնք տվել իրենց արյունը մինչև 35 անգամ: Դոնորներն ընտրվում—չօղվում են 20—40 տարեկան հասակ ունեցող անձանցից և յենթարկվում են մանրակրկիտ բժշկական քննություն: Արյունապահաններին, սիֆիլիսով, մալարիայով, պալարախտով (туберкулез) հիվանդներին չի թույլատրվում փոխներարկման համար արյուն տալ: Չեն կարող լինել դոնորներ նաև հարբեցողներն ու թույլ առողջության տեր մարդիկ:

Ըստ իրենց արյան կազմութամբ մարդիկ բաժանվում են չորս խմբերի: Այն անձանց, որինակի համար, վորոնց արյունը վերադրված է առաջին խմբի, փոխներարկել կարելի յե միայն հենց առաջին խմբին պատկանող դոնորի արյուն:

Որդանիդմին անհամապատասխան արյան փոխներարկում կատարելուց կարող է տեղի ունենալ մահ: Ուստի պարտադիր է նախ քան փոխներարկում կատարելը՝ նախապես վորոշել ինչպես դոնորի արյան—վոր խմբին պատկանելը, նույնպես և նրա, վորին փոխներարկվելու յե այդ արյունը:

ՎԵՐՔԵՐԻ ՎԱՐԱԿՄԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Վերքը մանրենների ներսթափանցումից զերծ պահելու հիմնական միջոցը հանդիսանում է վերքի վրա հականեխված փաթաթանի դնելը, այսինքն, վիրակապական այն նյութեղենի, վորի մեջ, համապատասխան յեղանակով վորչնչացված են բոլոր մանրենները: Սովորաբար վիրակապական նյութեղենը հականեխվում է, այսինքն ազատվում է մանրեններից—ավտոկլավայում: Ավտոկլավայում մանրենները վորչնչացվում են տաք գոլորշու ազդեցության տակ (գոլորշու ջերմությունը 100⁰ բարձր):

Մանրեաջնջիչ հանդիսանում է նաև առաջին ոգնության վիրակապական անհատական ծրարի՝ վիրակապական նյութեղենը:

Դեղատներում, սանիտարիայի և հիգիենայի խանութներում վաճառվում են հականեխված յերիզակապեր (бинты), հականեխված բամբակի և թանգիֆի ծրար:

Բայց և այնպես կարող է այնպիսի դրություն ստեղծվել, ինչպես խաղաղ, նույնպես և պատերազմի ժամանակ, յերբ վերքի վրա փաթաթան դնելու համար ձեռքի տակ չի գտնվիլ հականեխված վիրակապական նյութեղեն: Այդպիսի դեպքերում ստիպված են լինում ոգտվելու կամ չհականեխված վիրակապական նյութեղենից (թանգիֆ, բամբակ, յերիզակապ), կամ յերբեմն ոգտվելու ձեռքն ընկած առաջին վորեե նյութեղենից (թաշկինակ, յերեսսրբիչ, կտավի կտոր, շապիկ և այլն): Յեթե հանգամանքները թույլ են տալիս, այդպիսի վիրակապական նյութեղենը պետք է յեռացրած ջրով մաքրել կամ հարթուկել տաք հարթուկով: Յեռացնել կամ հարթուկել հնարավոր չլինելու դեպքում, անհրաժեշտ է այդ նյութեղենը, նախքան վերքի վրա դնելը թրջել վորեե ախտահանող լուծույթի մեջ—3% թթվի լուծույթի, սպիրտի, ջրածնի վերաթթվածնատի (перекиси водорода):

Բաց վերքի մեջ վարակիչ մանրեններ կարող են ընկնել վոր միայն շորերի կտորներից, հողից, այլ նաև կեղտոտ ձեռքերի միջոցով ինչպես հենց իր, վիրավորվածի, նույնպես և նրան առաջին ոգնություն ցույց տվողի:

Ուստի, վերքի վրա մաքուր փաթաթան դնելու հետ միապին, պետք է հիշել հետևյալի մասին:

- 1) Վերքին ձեռքերը դիպցնել չի կարելի:
- 2) Չի կարելի փորձ անել հանելու վերքի մեջ ընկած վորեե կտորտանք:
- 3) Վերքը ջրով չի կարելի լվանալ:
- 4) Չի կարելի վերքը սրբել վիրակապական ծրարի շապկով:
- 5) Չի կարելի վերքի վրա դնել թուղթ, տերե և այլն:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒՅՅԱՆ ՎԻՐԱԿԱՊԱԿԱՆ ԾՐԱՐ

(ԱՆՇԱՏԱԿԱՆ ՎԻՐԱԿԱՊԱԿԱՆ ԾՐԱՐ)

Պատահում են դեպքեր, յերբ վիրավորն ինքն է հարկադրված լինում կապել իր վերքը:

Այդ կարող է պատահել դազգյահի մոտ, դաշտային գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ, յերթում, յերկաթու-

զում, ինքնաթիռի ավարիայի ժամանակ: Ամենից հաճախ այդ բանը պատահում է պատերազմում:

Վիրավորվելու դեպքում, իրեն (և ընկերոջը) առաջին ոգնությունը ցույց տալու համար ծառայում է առաջին ոգնություն վիրակապական ծրարը (նկ. 22):

Պատերազմում յուրաքանչյուր զինվորականի (զինծառայողի) արվում է առաջին ոգնություն վիրակապական ծրար:



Նկ. 22. ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՎԻՐԱԿԱՊԱԿԱՆ ԾՐԱՐԻ ԲԱՑՈՒՄԸ:

Հանձնարարվում է աշխատանքի ժամանակ իրենց մտա առաջին ոգնություն վիրակապական ծրար ունենալ՝ արակտորիտներին, շոֆերներին, շոգեքարշի մեքենավարներին և այլ յերկաթուղայիններին, տրամվայի վազոնավարներին (վատմաններին), տրամվայի կոնդուկտորներին, աստրիտներին և այլն:

ՎԻՐԱԿԱՊԱԿԱՆ ԾՐԱՐԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին ոգնություն վիրակապական ծրարում կա՝ յերիզ (ԵԻՆՏ), 2 հատ բամբակաթանդիֆային կոմպրեսս (թանդիֆի կտորներ, վորոնց մեջ դրված է բամբակ) և անզլիական քորոց: Կոմպրեսսներից մինը ամրացված է յերիզակապի (ԵԻՆՏ) ծայրին, մյուս կոմպրեսսն ազատ շարժվում է բինտի յերկայնությունը:

Վիրակապական ծրար պատրաստելու համար բինտն ու կոմպրեսսը հակառակման են յենթարկում և բացի այդ, լաւամեցնում են սուլեմայի վարակազերծիչ լուծույթով:

Նրա համար, վորպեսզի վիրակապական ծրարը, ըստ հնարավորություն ավելի յերկար մնա վարակազերծված և մաքուր, նրան փաթթոցում են յերեք պատյանի մեջ:

Բինտն ու կոմպրեսսները փաթաթում են խիտ թղթով: Այնուհետև նրանք դրվում են ուտտինաժ շապկի մեջ, վորը ամրացվում է փակցվում է վերեից: Ռետինաժ շապկի վրայից

հազցնում են բարակ կտորից մեկ ուրիշ շապկի, վորը կարում են թելով:

Բաղաքացիական ախպի վիրակապական ծրարը այդպես բարդ փաթթոցում չունի, այլ փաթաթած է միայն խիտ թղթի մեջ:

ԻՆՉՊԵՍ ՈԳՏՎԵԼ ՎԻՐԱԿԱՊԱԿԱՆ ԾՐԱՐԻՑ

Առաջին ոգնություն վիրակապական ծրարը բացվում է հետևյալ ձևով:

Ծրարը վերցնում են ձախ ձեռքը, աջ ձեռքով դուրս են քաշում այն թելը, վորով կարած է կտորից պատրաստած շապկի վերեի յեզը: Այդ շապկից հանում են, ապա պատում են ուտտինաժ շապկի վերեի յեզը: Ռետինաժ շապկից նույնպես հանում են: Վերջապես, բացում են թղթե փաթաթանը և յերկու ձեռների ցուցամատերով ու բութ մատերով բռնում են կոմպրեսսի այն տարածությունը, վորը կարած է կարմիր թելով: Վոչ մի դեպքում չի կարելի դիպչել կոմպրեսսի այն մակերեսին, վորը դրվում է վերքի վրա:

Յեթե վերքը միջանցիկ է (արտաթուխք — НАВЫЛЕТ), ապա վերքի մեկ (մուտքի) բացվածքի վրա դնում են մեկ կոմպրեսս (անշարժ), իսկ յերկրորդ բացվածքին (յելքի) դնում են մյուս կոմպրեսսը (շարժական) (նկ. 23):



Շարժուն կոմպրեսս. Անշարժ կոմպրեսս


Նկ. 23. ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՑՎԱՍԾ ԾՐԱՐ:

Յեթե վերքը կուր է (մեկ բացվածք ունի), ապա նրա վրա յե դրվում յերկու կոմպրեսս ել միանգամից: Կոմպրեսսները բինտով կապում են վերքի վրա: Բինտի ազատ ծայրն ամրացնում անզլիական քորոցով (նկ. 24):

Վիրակապը վերքի վրա դրվում է նախ և առաջ նրա համար, վորպեսզի պահպանվի վերքը վարակումից, և, յերկրորդ՝ նրա համար, վորպեսզի արյունն ու թարախը արտածվի վերքից:

Վերքերը փաթաթելու համար, դործ ե անվում խոնավությունն եր մեջ ներծծելու հատկություն ունեցող վիրակապահան նյութեղեն:


Այդպիսի նյութեղեն հանդիսանում են թանդիֆը և խոնաված (гигроскопическая) բամբակը:



Նկ. 24. ԻՐ ԼՇԱԿԱՅԵՎԻՆ ՓԱԹԱՅԱՆ ԴՆԵԼԸ:

Նախքան վերքի կապելը—անհրաժեշտ ե վերքի շուրջը մաշկին քսել յողային թուրմ (настойка): Այնուհետև վերքի վրա դրվում ե թանդիֆ, դրա վրա մի շերտ խոնավածուծ բամբակ, և վերջապես այս վիրակապական նյութեղենը յերիզակապով (բինտով) բինտավորվում ե՝ (նկ. 25) բինտով կապվում ե:

Բինտով կապելիս՝ բինտը բռնում են աջ ձեռքում և հետ են տալիս—պտտում ձախից—աջ: Բինտակապելը սկսում են վերքից ցած: Նախ և առաջ կատարում են 2—3 հորիզոնական (ըջանցիկ) բինտի փաթաթում—բինտը տեղում ամրացնելու համար (նկ. 26):



Նկ. 25. ՄԵԿ ԱՋՔԻ ՎԻՐԱԿԱՊ:


Բինտը պետք ե սերտորեն կպչի մարմնին (նկ. 27): Բայց և այնպես չի կարելի չափազանց պինդ սեղմել, վորովհետև չափազանց պինդ կատարված վիրակապը խանգարում ե արյան ազատ շրջանառությանը:

Վիրավորված ձեռքի կամ վրաքի (նախարադէի կամ սրբունքի վրա) վիրակապման դեպքում, փաթաթանը մարմնին լավ հպվելու համար գործադրվում ե բինտը ծալելու ձևը (նկ. 28):

Նկար № 29-ում ցույց ե տրված հասկանման փաթաթան:




Նկ. 26. ՅԵՐԿՈՒ ԱՋՔԻ ՎԻՐԱԿԱՊ:




Նկ. 27. ՎԻՐԱԿԱՊԵՐ՝ 1. ՃՆԿԻ հողի, 2. Մատի:



Փորը կամ կուրծքը վիրավորված լինելու դեպքում բինտի փոխարեն, փաթաթանը ամրացնելու համար գործ են անում գլխաշորեր:



Նկ. 28. ՍՐՈՒՆՔԻ ՎԻՐԱԿԱՊՈՒՄԸ ՏԱԼՔԵՐՈՎ:



Նկ. 29. ՈՒՍԱՅԻՆ ՀՈԴԻ ՀԱՍԿԱՆՄԱՆ ՓԱԹԱՅԱՆ:

ԳԼԻԱՇՈՐ (КАСЫНКА) ԳՈՐԾԱԳՐԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿԸ

Ճակատի կամ գագաթի վիրավորման դեպքում գլխաշորը իր հիմնական մասով դրվում ե այնպես, վոր նրա վերի մասը կաթընկնի ծոծրակին: Գլխաշորի ծայրերը կապվում-հանգուցվում են իր վերի մասում, այդ վերնածայրը հետո ծալվում ե իր մեջ առնելով հանգույցը և ամրացվում ե անգլիական քորոցի միջոցով: Վերքը ծոծրակի վրա լինելու դեպքում—գլխաշորը (КОСЫНКА)

զբվում և հակառակ կողմով, այսինքն այնպես, վոր նրա վերնածայրը կախ ընկնի ճակատի վրա. ծայրերը նույնպես կապվում են ճակատին:

Վերջը վզի վրա լինելու դեպքում գլխաշորը գործադրվում է ծալված գրությամբ, վորպես փողկապ:



Նկ. 30. Զեռ-թի ԿԱՆ ԳՅԵԼԸ ԳԼԽԱՇՈՐԻ ՎՐԱ:

Վերավորված գառտակը գլխաշորի վրա զբվում է այնպես, վորպեսզի մասները դարձված լինեն դեպի գլխաշորի վերնածայրը: Վերնածայրը ծալվում է մասների վրա: Գլխաշորի ծայրերը կապվում են գլխաշորի վերնածայրի վրա և նրա վրա ամրացվում անգլխական քորոցով:

Վերավորված ձեռքը գլխաշորի վրա կախելու համար վարվում են այսպես: գլխաշորը տեղավորում են լանջավանդակի վրա իր հիմնական մասով առողջ ձեռքին մոտ: Վերավորված ձեռքը ծալվում է արմուռնկից և տեղավորվում գլխաշորի վրա: Գլխաշորի ներքին ծայրը թեքվում է ծալած թևի միջով և ուղղվում դեպի վզի հետևի մասը, վորտեղ և կապվում է գլխաշորի վերի ծայրի հետ: Գլխաշորի վերնածայրը ծալվում է վերավորված ձեռքի արմուռնկի վրայով և ամրացվում է գլխաշորին անգլխական քորոցով (նկ. 30):

ՊԱՐՍԱՏԻԿ ԿԱՊ (ՍՐԱՇԱ)

Յեթն 70—75 սմ. յերկարություն ունեցող թանգիֆը

կամ բինտը յերկարություն յերկու ծայրերից մեջտեղից կիսվի, կրտաացվի չորս ծայրերով պարսասիկ կապիչ (սրաշա):

Պարսատիկաձև կապիչը դրվում է քթի, ներքին ծնոտի, ինչպես և գլխից վերավորվելու դեպքում (նկ. 31):

Պարսատիկաձև վերակապը ներքին ծնոտին դրվում է այսպես. վերակապական նյութեղենի վրայից դրվում է պարսատիկաձև կապիչը, նրա ներքին



Նկ. 31. քթի ՊԱՐՍԱՏԻԿ ՓԱՅԱՅԱՆ:



Նկ. 32. ՆԵՐԲԵՎԻ ՄՆՈՏԻ ՊԱՐՍԱՏԻԿ ՓԱՅԱՅԱՆ:

յերկու ծայրերը ծալում-թեքում են դեպի գլխուկը և այնտեղ կապում են, իսկ ներքին յերկու ծայրերը կապվում են պարանոցի վրա (նկ. 32):

ՀՐԱՐՁԱԿ ՎԵՐՔԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ 8ՈՒՅՑ ՏԱԼԸ

Գանգի վերավորվելը պատկանում է առավելապես ծանր վերքերի թվին: Գանգից վերավորվածին առաջին ոգնությունը ցույց տվողը պետք է.

1) Վերքի վրա դնի հականեխված վերակապ պահպանելով մեծագույն դեռչունություն, վորպեսզի վերքը չկեղտոտվի:

2) Ապահովել վերավորվածին անմիջապես պատգարակի վրա բուժական հիմնարկ տեղափոխելը, նրան վերարուժական ոգնությունը ցույց տալու համար:

Պարանոցը վերավորվելու դեպքում անհրաժեշտ է վերքի վրա դնել հականեխված վերակապ: Արյունհոսությունը շարունակվելու դեպքում դնել սեղմիչ փաթաթան և անմիջապես վերավորվածին փոխադրել բուժական հիմնարկ: Մինչև վերավորվածին բուժական հիմնարկ հասցնելը, պետք է ուղի-ուղով հետևել նրան, վորովհետև արյունհոսությունը կարող է վերսկսվել:

Կրճքի վանդակի վերավորվելու դեպքում կարող են վնասվել կյանքի համար կարևոր օրգանները—թոքերը, սիրտը և արյունատար անոթները:

Թոքերը վերավորվելու դեպքում վրայի հասնում սուր արյունապակասություն, շնչարգելություն, շուրթերի կապտում, օդաբշտիկավոր խոռոչներով արյունաթքություն, դարկը հազիվ է դրացվում: Թոքը վերավորվածին՝ միկրոբազերծ նյութեղենով վերակապումը կատարելուց հետո պետք է դնել վերավորված կողքի վրա կիսանստած դրությամբ: Այդպիսի դրությամբ հիվանդին պետք է փոխադրել բուժական հիմնարկ:

Սրտի վերավորվելու դեպքում հայտնվում է մաշկային ծածկույթի դուրսատուություն, դարկը սաստիկ թուլանում է, հաճախակի տեղի յե ունենում ուշադնացություն: Սրտից վերավորվածին նույնպես անհրաժեշտ է վերակապումից հետո, շտապ կարգով ուղարկել բուժական հիմնարկ: Փոխադրման ժամանակ նա պետք է լինի կիսանստած դրության մեջ:

Հրազենից փորից վերավորվելու դեպքում հայ-

տընվում է դեմքի գունատություն, սառը քրտինք, ծարավ, հաճախակի, բայց թույլ յերակազարկ, խիստ ցավեր փորում: Վիրավորվելուց մի քանի ժամ հետո կարող է սկսվել ործկում, փորի ուռչում: Փորից վիրավորվածին ավելի լավ է վիրավորվելուց 5—7 օր մինչև անցնելը — չփոխադրել:

Յեթե ուղղակի հանգամանքները չեն թույլ տալիս վիրավորվածին թողնել մոտակա բուժակայանում, ապա պետք է ձեռք առնել ամեն միջոց առավելագույն հանդիստ և հարմար փոխադրում ապահովելու համար:

Փորից վիրավորվածին չի կտրելի տալ վոչ ուտելիք, վոչ խմելիք:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԲԵԿՎԱԾՔՆԵՐԻ, ՀՈԴԱՒԱԽՏՈՒՄՆԵՐԻ, ՋԱՐԴՎԱԾՔՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՊԱՆՆԵՐԻ ՁԳՎԵԼՈՒ ԴԵՊԲԵՐՈՒՄ


ՎՈՍԿՐԵՐԻ ԲԵԿՎԱԾՔ

Մարդկային մարմնի վոսկրները աչքի յեն ընկնում թեթեվաթյամբ, ամբուլթյամբ, ճկունությունամբ և դիմացկունությունամբ: Բայց և այնպես ուժեղ ներգործություն դեպքում (ընկնելը, հարվածը, հրազենից վիրավորումը) վոսկրները կարող են կտրվել:

Վոսկրի բեկվածքի դեպքում յեթե մաշկային ծածկույթը մնացել է անվթար, ապա այդպիսի բեկվածքը կոչվում է ծածկված:

Իսկ այնպիսի դեպքում, յեթե վոսկրի բեկվածքի հետ միասեղ, նույն տեղում կա նաև վերք, ապա այդպիսի բեկվածքը կոչվում է բաց (նկ 33):

Բաց բեկվածքը ավելի վտանգավոր է, քան փակը, վորովհետև բաց բեկվածքում հնարավոր է



Նկ. 33. ԾԱԾԿՎԱԾ ՅԵՎ ԲԱՑ ԲԵԿՎԱԾՔ

մանրեների ներսթափանցում:

Վոսկրի բեկվածքի նշանները. ա) խիստ ցավեր, վորոնք ուժեղանում են ամենափոքր շարժման ժամանակ:

բ) կտրված վոսկրի արտաքին ձևի փոփոխություն (աչքի յե ընկնում աննորմալ ցցվածություն, ծուլություն, խորը կաճուկություն):

գ) կտրված տեղը շոշափելու դեպքում զգացվում է կըրճրկոց:

Յեթե կտրված վոսկրին իր ժամանակին ապահովում են լրիվ անշարժություն և կտրվածքների բնական դուրսբաց պահելու հնարավորություն — վոսկրը միացվում է: Կտրված տեղում առաջ է դալիս նոր վոսկրային նյութ, վորը կոչվում է վոսկրային կոշտուկ (КОСТНОЕ МОЗОЛЬ):

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ: Վոսկրի բեկվածքների առողջացումը հնարավոր է հետևյալ պայմաններում.

1) Բեկված վոսկրի կտորտանքի կանոնավոր, բնական դըրություն բերելու դեպքում:

2) Բեկված վոսկրի լիակատար անշարժությունն ապահովելու դեպքում: Ուստի չի կարելի ավելնորդ անգամ ձեռք տալ, շոշափել և շարժել բեկվածքի տեղը, վորպեսզի տեղում կտրվածքների իրարից հեռացում չառաջացվի և նրանցով (կտրվածքներով) չվիրավորվեն շրջապատի բջջանյութվածքները (մկանները, արյունատար անոթները, նյարդերը):

Բեկված վերջավորությունը հանդիստ դրությունն ապահովելը պահանջվում է նաև տուժածի ինքնազգացումը բարելավելու նկատառումով, վորը այդ ժամանակ տանում է շատ ուժեղ ցավեր:

Բեկված վերջավորություն (ձեռքի, վոտքի) անշարժությունն ապահովելու համար — դործադրվում են բեկակալներ (УВНАС):

Բեկակալները (УВНАС) լինում են տարբեր նյութերից՝ ամուր, տափակ առարկաներից (փայտից, թիթեղից, կաղապար) և զանազան ձևի ու մեծության, գործադրվում են կտրված վոսկրի անշարժությունը ապահովելու համար:

Լինում են պատրաստի բեկակալներ, վորոնք իրենց ձևով և չափերով համապատասխանում են մարդկանց վերին և ներքին վերջավորություններին: Մարտական պարագաներում, նույնպես և խաղաղ ժամանակ պատրաստի բեկակալներ կարող են ձեռքի տակ չլինել: Այդպիսի դեպքերում պետք է կարողանալ ոգտվել ձեռքի տակ յեղած մի շարք առարկաներից, ոգտագործելով նըրանց վորպես բեկակալներ: Ձեռնափայտը, հովանոցը, ճիպոտների կապոցը, ծղոտի խուրճը և նման իրերը կարող են ոգտադործվել վորպես բեկակալներ:

Մայրահեղ դեպքում, յեթե ձեռքի տակ չկա բուրդովին վոչ մի հարմար իր, ապա կարելի յե բեկվածքից վնասված ձեռքը

բինտով փաթաթելով ամրացնել կրծքավանդակին, իսկ վոտքը, մյուս, առողջ վոտքին:

Բեկակալային փաթաթանի դնելու կարգը: Բեկակալները պետք է վերցնել այնպիսի չափերի, վորպեսզի նըրանք իրենց մեջ պարփակեն այն յերկու հոգերը, վորոնց միջև գտնվում է կտորված վոտկը:

Որինակ. սրունքի կտորվելու դեպքում՝ բեկակալը իր մեջ պիտի առնի ծնկային, և սրնքա-թաթային հոգերը, նախարպկի կտորվելու դեպքում—արմունկի և ճաճանչա-յենթադաստակային հոգերը:

Բեկակալ դնելուց առաջ վնասված վերջավորությունը փաթաթվում է բամբակով կամ թանգիֆով (բամբակի կամ թանդիֆի բացակայություն դեպքում կարելի չէ փաթաթել հնոտիքով՝ խոտով, բրդով, թաղիքով): Առանձնապես ուշադիր կերպով պետք է ծածկել—փաթաթել հոգերի մոտ դուրս ցցված վոտկերը, պառկելահարուկից խուսափելու համար:

Դրվելիք յերկու բեկակալներից—մեկը պետք է լինի մի քիչ յերկար և դրվում է վերջավորություն կտորվածքի դրսի կողմից, իսկ մյուսը—կարճը դրվում է վերջավորություն ներսի մակերեսի վրայով: Հետևել, վոր բեկակալը չդիպչի կտորված տեղին:

Բեկակալ դնելու հետ միաժամանակ, կտորվածքները բնական դրություն բերելու համար, անհրաժեշտ է մեծ զգուշությամբ վնասված վերջավորությունը մի քիչ ձգել:


Ձեռքի վրա յեղած կտորվածքի դեպքում բեկակալը դըրվում է թեք արմունկից ծալված դրություն մեջ պահելով: Վոտքի կտորվածքի վրա բեկակալ դնելու ժամանակ պետք է վոտքը ծնկի մոտ շակել—ուզղել:

Բեկակալները վերջավորությունը ամրացվում են բինտի, թաշկինակի, պարանների, յերեսորբիչի միջոցով, այնպես ամուր, վորպեսզի իրոք ապահովված լինի վերջավորություն անշարժությունը: Բեկակալի բինտավորումը պետք է կատարել վարից վեր ընթացքով:

ՍՈՒԱԶԻՆ ՈՂՆՈՒԹՅՈՒՆ ՎՈՍԿԵՐՏԻՔԻ ԶԱՆԱԶԱՆ ՍԱՍԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԿՈՏՐՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Անրակի (КЛЮЧИЦА) կտորվելու դեպքում անհրաժեշտ է անրակի համապատասխան կողմի թեք ամրացնել անշարժ դրությամբ: Դրա համար արմունկից ծալված թեք կալվում է զլխաշորի (КОСЫНКА) միջոցով, բինտավորում են և բինտով ամրացվում կրծքի վանդակին (նկ. 34):

Կողոսկրի կտորվելու դեպքում.—տուժողը պետք է խորն արտաշնչում կատարի, վորից հետո անմիջապես պետք է պինդ սեղմել կուրծքը լայն բինտով (յերեսորբիչով, կաշեգոտով): Կրծքսկրի այդպես սեղմել-քաշելը կխանգարի խորը շնչառության շարժումներին, վորն իր հերթին նշանակալից չափով կապահովի վնասված կողոսկրների հանգիստը:



Վոլնաշարի կտորվելու դեպքում.—վնասվածին՝ զգուշությամբ պետք է փոխադրել կարծր պատգարակի (տախտակի կամ դոսն) վրա: Դրիտակը բարձ չդնել: Ապահովել վրի և իրանի լիակատար անշարժություն, վորը կարելի չէ իրականացնել բինտի ոգնությամբ ամրացնելով վնասվածի իրանը պատգարակին բինտի (յերեսորբիչի, կաշեգոտու, պարանի) ոգնությամբ (նկ. 35):

Նկ. 34. ԱՆՐԱԿԻ ԿՈՏՐՎԱԾՔԻ ԴԵՊՔՈՒՄ ԹԵՎԻ ԱՄՐԱՑՈՒՄԸ ԱՆՇԱՐՅ ԴՐՈՒԹՅԱՄԸ:



Նկ. 35. ՎՈՂՆԱՇԱՐԻ ԿՈՏՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎՆԱՍՎԱԾԻՆ ՊԱՏԳԱՐԱԿԻՆ ԱՄՐԱՑՆԵԼԸ:

Ուստոսկրի կտորվածքի դեպքում.—վնասվածին ոգնություն ցույց ավող յերեք հոգուց՝ մեկը պահում է շանշարժ դրությամբ ուսային հոգը, մյուսը արմունկային հոգում ծալված

Նախարարողուկը ձգում է դեպի ցած, յերրորդը՝ նախ բամբակով փաթաթում է փրսոված վերջավորութունը, դնելով բավականաչափ բամբակ կոնատակի և արմնկատակի խոռոչներում և ուսուսկրի դուրս ցցված մասերի վրա: Այնուհետև նա գնում է յերկու բեկակալներ—մեկը ուսի դրսի մակերեսի վրա, ծածկելով ուսային և արմունկային հոդերը, իսկ մյուսը՝ ուսի ներսի մակերեսի վրա, սկսած կոնատակի խոռոչից և արմունկային հոդից ցած:

Յերկու բեկակալներն ել ամրացվում են բինտերով կամ գլխաշորերով, (КОСЫНКИ) թաշկինակներով, պարաններով և այլն: Նախարարողուկը կախեցվում փաթաթելով գլխաշորում:

Նախարարողուկի կոտրվելու դեպքում.— թեք ծալվում է արմունկից: Բամբակով փաթաթում են նախարարողուկը, առանձնապես արմունկային փոսը և արմունկուսկրի ու ճաճանչուսկրի դուրս ցցված մասերը: Այնուհետև դրվում է յերկու բեկակալներ—արտաքին՝ այնպես, վորպեսզի իր մեջ առնի արմունկային և ճաճանչա-յենթադաստակային հոդերը, և ներքին (ներսի)—այնպես, վոր իր մեջ առնի արմունկային հոդը և մատների արմատները: Բեկակալները բինտավորում, ամրացվում են, իսկ ձեռքը կախեցվում դրվելով գլխաշորի մեջ (նկ. 36):



Նկ. 36. ՆԱԽԱՐԱՐՈՂՈՒԿԻ ԲԵԿԱԿԱԿԱԼՆԵՐ ԴՆԵԼԸ:

Մաստակի վրա յեղած կոտրվածքի դեպքում (յենթադաստակի վոսկրներ, ափի վոսկրներ)— դաստակը կիսածալ մատներով ծածկվում է բամբակով: Այնուհետև դրվում է յերկու բեկակալներ.

մեկը ձեռնափի և նախարարողուկի վրա մինչև արմունկը, մյուսը— դաստակի թիկունքին՝ մատների արմատից մինչև արմունկ:

Բեկակալները բինտավորվում և ամրացվում են, իսկ ձեռքը գլխաշորով կախվում է:

Ձեռքի մատերի կոտրվածքների դեպքում— կոտրված մատը փաթաթվում է բամբակով: Բեկակալները դրվում են ձեռնափի և մատների թիկունքային մակերեսի վրա նրա վերջիկից մինչև դաստարմատը: Բեկակալը բինտավորվում է, իսկ ձեռքը, արմունկից ծալված դրոթյամբ կախվում է գլխաշորի մեջ առնված:

Ազդրոսկրի կոտրվելու դեպքում— ազդրը փաթաթվում է բամբակով: Կարելի չէ դնել յերկու կամ չորս հատ բեկակալ:

Յերկու բեկակալ դնելու դեպքում, մեկը՝ արտաքինը, յերկարը—գնում է կոնատակի փոսից մինչև կրունկը, իսկ մյուսը, ներսինը՝ աճուկից մինչև կրունկը: Չորս բեկակալ դնելու դեպքում, մեկը— արտաքինը ընդգրկում է իր մեջ կոնքազդրային և արունքաթաթային հոդերը, յերկրորդը— ներսինը առնում է աճուկից մինչև կրունկները, յերրորդը գրվում է ազդրի հետևի մակերեսի նստատեղի թմրիկից մինչև կրունկները, չորրորդ բեկակալը դրվում է ազդրի առաջամասի մակերեսի վրա աճուկից մինչև ծնկից ցած (նկ. 37):



Նկ. 37. ԱԶԴՐԻ ՎՐԱ ԲԵԿԱԿԱԿԱԼ ԴՆԵԼԸ:

Սրունքի կոտրվելու դեպքում.— բամբակով փաթաթել սրունքը, առանձնապես ծնկատակի փոսը, կրունկը, սրունքի դուրս ցցված վոսկրները: Դնել յերեք բեկակալ. յերկուսը սրունքի կողերին, իսկ յերրորդը սրունքի յետևի մակերեսին. այնպես, վորպեսզի բոլոր յերեք բեկակալները ընդգրկեն իրենց մեջ վոտքը՝ նրբանից մինչև ազդրի մեջտեղը:

Ծնկոսկրի (ЧАШКИ) կոտրվելու դեպքում.— վնասված վոտքը ծնկից ուղղել, ծնկատակի փոսում դնել բամբակ: Ծնկային հոդի վրա դնել յերկու կողային բեկակալներ, վորոնց պետք է բինտով ամրացնել հոդի վերի և ցածի մասերին: Ծնկոսկրի վրա փաթաթան չի դրվում:

Կոնքոսկրների կոտրվելու դեպքում վնասվածին պառկեցնել փափուկ փովածքի վրա և շուտով հասցնել նրան բուժական հիմնարկ:

ՀՈՂԱԽԱԽՈՒՄ (ԳՈՒՐՍ ԸՆԿՆԵԼ)

Հողախախտումները ամենից հաճախ պատահում են ընկնելուց և հարվածից: Հողախախտում կարող է պատահել նաև ձեռքի կամ վոտքի անհարմար, խիստ շարժումից (նկ. 38):

Հողախախտումը— հոդերում միացված վոսկրների ծայրերի

իրարից հեռանալն ե: Հեռանալը—խախտումը կարող ե լինել մասնակի, յերբ հոդային գլխիկը—հոդաշապկից դուրս ե ընկնում վոչ լրիվ կերպով ե լրիվ, յերբ հոդային գլխիկը ամբողջովին դուրս ե ընկնում հոդաշապկից: Վերջին դեպքում կարող ե խանգարվել հոդաշապկի ե հոդակապերի ամբողջությունը:

ՀՈՒԱՍՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ. ա) հոդի ուժեղ ցավ, վորը սաստիկ ուժեղանում ե շարժման վորևե փորձ անելիս.

բ) Հոդի գծադրի խիստ նկատելի փոփոխում: Այդ փոփոխությունը պարզորեն նկատվում ե խախտված հոդը ստողջ հոդի հետ համեմատելիս.

գ) հոդերի շրջանում ուռուցքներ ե արյան լճացումներ.

դ) վերջավորություն դուրս ընկած հոդի տեղի աննորմալ դրությունը: Այսպես, ուսա-

յին հոդի դուրս ընկնելու դեպքում ֆրասվածը ձեռքը պահում ե արմուկից ծալած:


Կոնք-աղբյուրային հոդերի դուրս ընկնելու դեպքում ֆրասվածը վոտքը պահում ե ծայրը դեպի ներս շրջված դրությամբ:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ:

Հոդախախտումների ժամանակ առաջին ոգնություն ցույց ավողի հիմնական խնդիրն այդ ե, վոր նա ապահովի դուրս ընկած վերջավորություն լիակատար հանդիստ ե մինչև բժշկի գալը ըստ հնարավորին թեթևացնի ֆրասվածի հիվանդագին զգացումները: Իրա համար դուրս ընկած ձեռքը շորով կախվում ե վզից, իսկ վոտքը (միկնուլյն ե թե վոր հոդի դուրս ընկնելու դեպքում) պետք ե պահեցնել փափուկ փրուվածքի վրա: Վնասվածի ցավերը թեթևացնում ե ուռած հոդերին պարկով ստույց կամ ստոր թրջոցները դնելը:

Վնասվածին անհրաժեշտ ե, վորքան կարելի չե շուտ հասցնել բուժական հիմնարկի, բժշկի միջոցով դուրս ընկած հոդը իր տեղը զցելու համար:

Ձեռքի հոդերի խախտում ունեցող հիվանդը կարող ե ինքնաբերաբար շարժվել: Փոխադրվելու դեպքում նա կարող ե գտնվել նստած դրությամբ:



Նկ. 38. ԱՐՄՆԿԱՅԻՆ ՀՈՒԻ ԽԱՍՏՈՒՄ:

Վոտքի հոդերի խախտում ունեցող հիվանդը փոխադրվում ե բուժական հիմնարկի պակած դրությունը ե անպայման փափուկ փրովածքի վրա:

Ջ Ա Ր Դ Վ Ա Մ Բ

Ջարդվածքը—սա հյուսվածքների ֆրասվածքն ե, վորը տեղի յե ունենում հարվածի կամ խիստ սեղմելու հետևանքով:

Ջարդվածքը՝ արյունատար անոթների ջնջվելու հետևանքով հաճախ ուղեկցվում ե փափուկ անոթների (կաշին, մկանները) արյունլցումով: Մի վորոշ դեպքերում (մարդու ավտոմորբիի տակ ընկնելու կամ վորևե ծանր իրով ամուր խփելու) Ջարդվածքը կարող ե ուղեկցվել մկանների, վոսկրների ե նույնիսկ ներքին որգանների ջնջումով:

Արնայցումը կաշվի տակ (кровоподтеки—լճարյուն) լինում են դանդաղ մեծություն, սկզբում ունենում են մուգ կարմիր կամ մանիշակագույն պուտի տեսք, վորոնք հետագայում դառնում են սև-կանաչագույն, կանաչ, ե վերջապես, դեղին գույնի:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ: Ջարդվածք պատահելուց հետո, անմիջապես ստոր թրջոցներ դնել Ջարդված տեղի վրա (կես ժամ տևողությամբ): Հետագայում ոգտադործել սաքացնող կոմպրեսներ:

Սոշոր Ջարդվածքների դեպքում, յերբ կասկած ե առաջ դալիս ներքին որգանների ֆրասված լինելու մասին, անմիջապես փոխադրել բուժական հիմնարկ:

ԿԱՊԵՐԻ ՁԳՈՒՄ

Ընդհանուր դործածության մեջ կապերի ձգումը կոչվում ե ջիլերի—յերակների ձգում: Սա կայանում ե հետևյալում՝ ընկնելու, Ջարդվածք ստանալու, հանկարծակի անհաջող կերպով հոդը շրջելու դեպքերում—հոդերի կապերը ձգվում կամ գերլարումից պատուվում են:

Հատկանիշները.—ցավ, թեթև ուռուցք, հոդերի շարժման սահմանափակում, յերբեմն լինում ե ե արյան լճացում:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ: Ուռած հոդի վրա դրվում ե ստույց կամ ստոր թրջոց: Հոդին ապահովել հանգստություն, իսկ վերջավորությունը պահել բարձրացրած դրությամբ: Հետագայում ոգտադործել ջերմացուցիչ կոմպրես: Հոդի շարժունակությունը վերականգնվում ե մի քանի օրվա ընթացքում:

Վնասվածքի առկայությունը դեպքում (վերավորվելու, կոտորվածքի, հողի դուրս ընկնելու, ջարդվածքի, այրվածքի) շորերը նախ հանվում են առողջ վերջավորությունների վրայից և ապա արդեն ֆնասված մասերից:

Պոռոր ֆնասվածքների դեպքում զգեստը, սպիտակեղենը և կոշիկները ֆնասված վերջավորությունները վրայից հանում են կտրելով կարատեղերից:

Ա Յ Ր Վ Ա Ծ Ք Ն Ե Ր

Այրվածքները տարբերվում են յերեք աստիճաններով:

Այրվածք առաջին աստիճանի: Նշանները.— մի փոքր ուռուցք և կաշվի կարմրություն, ցավ:

Այրվածք յերկրորդ աստիճանի: Նշանները.— փոքր ուռուցք, կաշվի կարմրություն, բշտիկների գոյացում:

Այրվածք յերրորդ աստիճանի: Նշանները.— կեղվանքի (վերքի վրայի կեղև) գոյացում և հյուսվածքների մահացում:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ: Առաջին աստիճանի այրվածքի դեպքում այրված մակերեսը հաճախակի պետք է թրջել սպիրտով, ապա ծածկել թանդիֆային անձեռոցիկով, վորը պետք է թրջված լինի սողայի ուժեղ—3% լուծույթով (1 թեյի գդալ սողա բացված մի բաժակ ջրում), կամ կապարաջրի (СВИНЦОВОЙ ВОДЫ), (վորը բաց է թողնվում դեղատներից և սանիտարիայի ու հիգիենայի խանութներից), կամ թե մանգանաթթվուտի կրածնի թեթև լուծույթում (մի բաժակ ջրի մեջ բաց է թողնվում այնքան մանգանաթթվուտային կրածնի բյուրեղիկներ, մինչև վոր լուծույթը դառնում է մուգ-մանրադեղին):

Մաշկին քսելու համար կարելի է գործածել ամեն տեսակ յուղեղեն—վաղելին, ցինկի քսուք (ЦИНКОВАЯ МАЗЬ):

Յերկրորդ աստիճանի այրվածքի դեպքում—բշտիկները չբանալ, այլ զգուշությամբ, նախապես կրակի վրա շիկացրած ասեղով ծակել, այրված տեղի վրա դնել փաթաթան, թրջելով այն սողայի 10% լուծույթի մեջ (3 թեյի գդալ սողա մի բաժակ ջրի մեջ) կամ թե 1% մանգանաթթվուտային կրածնի լուծույթի մեջ:

Յերրորդ աստիճանի այրվածքի դեպքում—այրվածքի տե-

ղին ձեռք չդիպցնել, այլ կապել առաջին ոգնություն հականեխված ծրարով և, ըստ հնարավորին շուտ, ուղարկել ֆնասվածին բուժկայան:

Թրվուսնեից այրվածք սահմալու դեպքում—ֆնասված տեղը լվանալ ջրով, վորի մեջ լինի սողայի խոնուրդ կամ սապնի փրփուր, կամ մոխրի և վրան ցանել կավիճի կամ ատամի փոշի:

Պետք է հիշել, վոր ծծմբաթթվուտով և չմարած կրից այրվածք ստանալու դեպքում չի կարելի լվացվել ջրով, վորովհետև ջրի միացումը ծծմբաթթվուտի և չմարած կրի հետ առաջացնում է բարձր ջերմաստիճան, վորը կարող է ուժեղացնել այրվածքը: Ծծմբաթթվուտից կամ չմարած կրից առաջացած այրվածքի դեպքում—այրված տեղին քսել վորևե յուղեղեն, վորից հետո դնել ցինկի կամ բորաթթվի բուրբուկ պատրաստված փաթաթան:

Ցոսմորից այրվածք սահմալու դեպքում—դնել մանգանաթթվուտի կրածնի 1% լուծույթի մեջ խոնավ վերակապ:

Այսի այրվածքի դեպքում—ցածի կոպը ձգվում է դեպի ցած և շաքարի կամ հալած յուղի (վոչ տաք) լուծույթի մեջ թրջված բամբակը քամվում է աչքի մեջ: Դրանից հետո անհրաժեշտ է աչքը լվանալ բորաթթվուտի 2% լուծույթով:

ՅՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Յրտահարությունը տարբերվում է յերեք աստիճաններով: Առաջին աստիճան—մաշկի գունատություն և նրա զգայունություն կորուստ:

Յերկրորդ աստիճան—մաշկի կապտելը, փոքր ուռուցքների և բշտիկների հայտնվելը:

Յերրորդ աստիճան—հյուսվածքների մեռուկ:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ: Առաջին աստիճանի ցրտահարության դեպքում—ցուրտ տեղում կամաց—կամաց պետք է ձյունով տրորել ցրտահար յեղած տեղը մինչև կարմրելը և ապա փոխադրել տաք շենք և քսել վորևե տեսակ յուղ: Միանգամից տաք շենք չփոխադրել:

Յերկրորդ աստիճանի ցրտահարության դեպքում—ցրտահար յեղած տեղը յողային թուրմ (настойка), բենզին կամ սպիրտ քսել, չորացնել (զգուշ, վորպեսզի բշտիկ-

ները չբացվեն) և քսել վաղելին: Դրանից հետո դնել ցինկային կամ բորաթթվուտի քսուքով փաթաթան:

Յ ե բ բ ո ղ աստիճանի ցրտահարու թյան դեպքում— ֆլասովածին անմիջապես ուղարկել բուժական հիմնարկ:

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻՑ

Բացված (չմեկուսացված) ելեկտրական լարերին, վարոնցով անցնում ե հոսանք (100 և ավելի վոլտ) դիպչելու դեպքում կարող ե ստացվել մարմնի տեղական և ընդհանուր լուրջ ֆլասովածքներ: Բարձր լարման հոսանքը (500 և ավելի վոլտ) մարդու համար մահացու յե:

Բաց հաղորդալարի դիպչելու դեպքում— ֆլասովածի ձեռքի մկանները ջղաձգորեն կծկվում են և նա անկարող ե լինում պոկվել հաղորդալարից

Ելեկտրական հոսանքից ֆլասովելու դեպքում կարող են պատահել այրվածքներ (յերկրորդ և յերրորդ աստիճանի) մկանների ջղաձգություն կաթվածահարություն հետեանքներով, գիտակցություն կորուստ, հաճախ մահանում են:

Ա.Ռ.Ս.ՋԻՆ ՌԳՆՈՒԹՅՈՒՆ: Անմիջապես ազատել ֆլասովածին հոսանքի ազդեցությունից (անջատել հոսանքը, լարը կտրել կացնով): Այդպիսի ժամանակ չի կարելի դիպչել ֆլասովածին բաց ձեռքերով, վորովհետև կարող ե հոսանքը համակել և ոգնողին: Յերը անհրաժեշտ ե ֆլասովածին բաժանել հաղորդալարից պետք ե հագնել ուտինե կամ չոր բրդե ձեռնոցներ և կրկնակոշիկ:

Հոսանքի ազդեցությունից ազատելուց հետո, ֆլասովածին ոգնություն ե ցույց տրվում, նայած այն ֆլասովածքին, վոր նրան հասցրել ե հոսանքը: Գիտակցությունը կորցնելու և շնչառություն թուլացման դեպքում— կատարում են արհեստական շնչառություն: Այրվածքների առկայություն դեպքում վարվում են ըստ այրվածքների ժամանակ առաջին ոգնություն ցույց տալու կանոնների:

Կայծաղը մարդու մարմնին ազդում ե այնպես, ինչպես բարձր լարման ելեկտրական հոսանքը:

Կայծաղից ֆլասովածին առաջին ոգնությունը ցույց ե տրվում այնպես, ինչպես ելեկտրական հոսանքից ֆլասովելու դեպքում:

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ

Մի քանի դեպքերում մարդ կորցնում ե գիտակցությունը և գիտակցության կորցնելու հետ միասին թուլանում կամ համարյա դադարում ե շնչառությունը:

Այդ լինում և ուշադնացություն, լեղզվելու, կախվելու ժամանակ, ածխահոտի դազով, կապտաթթվով և այլ թուլանելով թուլանավորվելու դեպքերում:

Այդպիսի դեպքերում առաջին ոգնություն ցույց տալու համար դիմում են արհեստական շնչառություն:

Արհեստական շնչառություն կիրառելուց առաջ պետք ե.

1) Վնասվածի բերանն ու ըմպանը մաքրել դեղից, հողից և տիղմից (լեղզվածի, հողի տակ մնացածի), փրփուրից, լորձից և խորխից (թուլանավոր նյութերից ֆլասովածի):

Բերանն ու ըմպանը մաքրում են կամ մատով կամ փայտի փոքրիկ կտորով, վորը պետք ե փաթաթված լինի թանզիֆով, բամբակով կամ մաքուր շորի կտորով: Մատը կամ փայտիկը բերանը մտցնելիս առանձնապես խորը չպետք ե տանել:

2) Կանխել լեղզվի կուլ գնալը, վորի համար պետք ե լեղուն դուրս քաշել թաշկինակով կամ մի կտոր թանզիֆով փաթաթված մատներով: Լեղուն բինտով փաթաթել և ամրացնել կզակին:

3) Վնասվածի գլուխը պետք ե դարձնել մի կողմի վրա, վորպեսզի փսխելու ժամանակ փսխունը դուրս թափի:


4) Վնասվածի հազուստի կոճակները բացանել (ոճիքը, կապերը, չարփաստները և այլն), վորպեսզի չդժվարանա շնչառությունն ու արյան շրջանառությունը:

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍԻԼՎԵՍՏՐԻ


Վնասվածին պառկեցնում են մեջքի վրա, մեջքի տակը դնում են հազուստից պատրաստած փոքրիկ գլան, բարձ և այլն:

Արհեստական շնչառություն կատարողը կանգնում ե ֆլասովածի գլխի յետևը, բռնում ե նրա յերկու ձեռքերն արմունկների մոտ, հետո ֆլասովածի ձեռքերը դանդաղորեն տանում ե դեպի յետ և դեպի կողմերը: Այդ դեպքում ֆլասովածի կրծքավանդակը կլայնանա, և կստացվի եփեցնում (նկ. 39): Դրանից հետո 1—2 հաշվելուց հետո ֆլասովածի ձեռքերը դանդաղորեն վերադարձնում են դեպի կրծքավանդակը և կիպ սեղմում են նրա կողերին:

Կրճքավանդակը սեղմվում է և իր ծավալով փոքրանում, ողբ նրա միջից դուրս է դալիս—ստացվում է արտաբնական: Այսպես հերթով իրար փոխարինում են ներշնչումն ու արտաշնչումը մեկ րոպեյում 16—18 անգամ:



Նկ. 39. ԱՐԶԵՍԱԿԱՆ ԾԵՉԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍԻԼՎԵՍՏՐԻ (ՆԵՐՇՆՉՈՒՄ)




Նկ. 40. ԱՐԶԵՍԱԿԱՆ ԾԵՉԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍԻԼՎԵՍՏՐԻ (ԱՐՏԱՇՆՉՈՒՄ):

Յեթե ֆուսովածի ձեռքը կոտրված է՝ Սիրվեստրի յեղանակը չի կիրառվում: Այդ դեպքում կիրառում են Շեֆֆերի յեղանակը:


ԱՐԶԵՍԱԿԱՆ ԾԵՉԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՇԵՖՖԵՐԻ

Վնասվածին պառկեցնում են մեջքը դեպի վեր: Նրա ձեռքերը ձգում են դեպի առաջ, իսկ գլուխը թեքում են կողքի: Ողնությունն ցույց տվողը չոքում է ծնկերի վրա և իր ձեռքերի ամբերով սեղմում է ֆուսովածի կրճքավանդակը: Ստացվում է արտաբնական (նկ. 41): Դրանից հետո կրճքավանդակի սեղմումը դադարեցվում է: Ստացվում է ներշնչում (նկ. 42): Այսպես հերթով հաջորդում են իրար արտաշնչումն ու ներշնչումը մի րոպեյում 16—18 անգամ:

Արհեստական շնչառությունն այս կամ այն յեղանակով պետք է կատարել համբերատար կերպով և համառորեն, յերբեմն մի ամբողջ ժամ և ավելի յերկար ժամանակամիջոցում:



Նկ. 41. ՇԵՖՖԵՐԻ ՅԵՂԱՆԱԿԸ (ՆԵՐՇՆՉՈՒՄ):



Նկ. 42. ՇԵՖՖԵՐԻ ՅԵՂԱՆԱԿԸ (ԱՐՏԱՇՆՉՈՒՄ):

ՈՒՇԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուշագնացությունը համարվում է դիտակցություն կորուստը, վերն առաջ է դալիս հանկարծ վրա հասած ուղեղի սակավաշյուկությունից հետևանքով:

Ուշագնացությունն առաջացնող պատճառներն են՝ արյունաքամությունը վիրավորման հետևանքով, արյունաթրությունը, ներվային ցնցումը, անթանոթը, վատ քամահարվող շնչում յերկար ժամանակ մնալը:

Ուսագնացութեան նշաններն են՝ գիտակցութեան կորուստ
դեմքի գունատութիւն, սակավ շնչառութիւն, թույլ զարկ:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ: Հիվանդին պետք է պառկեցնել
մեջքի վրա այնպես, վոր նրա գլուխը մարմնից ցածր լինի: Սրա
հետ միասին պետք է հիվանդի վտտեերը բարձրացնել և նրանց
տակը բարձ կամ հազուստ դնել: Հիվանդի ոճիքն արձակել, դո-
տին բացանել: Բանալ ողանցքը (ամառը՝ պստուհանները) մա-
քուր ող ներս թողնելու համար:

Տալ հոտ քաշելու համար անուշադրի սպիրտ (բամբակի
կտորը թրջում են անուշադրի սպիրտով և մոտեցնում հիվանդի
քթին): Խոր ուշագնացութեան ժամանակ արհեստական շնչառու-
թիւն են կատարում: Հիվանդի ուշքի գալուց հետո, նրան տալիս
են 15 — 20 վալերիանի կաթիլներ, մուգ թեյ կամ սուրճ:

ՋԵՐՄԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջերմահարութիւնը տեղի յե ունենում մարմնի թիստ տա-
քացման հետեանքով:

Ջերմահարութիւնը կարող է պատահել հնոցում, թիստ
տաքացրած բաղանիքում, վատ սարքավորված հացթխարանում,
երթերին՝ տարվա տաք յեղանակին:

Ջերմահարութեան նշաններն են.— ուժեղ հոգնածութիւն,
գլխապտույտ, դեմքի կարմրութիւն, յերերուն բայլվածք, քնա-
փութիւն: Ծանր դեպքերում փնասվածք կորցնում է գիտակցու-
թիւնը, դեմքը գունատվում է, մաշկը դառնում է չոր, զարկը
(пульс) հաղիվ նշմարելի, շնչառութիւնը թույլ, խոպոտ: Մահը
կարող է տեղի ունենալ մի քանի ժամվա ընթացքում:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ: Վնասվածին պետք է անմիջապես
հանել այն շենքից, վորտեղ նրա հետ պատահել է Ջերմահարու-
թիւնը: Յեթե այդ պատահել է տարվա տաք յեղանակին՝ ազատ
ողում, ապա անհրաժեշտ է փնասվածին տեղավորել սովերոտ
տեղում, և հետո հազուստը հանել (արձակել փնասվածին նեղող
հազուստի կոճակները): Պառկեցնել այնպես, վոր գլուխը իրանից
(մարմնից) բարձր լինի: Գլխին և սրտի շրջանին դնել սառը թըր-
ջոցներ: Յեթե փնասվածի գիտակցութիւնը վրան է, տալ նրան
լամելու սառը ջուր: Յեթե նա ուշաթափ է և շնչառութիւնը

թանգարված, անհրաժեշտ է արհեստական շնչառութիւն կա-
տարել:

Հիվանդի ուշքի գալուց հետո—տալ մուգ թեյ կամ սուրճ:
Հետագայում պահանջվում է բժշկի հսկողութիւն:

ԱՐԵՎԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Արեահարութիւնը կարող է տեղի ունենալ արևի ուղիղ
ճառագայթների մարմնի (առանձնապես—գլխի) վրա յերկարատե
ներգործելու ժամանակ:

Արեահարութիւնը կարող է տեղի ունենալ ամառվա ամե-
նայեռուն շրջանում, մեծ քաղաքների փողոցներում, դաշտային
աշխատանքների ժամանակ, արևոտ ժամերին կատարվող հողնե-
ցուցիչ երթերի (поход) ժամանակ:

Արեահարութեան նշաններ.— ուժեղ գլխացավ, դեմքի կար-
մրում. ծանր դեպքերում գիտակցութեան կորուստ, դեմքի ու-
ժեղ կարմրութիւն, անկանոն, խոպոտ շնչառութիւն, թույլ յե-
րակազարկ:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ: Վնասվածին տեղավորել հով տեղ
(սովերում), հազուստի կոճակները բացել: Գլուխն ու դեմքը
թրջել սառը ջրով: Յեթե վնասվածի գիտակցութիւնը տեղն է,
տալ նրան լամելու սառը ջուր:

Յեթե գիտակցութիւնը կորցրել է և շնչառութիւնը դա-
դարել, անհրաժեշտ է արհեստական շնչառութիւն կատարել և
ձեռք առնել միջոցներ փնասվածին շուտափույթ կերպով հասցը-
նել բուժական հիմնարկ:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԽԵՂԴՎԱՄԻՆ

Խեղդվածի արտաին տեսք.— շուրթերի կապտում, կապտա-
կարմրավուն դեմք (յեթե ջրահեղձը թեղդաման է յեղել ջրում)
կամ հողազույն սփրթնած (յեթե ուշագնաց է յեղել շնչառու-
թեան դադարելու հետեանքով):

Առաջին ոգնութիւն ցույց տալու ժամանակ հարկավոր է
հիշել, վոր յերբեմն հաջողվում է կենդանացնել թեղդվածին մին-
չև իսկ ջրի տակ ամբողջ ժամի տևողութեամբ փնասուց հետո:

Խեղդվածին ոգնութիւն հասցնելու համար նախ և առաջ
պետք է հանել նրա վրայից զգեստները: Այնուհետև պետք է հե-
ռացնել նրա փորից, շնչուղիներից և բերանից ջուրը, ցելը և

Թուլյնը կարող է ընկնել որգանիզմի մեջ:

ա) Շնչուղիներն միջոցով (քլոր, ածխածնային ոքսիդ և այլն):

բ) Ուտելիքից բերանի միջոցով, խմելով կամ դեղորայքի միջոցով (մկնդեղ, ալիոնոլ, թթվուտներ, կալաքարերի (щелочи):

գ) Մաշկի միջոցով—մաշկա (պալարային) ՄԹՆ:

Թունավորում կարելի չէ կասկածել, յեթե առողջ մարդը ուտելուց կամ խմելուց հետո հանկարծ հիվանդանում է, հայտնըվում են որձկումներ, ցավեր սրտի դալի տակ, լուծ, յերբեմն ուշադնացուելուն և ուժի խիստ անկում:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ: Թունավորվելուց անմիջապես հետո անհրաժեշտ է որգանիզմից հեռացնել թուլյնը: Մա վերարեբում է այնպիսի թուլյների, վորոնք ներս են ընդունված բերանի միջոցով: Թուլյնը կարելի չէ որգանիզմից հեռացնել որձկոցներ ստեղծելով, ինչպես և լուծողական միջոցներ ոգտագործելով:

Պետք է հիշել, վոր ուժեղ թթվատներով թունավորվելու դեպքում չի կարելի որձկոցներ առաջացնել, վորովհետև այդպիսի թունավորումների դեպքում քայքայվում են ստամոքսի պատերը և որձկոցային լարվածութունից կարող են նրանցում առաջանալ աղեծակվածք և ապա մահ:

Վորպեսզի որձկոց առաջացվի՝ մատով կամ մաքուր թղթից վորորած խողովակով զրգում են կոկորդը կամ թե տալիս են առատ տաք խմելիք, սապնաշուր, կամ տաք ջրում բացած ձեթ:

ԹՈՒՅՆԵՐԸ ՆԵՌԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՎՈՂ ԼՈՒՇՈՂԱԿԱՆՆԵՐԸ

1) Գերչակի ձեթ (касторовое масло) (1—2 ճաշի դդալ մի նվազում):

Յոսֆորով թունավորվելու դեպքում գերչակի ձեթ չի աղըվում:

2) Վեննական խմելիք—2—3 ճաշի դդալ:

Շատ տեսակ թուլյներ, նախքան արյան մեջ ներծծվելը, բավական յերկարատե ժամանակ մնում են ստամոքսում (1-ից մինչև 6 ժամ): Ուտտի ամեն անգամ պետք է տալ ներս ընդունելու այնպիսի նյութեր, վորոնք հանդիսանում են տվյալ թուլյնի հակաթուլյնը: Այսպես որինակ, թթվուտներից վարակվելու դեպքում տրվում է ընդունելու կալաքար, և ընդհակառակը կալաքարով վարակվելու դեպքում տրվում է թթվուտներ:

Առաջին ոգնութունն ցույց տվողը պետք է հանգստութուն պահպանի, պետք է աշխատի վորոշել թե ինչ թուլյնով է վնասվածը թունավորվել, և դրանից հետո միայն շտապ կարողով անցնի բուժողութունն ցույց տալու գործին, դրա հետ միասին ձեռք առնի միջոցներ—բժիշկ կանչելու:

Ա. Ղ. Յ Ո Ւ Ս Ա. Կ

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԹՈՒՅՆԵՐՈՎ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼԻՍ

ԹՈՒՅՆԻ ԱՆՈՒՆԸ ՅԵՎ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ	ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱԿԱՔՈՒՅՆԸ
--	----------------------------------

ԱԼԿՈՀՈԼ

Սկզբում զրգում, ապա ճնշված դրութուն: Ջրայունակության կորուստ, սխտում, բերանից ալիոնոլի հոտ: Թուլլ պուլս: Ծանր դեպքերում արյունալցում ուղեղի մեջ:

ԲԵՐՏՈԼԵՏՅԱՆ ԱՂ

Գլխացավ: Փսխում մուգ կանաչ մասսաներով: Լուծ: Դեղնութուն: Ջրածութուններ: Մեղը սե դուլյնի: Գլխակցության կորուստ:

ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ ՎԱՏՈՐԱԿ ՅԵՐՇԻԿՈՎ (ՄՍՈՎ, ՁԿՈՎ)

Ցավեր վորում, սրտխառնում, փսխում: Ուժեղ ծարավ: Տեսողության խանգարում: Մկանների թուլութուն: Թուլլ պուլս:

Այսահովել թարմ տղի հոսանքը: Գլխի վրա—առը կոմպրես: Հոտոտելու տալ անուշադրի սպիրտ: Կարելի չէ նուխպես ներս ընդունելու համար տալ 5—10 կաթիլ անուշադրի սպիրտ կես բաժակ ջրով: Վոտքերին դնել տաք ջրով շեր: Գլխակցութունը կորցնելու և թուլլ շնչառության դեպքում արհեստական շնչառութուն անել:

Փսխում առաջ բերել: Ներս ընդունելու համար տալ գերչակի ձեթ: Խմելու շատ տալ ալկալալուր (սոդալայով): Այսահովել շուտափուլթ բժշկական ոգնութուն:

Փորի վրա դնել ջեռակ (грелка): Կանչել շտապ բժշկական օգնութուն:

ԹՈՒՅՆԻ ԱՆՈՒՆԸ ՅԵՎ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ
ՆՇԱՆՆԵՐԸ

ՍՈՒՆԿԵՐ (ԿԱՐՄԻՐ ՃԱՆ-
ՃԱՍՊԱՆ ՅԵՎ ԱՅԼՆ)

Սրտախառնում: Փսխում: Դժժոց
գլխում: Ջղաձղուլթյուններ: Ծանր
զեպքերում՝ գլխապոլիթյան կո-
րուստ:

ՈՁԻ ԹՈՒՅՆ

Տեղական ցալ (կծած տեղում):
Ուռուցք մխասված տեղում: Փըս-
խում: Ծնչապարուլթյուն: Դող:
Մաշկը սառն: Սրտի զործունեյու-
թյան անկում: Յերբեմն ջղաձղու-
լթյուններ:

ՅՈՒՒ ԹՈՒՐԾ

Ներս ընդունելիս ցավեր բերանում
և ըմպանում, առատ թուքահոսու-
թյուն, փսխում բաց կապույտ մաս-
սաներով, խիստ հարուստ, յերբեմն
ջան կաշվի վրա:

ԿԵՐՈՍԻՆ (ԲԵՆՁԻՆ)

Գթի և բերնի լորձաթաղանթի
թմրում: Չորություն ըմպանում:
Փորի փքում: Փսխում: Ջղաձղու-
լթյուններ: Ծնչապարուլթյուն: Սրտի
ուժեղ խփոց:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ՀԱԿԱԹՈՒՅՆԸ

Ներս ընդունելու՝ զերչալի ձեթ:
Տաքացնել մարմինը (փաթաթել, ջե-
ռակներ): Կանչել շտապ բժշկական
օգնություն:

Պերկ կապել կծած տեղի վերևից:
Վերքն այրել յողի թուրմով: Ներս
ընդունելու՝ վալերիանի կաթիլներ:
Հասցնել բուժական հիմնարկ:

Փսխում առաջ բերել: Ներս ըն-
դունելու տալ կրամալի կլեյստեր
(1—2 թեյի գդալ կրամալը յեփել
1 բաժակ յեռացրած ջրի մեջ) կամ
ալքալտեր (1 սեղանի գդալ ալյուր
1 բաժակ ջրի մեջ), կամ կարտոֆիլի
ալյուրե, կամ 3—5 կաթիլ անուշադրի
սպիրտ կես բաժակ ջրով, կամ էլ
կաթ:

Փսխում առաջ բերել: Ազատ ուզ
տալ: Ներս ընդունելու տալ տաք
խմիչք, տաք կաթ, տալ նաև վա-
լերիանի կաթիլներ:

Դլխի վրա սառը թրջոցներ: Ծնչա-
ուլթյունը խանդարվելիս՝ արհես-
տական շնչառություն: Բժիշկ կան-
չել կամ՝ հիվանդին հիվանդանոց
հասցնել:

ԹՈՒՅՆԻ ԱՆՈՒՆԸ ՅԵՎ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ
ՆՇԱՆՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ
ՀԱԿԱԹՈՒՅՆԸ

ԿԱՐԲՈՒԱԹՈՒՒ

Բերնից կարբոլաթթույի հոտ:
Այրվածքներ բերնում և ըմպանում
սպիրտակ կեղանքների նման: Դեմքի
զուռնաթափություն: Քնկոտ վիճակ:
Մուգ մեղ: Ջղաձղուլթյուններ:

ՄԿՆՈՒԵՂ

Փսխում, լուծ բրնձածև կղկղան-
քով արյան հետ խառն: Ցավեր փո-
րում: Ծրթունքների և ձեռքերի
կապտում: Ջղաձղուլթյուններ սրըն-
քածիլների մեջ: Չստանցում: Գթ
տակցության կորուստ:

ԱՆՈՒՇԱՐԻՒ ՍՊԻՐՏ

Ցավ բերնում և ըմպանում: Հաղ:
Բերնից անուշադրի սպիրտի հոտ:
Փսխում արյունախառն: Թուլ
պուլս: Ջղաձղուլթյուններ:

ՆԻԿՈՏԻՆ (ՇԽԱՆՈՏ)

Սրտախառնություն: Գլխապոլույտ:
Առատ թուք: Լուծ: Ծանր զեպքե-
րում թույլ շնչառություն և գլխապո-
լթյան կորուստ:

Փսխումներ առաջ չբերել:
Ներս ընդունելու՝ կաթ, պրովան-
սի յուղ, կուլ տալ սառույցի կոոր-
ներ: Ներչնչել տալ թթվածին՝
թթվածնի բարձիկից: Հիվանդին
հիվանդանոց հասցնել:

Ներս ընդունելու՝ առատ ջուր ձվի
սպիրտակուց ավելացնելով (մեկ ձվի
սպիրտակուց մեկ բաժակ ջրին), վա-
լերիանի կաթիլներ: Ըստ կարելույն
չուտ հիվանդանոց հասցնել:

Ներս ընդունելու՝ ջուր քացախով
կամ 1/2 բաժակ արևածաղկի ձեթ:
Ներչնչել տալ տաք զոլորչի: Ար-
հեստական շնչառություն անել:
Կանչել բժշկական օգնություն:

Ներս ընդունելու՝ թունդ սուրճ:
Ապահովել թարմ ող: Գլխապոլու-
թյունը կորցնելիս, այլև շնչառու-
թյունը թուլանալիս թթվածին ներ-
չնչել տալ թթվածնի բարձիկից:
Արհեստական շնչառություն զործա-
դրել և բժշկական օգնություն կան-
չել:

ԳԾՄԲԱԹԹՈՒ

Բերանի, լեզվի և ըմպանի լորձա-
թագանքի ալրվածք: Կեղանքներ
դորջ դուրնի: Յավեր փորում: Փըս-
խում սև մասսաներով: Ջղածու-
թյուններ: Մահ սրտի կաթվածից:

ԲԱՅԱՆԱԹԹՈՒ

Ալրվածքներ բերում: Սուր ցա-
վեր փորում: Բացախի հոտ բերնից:

Փսխումներ առաջ չբերել:
Ծծելու տալ սառույցի կտորներ:
Սպիտակուցային ջուր (մեկ ձվի
սպիտակուցը մեկ բաժակ ջրին) խմել
տալ: Տալ դարեձավարի կամ վար-
սակաձավարի արդանակ: Կանչել
չտալ բժշկական ոգնություն կամ
Հիվանդանոց հասցնել:

Փսխում առաջ չբերել:
Ներս ընդունելու՝ առատ սառը
խմելիք (կաթ, սպիտակուցաջուր,
պրոփանսի յուղ): Հիվանդանոց
հասցնել:


III

ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ՓՈՒԱԴՐՈՒՄԸ

ՏՈՒԺԱԾԻՆ ԶԵՌԲԵՐԻ ՎՐԱ ՓՈՒԱԴՐԵԼԸ

Տուժածին ձեռքերի վրա փոխադրելու ամենահարմար յեղա-
նակը այսպես կոչված «փականք»՝ բարդ կամ պարզ, կազմելն է:
Բարդ «փականք» կազմելիս յերկու պատգարակի չներից

յուրաքանչյուրն իր
ձախ դաստակով բըռ-
նում է իր աջ ձեռքը,
իսկ աջ դաստակով ըն-
կերով ձախ ձեռքը (նկ.
43): Հասարակ «փա-
կանք» կազմելիս պատ-
գարակի չները պինդ
բռնում են միմյանց
դաստակները: Պատ-
գարակի չներից մեկը
ձեռքը դնում է մյուսի
ուսի վրա (նկ. 44):



ՊԱՏԳԱՐԱԿՆԵՐ

ԲԳԿԻ մատակարար-
ման մեջ ընդունված
է պատգարակների յեր
կարությունն — 221,5
սմ., իսկ լայնությունը
— 57 սմ. Դրանք կըշ-
ուում են մոտ 10 կգ:
Պատգարակները կազմ
ված են յերկու չոր-

ՆԿ. 43. ԲԱՐԴ ՓԱԿԱՆՔ:

Պատրաստ սան. պաշտ.—5

սունքերից, վորոնք բռնակ ունեն, և բրեզնտի սավանից, վոր ամբացրած և չորսունքերին: Չորսունքերը ամբացված են յերկու յերկաթյա պահանգներով, վորոնք հողակապեր (շարնիրներ) ունեն: Իրանով հնարավոր և լինում պատգարակներն հավաքել ու բաց անել:

Չորսունքերին անշարժ ամբացված են 4 յերկաթյա վոտքեր (նկ. 45): Հավաքված պատգարակներում սավանը կոլոված ու կապված և յերկու կապիչներով:



ՆԿ. 44. ՀԱՍԱՐԱԿ ՓԱԿԱՆՔ:

Պատգարակը բանալու համար արձակում են կապիչները, և ամբացնում են փակիչը՝ աջ վոտքը յերկաթյա պահանգների միացման տեղին սեղմելով: Յուրաքանչյուր անգամ պատգարակները բանալուց հետո անհրաժեշտ և ստուգել, թե արդյոք պինդ են ամբացված (փակված) փակերը:

Այն դեպքերում, յերբ պատգարակ չկա կարելի յե դրա փոխարեն ոգտապորձել դուռ, սանդուղք, լայն նստարան: Պատգարակը կարելի յե սարքել նաև ձեռքի տակ ունեցած նյութերից: Որինակ՝ պատգարակը կարելի յե սարքել յերկու ձողերից ու յերկու պարկերից: Նույն այս նպատակով կարելի յե ոգտադոր ծել ձողեր ու թուկեր, հրացաններ և զրատ (շինել):

ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՊԱՏԳԱՐԱԿԻ ՎՐԱ ԴՆՆԵՆ ՈՒ ՓՈՆԱԴՐԵԼԸ

Պատգարակային ողակը (սանպոստը) կազմված և չորս հոգուց, վորոնք համարներ ունեն ըստ կարգի՝ 1, 2, 3, 4 (նկ. 46)




ՆԿ. 45. ՊԱՏԳԱՐԱԿՆԵՐ:

Առաջին համարը—նաև ողակի հրամանատարը (սանպոստի պետը) ունի հակազգ և սանիտարի պայուսակ: Յերկուրդ համարը հազակազ ունի իր համար և մեկ պահեստի հակազգ ել՝ տուժածի համար: Յերուրդ համարն ունի հակազգ և կրում և պատգարակը: Չորուրդ համարն ունի հակազգ:




ՆԿ. 46. ՊԱՏԳԱՐԱԿԱՅԻՆ ՈՂԱԿ:

Պատգարակային ողակի (սանպոստի) կազմով գործելիս փոխադրման կարիք պահանջող տուժած լինելու դեպքում յերրորդ և չորրորդ համարները, ողակի հրամանատարի «Բանալ պատգարակը» հրամանով, բաց են անում պատգարակը: Առաջին և յերկրորդ համարներն այդ ժամանակ տուժածին առաջին ողակու թյուն են ցույց տալիս (նկ. 47): Ապա առաջին համարի՝ «Համարնե՛ր տեղեցում» հրամանով՝ յերկրորդ, յերրորդ և չորրորդ համարները կանգնում են տուժածի առողջ կողմում (յեթե տու-



Նկ. 47. ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՆ ՈՂԱԿԻ ԿԱԶՄՈՎ:



Նկ. 48. «ԲՈՆԻՐ» ՇՐԱՄԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ:

ժածը վիրավորված և ձախ ձեռքից, ապա կանգնում են տուժածի աջ կողմում): Համարները տեղեր են բռնում հետևյալ կարգով՝ յերկրորդ համարը՝ տուժածի գլխավերելք, յերրորդ համարը իրանի մեջտեղում, իսկ չորրորդ համարը տուժածի վստեքի մաս:

Առաջին համարի «Բռնիր» հրամանով համարները մեկ ծնկի յեն չոզում և իրենց ձեռքերը մըտցնում են տուժածի տակ: Յերկրորդ համարն իր ձեռքը տանում և տուժածի ծոծրակի և թիակի տակ, յերրորդ համարը՝ գոտկատեղի և ազդերի տակ, չորրորդ համարը՝ ծնկերի և սրունքների տակ (նկ. 48):

«Բարձրացրու» հրամանով բոլոր յերեք համարները միաժամանակ բարձրացնում են տուժածին: Առաջին համարը մտ և բերում պատգարակը: «Դնել» հրամանով տուժածին դնում են պատգարակի վրա:

Ապա «Համարներ դեպի պատգարակը» հրամանով յերկրորդ և չորրորդ համարները կանգնում են պատգարակի ընդհանրի մոտ միմյանց. ծոծրակի, յերկրորդ համարը պատգարակի դեմ ծայրում, չորրորդ համարը, վտքի ծայրում, յերրորդ համարը պատգարակի ձախ կողմը, իսկ առաջին համարը պատգարակի աջ կողմը (նկ. 49): «Վերցնել պատգարակը» հրամանով, համարները միաժամանակ բարձրացնում են պատգարակը և «Ուղիղ (դեպի աջ, դեպի ձախ) առաջ» հրամանով, սկսում են առաջ շարժվել:

Պատգարակի որորումից խուսափելու համար համարներն անհամաքայլ են դնում: Տուժածը, սովորաբար, պատգարակով փոխադրվում է վտքերն առաջ (նկ. 50):

Սառ կամ սանդուղի բարձրանալիս պատգարակը դարձվում է այնպես, վոր տուժածի գլուխն առաջ լինի, ըստ վորում հետևի պատգարակիչը պատգարակը ուսերի վրա յե անում, իսկ առաջինը գնացողը պատգարակը կրում է ձգված ձեռքերով (նկ. 51):

Սառից (սանդուղից) իջնելիս առաջի պատգարակիչը պատգարակն անում է ուսերի վրա, իսկ հետևինը՝ ձգում է ձեռքերը (նկ. 52):


Ստորին վերջավորությունների վրա վերքեր ունեցող տուժածին պետք է սար բարձրացնել վտքերն առաջ, իսկ սարից իջեցնելիս՝ գլուխն առաջ:

Փոսի, վոչ բարձր պատի վրայով պատգարակը հետևյալ կերպ է անցկացվում: Առաջին և յերրորդ համարներն ընդու նում են պատգարակն առաջին պատգարակիչից, վորն անցնում

և արգելքի վրայով: Դրանից հետո պատգարակը տրվում է նրան արգելքի վրայով: Առաջին և յերրորդ համարները, իրենց վրա առնելով պատգարակի ծանրութունը, հետևի պատգարակիչին



ՆԿ. 49. ՀԱՄԱՐՆԵՐՆ ԸՍՏ ՏԵՂԵՐԻ՝ ՊԱՏԳԱՐԱԿԻ ՄԱՏ:



ՆԿ. 50. ՓՈՆԱԳՐՈՒՄԸ ՀԱՐՅ ՎԱՅՐՈՎ:


հնարավորութուն են տալիս, վոր նա յեւ անցնի արգելակի վրայով: Դրանից հետո համարները դարձյալ բռնում են իրենց տեղերը:

Նշանակման տեղն հասնելիս «Դնել» հրամանով պատգարակը միաժամանակ գետին է դրվում:

Պատգարակը սանիտարական ավսումեքնային բարձելը: Պատգարակը անխտարական ավսումեքնան բռնով ումի սյ է մեքե-




ՆԿ. 51. ՓՈՆԱԳՐՈՒՄԸ ՍԱՐՆ Ի ՎԵՐ:



ՆԿ. 52. ՓՈՆԱԳՐՈՒՄԸ ՍԱՐՆ Ի ՎԱՐ:

նայի հետևի դռնով նույն յեղանակով, ինչպես պատգարակը բարձրում է յերկանիվ սայլակին (սայլին) (նկ. 53): Պատգարակային ողակի համարներից մեկը բարձրանում է ավտոմեքենայի վրա: Մնացած համարները՝ յերկուսը պատգարակի կողքից և մեկը զրա վտաքի ծայրում «Բ ոնիբ» հրամանով վերցնում են պատգարակն այնպես, վոր գլխի ծայրն ազատ մնա: «Բարձրացրու» հրամանով պատգարակը բարձրացվում է մինչև ավտոմեքենայի հատակի բարձրության:

«Դիբ» հրամանով պատգարակի գլխի ծայրի վտաքերը դրվում է ավտոմեքենայի փորատների մեջ: «Առաջ շարժիբ» հրամանով պատգարակն զգուշությամբ առաջ է հրվում ավտոմեքենայի



Նկ. 53. ՊԱՏԳԱՐԱԿԸ ՅԵՐԿԱՆԻՎ ՍԱՅԼԱԿԻՆ ԲԱՐՁՆԵԼԸ:

մեջ և պատգարակի վտաքերն ամրացվում է հատուկ ագուլցով փորատի մեջ: Յերկու հարկ բարձելիս, առաջ բարձվում է վերին շարքը:

Սանիտարական պատգարակը ավտոմեքենայից կամ յերկանիվ սայլակից (սայլից) իջեցնելիս հետևյալ հրամաններն են տրվում «Բ ոնիբ», «Առաջ շարժիբ» և «Դիբ»: Պատգարակային ողակի համարների դասավորությունը նույնն է, ինչպես և բարձելու ժամանակ: Չորս պատգարակ իջեցնելիս սկզբում ներքևիներն են իջեցվում:

Վիրավորին պատգարակներով ջերմավազոն դնելիս պատգարակի

րակի գլխի ծայրը տրվում է վազոնի դռանն ընդունող համարներից մեկին: Պատգարակը ջերմավազոն տալու ժամանակ բարձրացնելիս պատգարակի վտաքերը պետք է բարձր լինեն վազոնի հատակի մակարդակից:

Վիրավորներին վազոն դնելիս և վազոնից իջեցնելիս պատգարակային ողակի համարները դասավորությունը նույնն է, ինչ և սանավտոմեքենայի մեջ դնելիս և իջեցնելիս:

Սանիտարական գնացքների բեռնումն ու բեռնաթափումը կատարվում է այս նպատակին հատկացված պլատֆորմերում ռամպաներով: Յեթե զրանք չկան, պետք է ողավել կամրջակներով:

IV

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ-ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՐԴՈՒ ՈՐԳԱՆԻԶՄԻ ՎՐԱ

Մարդու որգանիզմի վրա իրենց ունեցած ազդեցությամբ մարտական թունավոր նյութերը (Թ. Ն.) բաժանվում են 5 խմբի:

- 1) Խեղդող Թ.Ն. (հեղձուցիչ)
- 2) Արտասովաբեր Թ.Ն.
- 3) Համաթունող Թ.Ն.
- 4) Վերին շնչառական ուղիները զբոսող (փոշտացնող)

Թ.Ն.

- 5) Մաշկային (պալարային) Թ.Ն.

Իրենց քիմիական և ֆիզիքական հատկություններով Թ.Ն. բաժանվում են յերկու խմբի՝ 1) կայուն Թ.Ն. (ԿԹ.Ն.) և անկայուն Թ.Ն. (ԱԹ.Ն.): Կայուն Թ.Ն.—զանազան առարկաներն ու մթնոլորտը տեական ժամանակով (ժամեր, օրեր) վարակելու հատկությամբ են ոժտված: Իրանց թվին և պատկանում, որինակ, իպրիտը:

Անկայուն Թ.Ն. (ԱԹ.Ն.) արագ ցնդում են ողի վերին շերտերը և դրա համար ել նրանք կարող են վարակել առանձին առարկաներն ու ողք միայն կարճ ժամանակամիջոցով (բուպեներ, վարկյաններ): Իրանց թվին են պատկանում, որինակ, ֆոսգենը, կապտաթթուն:

ԽԵՂԴՈՂ ԹՆ

Խեղդող Թ.Ն. խմբերին են պատկանում բլորը, Ֆոսգենը, դիֆոսգենը, ֆլորալիբրինը:

Քլորը գազ է, կանաչագեղնավուն գույնի, սուր, խեղդող հոտով: Քլորն ողից 272 անգամ ծանր է:

Ֆոսգենը հեղուկ է, վոք յեռում է + 80-ում փոխարկվելով գազի: Ֆոսգենի դոլորշին ողից ծանր է 31¹/₂ անգամ, ունի անհաճելի հոտ, հիշեցնում է փթած խոտի կամ նեխած մրգերի հոտը:

Դիֆոսգենը—անգույն հեղուկ է, հոտը նման է ֆոսգենի հոտին:

Քլորալիբրինը թափանցիկ, քիչ զեղնավուն հեղուկ է, վոք շատ արագ դոլորշիանում է:

Խեղդող Թ.Ն. մեջ ամենակարևորները ֆոսգենն ու դիֆոսգենն են: Այդ Թ.Ն. փոքր քանակով (կոնցենտրացիաներով) հարվածվելիս առաջ է գալիս թեթև թուքահոտություն, շնչապառություն, հազ, թեթև արտասովաբերություն: Թ.Ն. բարձր կոնցենտրացիաների (ողի մեջ Թ.Ն. մեծ պարունակում) դեպքում առաջանում է սուր շնչապառություն, տանջող հազ, դեմքի կապտացում և հետագայում կարող է թոքերի այտուց զարգանալ: Թունավորման նշանները յերևան են գալիս Թ.Ն. հարվածված միջավայրում 3—4 ժամ (ֆոսգենի դեպքում) կամ ել մեկ ժամ (դիֆոսգենի դեպքում) անալուց հետո: Քլորալիբրինի հետ միաՆալով անհապաղ զարգանում է աչքերի լորձաթաղանթի սուր արտահայտված բորբոքում:

Խեղդող Թ.Ն. ճուժածներին առաջին ոգնություն ցույց տալը: Պետք է տուժածին հազցնել պահեստի հակադազ և անհապաղ պատգարակի վրա հեռացնել նրան թունավոր վայրից ազատ ող կամ բուժկայան (յեթե դա հեռու չի գտնվում):

Տուժածից, վորը հեռացվել է քլորալիբրինից հակադազը հանվում է: Տուժածին պետք է լիակատար հանդիսատ տալ, ազատել նրան նեղող և վարակված զգեստից, թույլ չտալ, վոր մարմինը ստոի: Անհրաժեշտ է նրան տալ տաք խմիչք՝ թեյ, սուրճ (փոքր քանակությամբ բաժիններով), տաք փաթաթել: Յեթե տուժածը շնչապառ է լինում, ապա պիտի նրան թթվածին տալ թթվածնի պարեկից, կամ ել թթվածնային անոթից: Պետք է վողողել կոկորդը և աչքերը լվանալ սոդայի լուծույթով: Արհեսական օնչառություն չի կարելի անել:

ԱՐՏԱՍՎԱԲԵՐ ԹՆ

Թ.Ն. այս խմբին պատկանում են ֆլորացեսոֆենոնը յեվ բրոմբենզիլցիանիսը:

Քլորացեսոֆենոնը բյուրեղային, սպիտակ գույնի նյութ է:

Մարուր վիճակում հաճելի հոտ ունի: Գործածվում է թունավոր ծուխի ձևով:

Բրուսբեցիլիցիտինի հեշտ հալվող դեղնասպիտակավուն բյուրեղներ են անուշարույր հոտով:

Այս նյութերը ողի մեջ գոլորշու կամ ծուխի ձևով լինելիս սուր գրգռիչ ազդեցություն են ունենում աչքերի լորձաթաղանթի վրա (կոնյունկտիվա): Տուժածի աչքերում սուր ցավ ու այրոց, առատ արցունքահոսություն և լուսավախություն է առաջ գալիս: Այս յերևույթներն առաջ են գալիս հիշյալ թՆ ազդեցություններից անմիջապես հետո:

ԱՌԱՋԻՆ ՈՓՆՈՒԹՅՈՒՆ: Արտասպարեր թՆ տուժածին պետք է հակազաղ հաղցնել և թունավորված վայրից ազատ ող փոխադրել: Վարակված մթնոլորտից դուրս գալիս աչքերի գլխուկում ստվորարար արագ կերպով անցնում է առանց վարեն միջոցառումների—բավական է վոր տուժածն ինքն իր աչքերը լվանա: Յերբեմն սակայն աչքերի գրգռումը անուշ է մի քանի ժամ: Այս դեպքերում անհրաժեշտ է աչքերը խնամքով լվանալ սողայի 2% լուծույթով կամ բորաթթվով:

Աչքերի լվացումը կատարվում է հետևյալ յեղանակով:—Ձախ ձեռքի յերկու մատներով բաց են անում տուժածի կուպերը, գլուխը հետ են շուռ տալիս, իսկ աջ ձեռքով աչքի մեջ են մղում լուծույթի մեջ թրջած բամբակը: Վերջինս պետք է մղել այնպես, վոր հեղուկը թափվի աչքի ներքին անկյունը և հոսի դեպի դրսին: Հատուկ խնամքով պիտի լվանալ աչքի անկյունները:

Շնչառական ուղիները հարվածվելու նշանների դեպքում (հազ, շնչասպառություն և այլն) առաջին օգնությունն է ցույց տրվում, ինչպես այդ արվում է խեղդող թՆ թունավորվելիս և միջոցներ են ձեռք առնվում, վոր տուժածն արագ հասցվի հիվանդանոց:

ՀԱՄԱԹՈՒՆՈՂ ԹՆ

Համաթունող թՆ շարքերին են պատկանում կապտաթթուն և շմոլագաղը (ածխածնի օքսիդը):

Կապտաթթուն—արագ և ուժեղ ցնդող անգույն հեղուկ է, ունի դառը նուշի հոտ: Կապտաթթուն թունավորում է ամբողջ օրգանիզմը և առանձնապես ուժեղ վնասում է կենտրո-

նական նյարդային համակարգությունը: Որգանիզմի բջիջները կապտաթթույի ազդեցությունից կորցնում են իրենց մեջ թրթվածին ներծծելու հատկությունը, իսկ առանց թթվածնի օրգանիզմը չի կարող գոյություն ունենալ (հուսվածքային շնչառություն կաթված):

ԿԱՄՏԱԹՈՒՅՈՎ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ

Թ է թ է վ գ է պ ք է բ ու մ—դառն համ բերանում, շանդրատոց կոկորդում, դժոց ականջներում, շնչասպառություն, ցավ կրծքում, ընդհանուր թուլություն և գիտակցություն վորոշ մթազնում:

բ) Ծ ա ն բ գ է պ ք է բ ու մ.—բարձր կոնցենտրացիաների ազդեցությունից գիտակցության արագ կորուստ, ուժեղ շլաձգություններ, բիրբեր ընդլայնում, մարմնի սառում, թույլ շնչառություն, յերբեմն մի քանի բույեյում կարող է մահը վրա հասնել:

ԱՌԱՋԻՆ ՈՓՆՈՒԹՅՈՒՆ.—հեռացնել տուժածին թՆ մթնոլորտից, արհեստական շնչառություն Սիլվեստրի կամ Շեֆերի յեղանակով, արագ հասցնել բուժօգնության կայան:

Շմոլագաղը (ածխածնի օքսիդ) անգույն և անհոտ գազ է: Շմոլագաղով թունավորվելիս արյունը կորցնում է իր այն ունակությունը, վորով նա թթվածին է փոխադրում օրգանիզմի բջիջներին ու հյուսվածքներին դրանց համար հարկավոր քանակությամբ: Դրա համար էլ հյուսվածքների թթվածնային սովահարություն է առաջ գալիս:

ՇՄՈԼԱԳԱՁՈՎ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ

Թեթեվ դեպքերում—գլխացավ (առանձնապես քունքերում), սրտաթանոթություն, ընդհանուր թուլություն, շնչառության դժվարացում, մաշկի և լորձաթաղանթների վառ-կարմիր գունավորում:

Մառ դեպքերում—փոխում, սուր շնչասպառություն, սրտի սուր թուլություն, յերեռը բոսորագույն, գիտակցության կորուստ:

ԱՌԱՋԻՆ ՈՓՆՈՒԹՅՈՒՆ: Տուժածին թունավորված վայրից հեռացնել պարտադիր կերպով պտտաբակի վրա: Թունավորված վայրից դուրս գալուց հետո տուժածի վրայից հանել

հակազգայր: Հանել զգեստը և արձակել ոճիքը, արձակել կապիչները, վորպեսզի շնչառությունը հեշտանա: Տաք ծածկել և տաքացնել տուժածին: Բամբակի վրա անուշադրի սպիրտ տալ հոտոտելու:

Ծանր դեպքերում — արհեստական շնչառություն անել և տալ թթվածին $5^0/0$ ամխաթթույի խառնուրդով ու արագ կերպով տուժածին բուժողության կայան հասցնել:

ԳՐԳՈՂ (ՓՈՇՏԱՑՆՈՂ) ԹՆ

Այս խմբին պատկանում է դիֆթերիալորաքսիմը, ադամսիսը: Այս նյութերը պարունակում են մկնդեղ և գործադրվում են թունավոր ծուխի ձևով:

Դիֆթերիալորաքսիմը դեղնավուն բյուրեղներ է թույլ անհաճելի հոտով:

Ադամսիսը — դեղնականաչ բյուրեղներ է առանց հոտի: Փոքր կոնցենտրացիաներով այս նյութերը աչքերի, քթի, ըսպանի և շնչառության ուղիների սուր գրգռում են առաջ բերում: Առաջ է դալիս անզսպելի փուշտոց, հազ, արտասվահոսություն, առատ թուք, ցավ կրծքում, յերբեմն փսխում: Այս յերեվոյթներն առաջ են դալիս թՆ ազդեցությունն սկսվելուց 1—3 րոպե հետո արդեն:

Գրգռող (փուշտացնող) թՆ մեծ կոնցենտրացիաներով առաջ են բերում որգանիզմի ընդհանուր թունավորում մկնդեղով: Առաջ է դալիս փսխում, լնդացավ և հողացավ, շնչասպառություն: Քայլվածքը յերբուրն է դառնում:

ԱՌԱՋԻՆ ՈՒՆՈՒԹՅՈՒՆ: Թունավորված վայրում տուժածին հակազգայ հազցնել և հեռացնել թունավորված մթնոլորդից մաքուր ողի մեջ կամ առաջին ոգնության կայան:

Թունավորված վայրից դուրս գալուց հետո տուժածի վրայից հանել հակազգայը, վանալ քիթն ու աչքերը սողայի $2^0/0$ լուծույթով (կարելի յե և ջրով): Պետք է ներշնչելու տալ հատուկ մի խառնուրդ, վոր գտնվում է հակաքիմիական ծրարի մեջ: Վերոհիշյալ լուծույթներով պետք է բերանը վողողել տալ մի քանի անգամ:

Ծանր թունավորումների դեպքում (փսխում, յերերվող քայլվածք, շնչառության խանգարում) — անհապաղ տուժածին ուղարկել հիվանդանոց:

ՄԱՇԿԱՅԻՆ (ՊԱԼԱՐԱՅԻՆ) ԹՆ

ԹՆ այս խմբին են պատկանում իպրիսը, լյուիզիսը: Իպրիսը յուղոտ հեղուկ է թույլ հոտով, վոր մանանեթի հոտն է հիշեցնում:

Լյուիզիսը ցնդող թափանցիկ հեղուկ է: Լյուիզիտի գոլորշիները խորգենու հոտ ունեն:

Մաշկի վրա ընկնելով իպրիտն իսկույն և յեթ չի ներգործում: Իպրիտի կաթիլը մաշկի վրա ընկնելուց 2—6 ժամ հետո միայն մաշկի վրա յերևում է խիստ կարմրություն և քոր և զգացվում: 8—24 ժամ անց մաշկի թունավորված մասում առաջանում են բշտիկներ, վոր լցված են դեղնավուն հեղուկով: Այս բշտիկները յերբեմն 1—2 որ մնում են, ապա պայթում են և դրանց տակ խոց է առաջ դալիս:

Իպրիտի հանդեպ ամենազգայուն մասերը մարմնի մակերևույթի այն մասերն են, վորտեղ մաշկը ավելի բարակ է յեվ հանախ և քսնում մատների արանքները, կոնտակտները, աճուկները, ծնկատակի փոսիկները, վիզը և այլն: Իպրիտի հանդեպ շատ զգայուն են աչքերն ու շրթունքները:

Իպրիտի գոլորշիները ազդում են աչքերի լորձաթաղանթի վրա մինչև անգամ շատ փոքր կոնցենտրացիաների դեպքերում:

Իպրիտի կաթիլները կամ գոլորշիները աչքի մեջ ընկնելով բորբոքում են առաջ բերում, վոր կարող է տեսողության կորուստ պատճառել:

Իպրիտի գոլորշիները շնչառական ուղիներում և թոքերի մեջ բորբոքում են առաջ բերում: Շնչառական ուղիները իպրիտով թունավորվելու ծանր դեպքերում մահ կարող է առաջանալ:

Իպրիտով թունավորված կերակուր կամ ջուր ընդունելիս առաջ է դալիս փսխում, արնախառն լուծ և այլ ծանր խանգարումներ:

Լյուիզիսը ազդում է մաշկի և լորձաթաղանթների վրա իպրիտի նման, բայց լյուիզիտի ազդեցությունը, ի տարբերություն իպրիտից, յերևան է գալիս կաշվի վրա ընկնելուց քիչ ժամափաթից, յերևան է գալիս կաշվի վրա ընկնելուց քիչ ժամանակ անց: Բացի այդ լյուիզիտը ավելի խոր ու ավելի ուժեղ է նակ անց: Բացի այդ լյուիզիտը ավելի խոր և մյուս փափուկ հյուսվածքներին: Կաշվի վրա ազդելիս լյուիզիտը վնչ միայն կարվածքներին, այլ և ուժեղ այտուց է առաջ բերում: Լյուիզիտի մրություն, այլ և ուժեղ այտուց է առաջ բերում: Լյուիզիտի գոլորշիները ազդում են խեղդող թՆ պես:

Ի պրիտով վնասվածներին առաջին ոգնուրյուն ցույց տալը: Ի պրիտով վնասվածին պետք է հակազդող հազցնել և հեռացնել թունավորված վայրից, ուղարկելով վնասման կայանը:


Յեթե տուժածի յերեսը ցնցուղված է ի պրիտով, ապա հակազդող հազցնել չի կարելի:

Ի պրիտի առանձին կաթիլները, վոր ընկել են մարդու մաշկի վրա, անհրաժեշտ է անմիջապես հեռացնել: Յեթե հակաքիմիական ծրար չկա, ապա դա արվում է մաշկի վրա դոզուլո-թյամբ հիդրոսոկոպիկ բամբակի կամ մարլայի կտորներ զնելով: Ի պրիտի կաթիլը վերցվում է ինչպես թանաքի բիծը և վոչ մի դեպքում նա չպիտի քսվի մաշկի հարեան մասերին: Թունավորված բամբակն այրվում է: Ի պրիտի կաթիլը հեռացնելուց հետո մաշկի այս մասը տրորում են 5—10 րոպե մի քանի բամբակի զնդիկներով, վորոնք պիտի ներծծված լինեն բենզինով կամ կերոսինով:

ՀԱԿԱԻՊՐԻՏԱՅԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱՐ

Ի պրիտով թունավորված մաշկի մասը նախնական մշակման յենթարկելու համար կան հակաիպրիտային անհատական ծրարներ:

Հակաիպրիտային ծրարը մետաղյա (թիթեղից) մի տուփ է ազատ հանվող կափարիչով: Կափարիչի ներսի կողմում հայելի կա, վորով մարդ կարող է նայել յերեսին, յեթե դեմքի վրա ի պրիտի կաթիլներ են ընկել: Տուփի մեջ կա բամբակի 20 տամպոն, վորոնք թրջված են կերոսինով և միմյանց հետ կապված են թելով, միմյանցից 15 սմ հեռավորությամբ: Այս թելով տամպոնները հանվում են տուփից հերթականորեն (նկ. 54) Տամպոնն ոգտազործելուց հետո թելը կտրելու համար տուփի դրսի մասին զսպանակ է կպցված:



Նկ. 54. ՀԱԿԱԻՊՐԻՏԱՅԻՆ ԾՐԱՐ:

Հակաիպրիտային ծրարից ոգտվում են հետևյալ ձևով:—Աջ ձեռքով դուրս են հանում առաջին տամպոնը: Առաջին տամպոն-

նը հետևյալ տամպոնին ամրացնող թելը կտրում են դսպանակով, և առաջին տամպոնով, մզելով լուծիչը, դոզուլոթյամբ վերցնում են կաշվի վրայից ի պրիտի կաթիլը: Հետևյալ տամպոնները հանվում են թելի միջոցով, վորպեսզի ի պրիտով վարակված մասերը տուփի մեջ չմտցվեն: Ի պրիտի կաթիլները հեռացնելուց հետո մաշկը վնասվում է տամպոնները մաշկի վրա մզելով:

Ամբողջ մարմինը ի պրիտով բռնված լինելու դեպքում անհրաժեշտ է ամբողջ մարմինը լվանալ տաք ջրով ու սապոնով: Ի պրիտով թունավորվածին առաջին ոգնուրյուն ցույց տվող անձինք էլ պետք է լրիվ սանձակման յենթարկվեն վնասման այս նում:

ԱՆՆԻՏԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՅԱՆ (ՍՄԿ)

Ի պրիտով բոլոր թունավորվածները սանիտարական մշակման են յենթարկվում (լվացում, շորերի դեզազացիա): Այս նպատակի համար հատկապես կահավորված սանիտարական մշակման կայանը (ՍՄԿ) տեղավորվում է, նայած պայմաններին, վրան ներում, բնակելի շենքերում, իսկ ամառը, նաև բացօթյա:

ՍՄԿ պետք է ունենա:

1) Հանգերձարան, վորտեղ հանվում են շորերը, վորտեղ մանները և նախնական մշակման են յենթարկվում մաշկի վնասված մասերը հատուկ հեղուկներով, վորոնք լուծում և չեղոքացնում են թն:

2) Ցնցուղարան թունավորվածներին ջրով ու սապոնով լվանալու համար:

3) Հագուստարան, վորտեղ սանձակումն անցնելուց հետո թունավորվածները հազնում են մաքուր սպիտակեղեն, վորտեղ ման:

ՍՄԿ վոչ հեռու հատուկ տեղ է հատկացվում թունավորված առարկաները, դեղքերը և հանգերձանքները դեզազացիա յենթարկելու համար:

Կայանում սանձակման պրոցեսն սյնպես է կադմակերպվում, վոր մաշկային (պալարային) կայան թն (ի պրիտով, լուծիչի տով) վնասվածը հաջորդաբար անցնում է մշակման բոլոր ետապները չվերադառնալով այն սենյակները կամ այն տեղը, վորտեղով նա արդեն անցել է:

ՀԱՎԱՔԻՄԻԱԿԱՆ ՊՍՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԹՆ պաշտպանվելու հիմնական տեխնիկական միջոցները հանդիսանում են անհասակամ պաշտպանություն և խմբային պաշտպանություն միջոցները:

Անհասակամ պաշտպանության միջոցները յուրաքանչյուր մարդուն առանձին-առանձին պաշտպանելու համար են: Այս միջոցներին են հակազգեբրը, պաշտպանողական դեխտը, պաշտպանողական թիկնոցը և այլն:

Խմբային պաշտպանության միջոցները գործադրվում են ԹՆ մի անգամից մեկ թումբ մարդկանց պաշտպանելու համար: Այս միջոցների մեջ են մտնում գազապատանները:

Բացի այդ միջոցներից կան նաև դեգազացիայի միջոցներ, այսինքն ԹՆ բռնված վայրերը, շենքերը և դանդաղան առարկաները անփրաս դարձնելու միջոցները:

ԲՆ ՀԱՎԱԳԱՁԻ ԿԱԶՍՈՒԹՅՈՒՆԸ

ԲՆ հակազգեբը ծառայում է շնչառություն որդանները, աչքերը և յերեսի մաշկը ԹՆ պաշտպանելու համար:

Նա պաշտպանում է այժմ քիչ թե շատ հայտնի բոլոր ԹՆ, բացի ածխածինի ոքսիդից: Վերջինիցս պաշտպանվելու համար կիրառվում են հատուկ հակազգեբեր, որինակ, մեկուսացնողներ:

ԲՆ հակազգեբի հիմնական բաղկացուցիչ մասերը յետևյալներն են (նկ. 55):

Դիմակ-սաղավարտ, մետաղյա պահուսակ ունեցող ակնոցներով:

2. Փողակ-յեռաբաշխիկ, «վորը ծառայում է սաղավարտ-դիմակը դարսավոր խողովակի հետ միացնելու համար:


3. Արտաբնական կափարիչը բարակ ուտինից է մետաղյա շրջանակով:

4. Դարսավոր խողովակը—ուտինից է արիկոտածային ծածկով: Ծառայում է հակազգալին տուփը փողակ-յեռաբաշխիկի հետ միացնելու համար:

5. Հակազգալին սուփը ձվածիք ձև ունի, սպիտակ թիթեղից է: Տուփի հատակում կա անցք, վորի մեջ հազցված է մետաղյա վեցանցքանի թցան: Խցանի կենտրոնում գտնվում է շտիֆտիկը, վորի վրա հազցված է սեղինն կտր ներշնչական կափուլը: Վերին մասում տուփը բուկ ունի: Դրան ամրացվում է դարսավոր խողովակը: Տուփի ներսում զետեղվում է ակտիվացված ածուխը, ածուխին սեղմող դապանակը, հատուկ բամբա-

կի ֆիլտրը ընդդեմ ծուխերի և մառախուղածե ԹՆ, քիմիական կլանիչը (հատուկ հատիկներ) և շտամպված կամարածե ցանցը:

6. Բրեգեմսի պահուսակն ունի յերկու բաժանմունք՝ մեկը հակազգալին տուփի համար իսկ յերկրորդը սաղավարտի և դարսավոր խողովակի համար: Տուփի բաժանմունքի ցածում զբաղեցվում է այն դապանակը, վորը պաշտպանում է տուփին իրատ հարվածներից, հրոցներից և թույլ է տալիս, վոր ոգն ազատ



Նկ. 55. ՀԱՎԱԳԱՁ:

1. Սաղավարտ-գլխակ, 2. մասնածե յելուստ, 3. փողակ-յեռաբաշխիկ,
4. արտաշնչական կափուլը, 5. դարսավոր խողովակ, 6. տուփի բուկը, 7. Տուփ,
8. կլանիչ (ածուխ) 9. Ֆիլտրը, 10. դապանակ, վորը սեղմում է կլանիչին, 11.
- կլանիչ (քիմիական), 12. կլանիչ (ա)ուխ, 13. ցանց, 14. ներշնչական կափուլը:

թափանցի ստորին անցքի մեջ: Պահուսակին կարված է փոկը
 յերկու ճարձանդներով: Պահուսակի վերին մասին կարված է
 քուղ, իսկ կողքերին յերկու կողմից ել՝ մեկական ուղ: Վերեվից
 պահուսակը փակվում է բրեզենտե կափույրով:

ՀԱԿԱԳԱՋԻՑ ՈՐՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հակազագ կրելու յերեք դրություն կա:—

1) Յեթե քիմիական հարձակման սպանոտալիք չկա, ապա
 հակազագը կրում են «յերբային» դրուրյամբ, ձախ կողքին, փոկը
 դցած աջ ուսից:

2) Յեթե քիմիական հարձակման վտանգ կա, հակազագը
 «պատրաստ» վիճակի յե բերվում: Արձակվում է պահուսակի կա-
 փույրը: Պահուսակի քուղը դցվում է ձախ ողին, տարվում է իրա-
 նի շուրջը և ամուր կապվում է աջ ողին այնպես, վոր հակազա-
 գը շարժումների ժամանակ դես ու դեն չգնա կողքի վրայից:

«Քիմիական տագնապ» աղբյուրանով և ողում կամ հողի վրա
 թՆ յերեալու բոլոր դեպքերում հակազագը հաղնում ու կրում
 են «մարտական» վիճակում:

Ի՞նչպես հակազագը «յերբային» դրուրյունից «պատրաստ»
 դրուրյան փոխանցել:

«Յերթային» դրությունից «պատրաստ» դրության յե փո-
 խանցվում հակազագը հետևյալ գործողություններով:

1. Չեռքերն ազատվում են բոլոր առարկաներից:
2. Արձակվում է պահուսակի կափարիչը:
3. Հակազագն ամրացվում է քուղով:
4. Պատրաստվում են գլխարկը հանելու:
5. Վերցվում են այն առարկաները, վորոնցից առաջ ազատ-
 ւած էին ձեռքերը:

Ի՞նչպես փոխանցել հակազագը «մարտական» դրուրյան:

«Պատրաստ» դրությունից մարտական դրության հակազա-
 գը փոխանցվում է հետևյալ գործողությունների ամբողջությամբ:


1. Պահել շնչառությունը:
2. Չեռքերը բոլորովին ազատել բոլոր առարկաներից:
3. Սաղավարտը բռնվում է կզակային մասի հաստ յեղբից՝
 բութ մատները դրսից, իսկ մնացած մատները ներսից:
4. Հանվում է սաղավարտը պահուսակից և մոտեցվում է
 դեմքին:

5. Ծնոտը առաջ են բերում, դնում են սաղավարտի մեջ և
 մատները շարժելով սաղավարտի յեղբերով վարից-վեր, բարձրաց-
 նելով գլխարկը բթամատներով և ցուցամատներով:

6. Սաղավարտը քաշում են գլխին:
7. Հագնում են գլխարկը:
8. Խորը արտաշնչում են կատարում և սկսում են հավասար

շնչել (նկ. 56):

9. Չեռքն են վերցնում առարկաները:



Նկ. 56. ՀԱԿԱԳԱՋԻ ՀԱԳՆԵԼԸ:

Հակազագը «մարտական» վիճակից «պատրաստ» վիճակի
 անցելը:

Հակազագը «մարտական» վիճակից «պատրաստ» վիճակի
 յե փոխանցվում հետևյալ գործողություններով:

1. Չեռքերն ազատում են առարկաներից:
2. Ձախ ձեռքը դրվում է խողովակի վրա այնպես, վոր
 բթամատերն ու ցուցամատները բռնեն սաղավարտի բուկը:
3. Աջ ձեռքով բարձրացվում է
 գլխարկը:

4. Ձախ ձեռքով փողակը առաջ
 և վերև է տրվում այնպես, վոր ծնո-
 տըն ազատվի սաղավարտից, իսկ ավե-
 լի ևս առաջ տալով, սաղավարտը
 դուրս է դալիս գլխից:

5. Սաղավարտը հանվում է գըլ-
 խից:

6. Հագնում են գլխարկը:



Նկ. 57. ՀԱԿԱԳԱՋ ՀՍՆԵԼԸ:

7. Սաղավարտը շուռ են տալիս հակառակ յերեսով, թաշկի- նակով կամ շորով սրբելով չորացնում են պատերը, ակնոցների շրջանակները և փողի վերին ցցվածքն աշնպես, վոր ներսի մասե- բում խոնավություն բոլորովին չմնա:

Դրանից հետո սաղավարտը մնում և բացված վիճակում առ ժամանակ չորանալու համար (ձմեռը սաղավարտը դրվում և ծոցը):

8. Այլ ձևերով վերցվում և սաղավարտն ակնոցներից, իսկ ձախով վերին հաստ յեղրից: Ապա ծալում են սաղավարտը:

- ա) յերկտակ (յերկայնքի), ծածկելով աջ ապակին:
- բ) լայնքի, ծածկելով ձախ ապակին:
- գ) փողակի մոտից—դեպի դաշտի կողմը (իրենից):

9. Ձախ ձևերով դարսավոր խողովակը վերցվում և պահու- սակի փոքր բաժանմունքում մինչև հատակը և ալ ձևերով տե- դավորվում և փողակը սաղավարտի հետ (ներշնչական կափույ- րը ուղղված և ձախ, կզակային մասը վերև և ընկնում):

10. Ձևերն են վերցնում առարկաները:

Յեթե հակադաղը պետք և փոխանցել «յերթային» վիճակի- ապա փողն արձակվում և և կծկված ձևով դրվում և պահուսակի մեջ: Պահուսակի կափույրը կոճկվում և:

Ինչպես ոգսվել հակադաղից, յերթ ևս համկարժ փշանում և բունավորված ոգում:

Ամենից առաջ պետք և արագ վորոշել, թե ինչ վնասվածք և ստացել հակադաղը:

Հակադաղը հետևյալ վնասվածքները կարող և ունենալ.

1. Սաղավարտի պատռում:
2. Ակնոցների սմբողջականության թախտում:
3. Դարսավոր խողովակի պատռումներ:
4. Տուփի կտրում:

Յերթ սաղավարտը քիչ և պահուսված, դեմքին և գլխին քիպ աննելու տեղերում, ապա սաղավարտի պատռված տեղը քիպ պի- տի սեղմել ձեռքի ափով և հանգիստ շնչել բերանով:

Իսկ յերթ սաղավարտը ցոտ և պահուսված կամ յերթ վնասվել են ակնոցները, պետք և պահել շնչառությունը, աչքերը խփել, հանել սաղավարտը, բերանն աննել յեռարաշխիկի բուկը, ձեռ- քով բռնել-սեղմել քիթը և հանգիստ շնչել:


Յերթ պահուսվել և դարսավոր խողովակը, պետք և պահել շնչառությունը, հանել սաղավարտը, միաժամանակ սխմել աչքե- րը, հանել դարսավոր խողովակը տուփի վրայից, հանել տուփը պահուսակից, տուփի բուկը աննել բերանը, բարձրացնել ներշնչ- ական կափույրը (նրա տակ վորեն փայտե շուղ դնելով), և քիթը ձեռքով սեղմելով, հանգիստ շնչել բերանով:

Յեթե կտրվել և տուփը, կարելի յե անցըր բռնել հողով, հացի միջոցով, կավով և վերևից քիպ սեղմել ափով:

ԳԱՋԱՊԱՍՏԱՐԱՆ

Գազապաստարանը թ՛ն ներսթափանցումից լիովին պաշտ- պանված շինություն և:

Սովորարար դազապաստարանը սաքքվում և նկուղային կամ կիսանկուղային շենքերում:



ՆԿ. 58 ԳԱՋԱՊԱՍՏԱՐԱՆ

A և A₁—տրտաքին և ներքին վարագույրներ, B և B₁—շրջանակներ, վորոնց ամրացվում են վարագույրները, C—պարզոն (ֆիլտր), D—ոգափոխիչ հարձարան:

Պատերը, հատակն ու առաստաղը թ՛ն համար պետք և լինի միանգամայն անթափանց:

Գազապաստարանները լինում են յերկու տիպի.— հերմետիկ և ոչափոխվող:

Ոչափոխվող գազապաստարան ողը մտնում և առանձին թու- դովակի միջոցով, վորն ողը թ՛ն-ից մաքրող հատուկ ֆիլտրի հետ և կապված (նկ. 58): Հերմետիկ գազապաստարանում մար- դիկ պղավում են գազապաստարանի ողի պաշարներից, վորով- հետև արտաքին ողի ներսթափանցումը վերացված և:

Գազապաստարանի մուտքի առաջ շինվում և հողմարդեկ- ներ, վորոնց ներսի դռները ծածկվում են թ՛ն համար անթա- փանցելի կտորից պատրաստված վարագույրներով: Հողմարդեկ-

ներում հարմարանքներ կան զազապաստարան մտնող մարդկանց սանիտարական մշակման յենթարկելու համար: Գազապաստարանի տարողութունը հաշվելիս նվազագույն նորմա յե վերցվում 2—2 1/2 խորանարդ մետր ող 1 մարդուն մեկ ժամում:

ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՀԱՐՄԱՐՅՈՒՄԸ ԳԱԶԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թունավորող նյութերից մարդկանց ժամանակավորապես պաշտպանելու համար ապաստարանի համար կարելի յե հարմարեցնել բնակելի տան վորես սենյակ: Ապաստարանի համար հատկացվող սենյակը պետք է ամուր պատեր, սարք ու առանց ճեղքերի առաստաղ ու հատակ է, ըստ կարելույն, քիչ լուսամուտներ և դռներ ունենա: Վորքան կարելի յե քիչ խծծվում է հատակը, առաստաղը, պատերը, ողափոխիչները, վառարանները, լուսամուտները, դռները և ձեփվում են յեղած բոլոր ճեղքերը:

Վառարանների դռակները, ողափոխիչների ցանցերը սուրնձվում են հաստ թղթով, Հատակի և առաստաղի ճեղքերը խնամքով ձեփվում են: Լուսամուտների ապակիներին թուղթ է կըպցվում:

Ողային քիմիական հարձակման ժամանակ դռները և լուսամուտները ծածկվում են վերմակներով: Դադարեցվում է վառարաններ ու խոհանոցի սալերը վառելը:

Անհրաժեշտ է ավազի պաշար և առաջին ողնության դեղարկղ պատրաստել:

ԱՆՆԴԱՍԹԵՐՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄԸ ԹՆ ԵՐԻՑ

Անկայուն թՆ (ֆոսգեն, դիֆոսգեն) սննդամթերքները վարակելիս կերակուրը պետք է անֆուս դարձվի հովահարությամբ մինչև հոտ չգալը: Կայուն թՆ (իպրիտ) դոլորչիները համարյա չեն թունավորում սննդամթերքներին և վերջիններս կարելի յե գործածել այնքան հովահարելուց հետո, մինչև վոր վերանա թՆ հոտը:

Կաթիլահեղուկ իպրիտով և արսիններով (փոշտացնող թՆ) թունավորված սննդամթերքները պիտանի չեն դործածության համար: Դրանք պիտի վոչնչացվին:

Այն ջուրը, վորի մեջ իպրիտ կամ արսիններ են թափվել

չի կարող գործածվել վոչ խմելու, վոչ կերակուր յեփելու և վոչ էլ լվացքի համար:

Առատաջուր և արագահոտ գետերից տնտեսական կարիքների համար ջուր կարելի յե վերցնել դիտի վարակված մասերի թունավորումից 6—8 ժամ հետո միայն (հոսանքից վեր):

Սննդամթերքները թՆ վարակվելուց պաշտպանելու համար գործ են անվում յուղով ձծված հատուկ բրեզկետներ, ձյութած և մոմած թուղթ, վորոնցով ծածկվում են սննդամթերքները: Մթերքները պահելու համար գործածվում են հերմետիկը: Մթերքները պահելու համար գործածվում են հերմետիկը: Ծածկվող արկղներ, վորոնք դրսից պետք է յուղաներկված լինեն: Ջրհորները, ջրի տակառները և բակերը քիպ ծածկվում են կափարիչներով: Տափաշիչերը ամուր լոցանվում են:

ԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԹՆ-ԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼԸ ՅԵՎ ԴԻԱԴԵԳԱԶԱՑԻԱՆ

Բուժական գույքը կայուն թՆ պաշտպանելու համար դարսվում է հատուկ արկղների մեջ կամ էլ ծածկվում է բրեզկետներով ու հատուկ ծածկույցներով:

Դեղորայքի և վիրակապային նյութերի փոքր քանակությունները կթՆ թունավորվելիս վոչնչացվում են:

Իսկ յեթե թՆ համար թափսնցելի տարաներում (թուղթ, գործվածք) յեղած դեղորայքի մեծ քանակություններ են վարակված, ապա այս դեղորայքը ուղարկվում են հատուկ լաբորատորիաներ հետազոտությամբ վորոշելու համար, թե արդյոք դրանք կարելի յե ողտագործել: Վիրակապային նյութը, մետաղյա գորկարելի յե ողտագործել: Վիրակապային կարող են տարբեր մեթոդներով դեֆագացվել: Դեֆագացման բոլոր մեթոդների դեպքերում դիմում են հովահարության, յեռացման և այնպիսի հատուկ հեղուկներով լվանալուն, վորոնք լուծում ու վոչնչացնում են թՆ-երին:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մարդկանց առողջապահությունն զգալի չափով կախված է նրանց բնակարանի վիճակից: Կուտակվածությունը, վատ ոդափոխությունը և բնակարանի կեղտոտ վիճակը վնասակար ազդեցություն են ունենում առողջության վրա:

Մարդու ներշնչած ոդը շատ անթափանց (4,4 %) և ջրային գոլորշիներ և պարունակում: Շատ անթափանց և թոնավություն պարունակող ոդն առողջության համար վնասակար է: Վորքան ավելի շատ մարդ է ապրում վատ ոդափոխվող բնակարանում, այնքան նրա մեջ ավելի յե լինում անթափանց և թոնավություն: Բնակարանի մեջ շատ թոնավություն և կուտակվում նաև մարմնի մակերեսից անընդհատ քրտինք գոլորշիանալու հետևանքով:

Մարդիկ, բացի դրանից, ողին նաև ջերմություն են տալիս: Չորափոխվող, մարդկանցով լեփ-լեցուն բնակարաններում ողի ջերմությունը խիստ բարձրանում, ողը ծանրանում է: Բնակարանը յեթե շարունակ խեղդող ոդ է ունենում, ապա դրանում ապրողների առողջությունն աստիճանաբար քայքայվում և գլխացավ և առաջ գալիս, աշխատունակությունը պակասում է, ախորժակը փակվում է:

Նեղ և խեղտուկ բնակարանները զանազան վարակիչ հիվանդություններ՝ գրիպ, դիֆտերիա, տուբերկուլյոզ՝ տարածվելու համար բարենպաստ պայմաններ են առաջ բերում:

Դրա համար ել բնակարանին առաջադրված կարևորագույն պայմաններից մեկը դա այն է, վոր նա պարբերաբար ոդափոխվի և հարկ յեղած մաքրություն ունենա:

Փակ բնակարանի մեջ ողի քանակը կախված է սենյակի տարածությունից (նրա ծավալից):

Սենյակի մեջ ողի ծավալը, խորանարդ մետրով արտահայտված, կոչվում է խորանարդակ (кубатура):

Սենյակի խորանարդակը վորոշելու համար պետք է վորոշել նրա յերկարությունը, լայնությունը, բարձրությունը և ապա այդ մեծությունները բազմապատկել միմյանց վրա:

Որինակ՝ սենյակի յերկարությունը 6 մետր է, լայնությունը՝ 4 մետր, բարձրությունը 3 մետր: Այսպիսի սենյակի խորանարդակը կլինի $6 \times 4 \times 3 = 72$ խոր, մետր:

ՈՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆ

Ողափոխություն է կոչվում սենյակից փչացած ողի հեռացումը յեկ դա դրսի մափառ ողով փոխադրվումը:

Բնակելի սենյակներում ողը փչանում է մարդկանց շնչելու, մարմնի և շորերի վրայից գոլորշի առաջանալու, սպիտակեղեն լվանալու և սենյակում չորացնելու, նավթի լապտերներ և պրիմուսներ և այլն վառելու հետևանքով:

Ողանցքները 5—10 րոպեյով սովորական բաց անելը բավական չէ: Ողանցքներն ավելի յերկար ժամանակով պիտի բանալ, նայած թե բնակարանը վորքան ծավալ ունի, քանի հողի յեն ապրում և ողն ինչ ջերմություն ունի: Վորքան ավելի մեծ է սենյակը, վորքան ավելի մարդիկ են ապրում նրանում և վորքան բարձր է դրսի ողի ջերմությունը, այնքան ավելի հաճախ պիտի բաց անել ողանցքները և այնքան ավելի յերկար ժամանակ դրանք պիտի բաց մնան:

Հանրակացարաններում ողանցքները պետք է որական յերկու անգամից պակաս (առավոտյան և յերեկոյան) և ամեն անգամ մեկ ժամից պակաս ժամանակամիջոցով չբանալ:

ՋԵՌԱՅՈՒՄ

Բնակարանների նորմալ ջերմությունը (ողի բարեխառնությունը) պիտի լինի 18° ըստ Ցիլսիուսի: Աշխատանքի սենյակներում ջերմությունը պիտի ավելի ցածր լինի:

Ջեռուցումը լինում է կենտրոնական և տեղական: Տեղական ջեռուցման համար ծառայում են հոլանդական ուտերմարկյան և շարժական ժամանակավոր վառարանները:

Հոլանդական վառարանները զանազակ են տաքանում, բայց յերկար ժամանակ են տաքություն պահում և բնակարանին հավասարչափ ջերմություն են տալիս:

Ուտերմարկյան վառարանները շինվում են աղյուսից՝ գլա-

նաձև են և դրսից թիթեղով են պատվում: Ուտերմարկյան վառարանները հողանգականից ավելի արագ են տաքանում և նույնպես յերկար են տաքություն պահում:

Փամանակավոր շարժական գառարանները քիչ են պիտանի բնակարաններ տաքացնելու համար, վորովհետև դրանք արագ սառում են, բավականին հավասարաչափ ջերմություն չեն տալիս, պատերի վրայի փոշին խանձվում, ու ցնասակար գազեր են առաջ գալիս:

Տեղական ջեռուցման բոլոր տեսակների պայմաններում պահանջվում է խնամք ունենալ վառարանների նկատմամբ: Առանձնապես կարևոր է, վոր ծխնելույզը ժամանակից առաջ չըփակել, վոր ամխահոտ առաջ չգա:

Կենտրոնական ջեռուցումը մի շարք հարմարություններ ունի: Այս դեպքում այլևս կարիք չի լինում բնակարանը վառելիք բերել, սենյակները չեն կեղտոտվում, ամխահոտի վտանգ չի լինում:

Կենտրոնական ջեռուցման լավագույն տեսակը դա ջրային ջեռուցումն է:

Ջրային ջեռուցումը շատ ուշադիր խնամք է պահանջում, վորովհետև խողովակների մեջ ջուրը սառելիս դրանք տրաքում են:

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բնակարաններում և աշխատանքային շենքերում լուսավորությունը մեծ ազդեցություն է ունենում մարդկանց առողջության և աշխատունակության վրա: Ամեն վոր գիտի, թե վորքան մարդ աշխուժ է զգում իրեն արևի լույսով առատորեն վողողված սենյակում: Մութ բնակարաններում տարածվում են յերբխանների ուխիտ, թորախտ, արյան ընդհանուր պակասություն և այլ նման հիվանդություններ:

Լուսավորությունը կարող է լինել բնադան (արեգակի) և արհեստական (լուսավորող հարմարանքներով):

Ամենից ավելի լուսավոր են այն շենքերը, վորոնց լուսամուտները նայում են դեպի հարավ-արևելք և հարավ-արևմուտք և վորոնց առաջ արևի կողմից բարձր շենքեր չկան:

Բնակարանի բնական լուսավորությունը կախված է նաև լուսամուտների թվից և ամեն մի լուսամուտի մակարդակից: Վորքան շատ են լուսամուտները և վորքան ավելի յե յուրա-

քանչյուր լուսամուտի մակարդակը, այնքան ավելի լույս է թափանցում բնակարանի մեջ:

Սենյակի բնական լուսավորության մեծությունը վորոշվում է լուսամուտների ապակեպատ մակերեսի և հատակի մակերեսի հարաբերությամբ: Բնական լուսավորության հարաբերությունը լավ, բնական լուսավորության է ստանում, յեթե այս հարաբերությունը կազմում է 1:10, լուսամուտների բոլոր ապակեպատ մակերեսը պետք է հատակի մակերեսի մեկ տասերորդականից պակաս չլինի: Դպրոցներում այս հարաբերությունը պետք է լինի 1:5:

Շատ կարևոր է, վոր լուսամուտի ապակիները բացարձակապես մաքուր պահվեն: Սենյակի բնական լուսավորման համար նշանակություն ունի պատերի և տաստաղի գույնը: Սպիտակ գույնի դեպքում լուսավորումն ավելի ուժեղ է լինում:

Արհեստական լուսավորման հետևյալ ձևերը կան՝ նավթի, գազային, էլեկտրական յեվ մովի:

Մոմերը թույլ լույս են տալիս և փչացնում են սենյակի ողջը:

Նավթի լուսավորությունը—ողջ փչացնում է մրտաելով տաքացնում է սենյակը, վտանգավոր է հրդեհի կողմից և մեծ սենյակներ չի կարող լուսավորել:

Նավթի լուսավորման դեպքում պետք է զգույշ լինել: Գազային լուսավորումը վառ լույս է տալիս, բայց դա վտանգավոր է թունավորման և պայթման կողմերով:

Ամենահարմարը էլեկտրական լուսավորությունն է. դա տալիս է հավասար լույս, չի փչացնում ողջը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՅԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՄԱՔՐԵԼԸ

Աշխատանքային ու բնակելի սենյակները պետք է ամեն որ սրբել: Հատակներին պետք է նախապես շաղ տալ թաց սղոցուկ և ապա սրբել կամ պետք է մաքրել թաց շորով, վոր փոշի չըբարձրանա:

5—6 որը մեկ անգամից վոշ պակաս պետք է բոլոր սենյակների հատակները լվանալ: Բանվորական սենյակներում պետք է ամեն որ գործիքների, դաղբյուրների, կարասիքի և այլն վրայից փոշին մաքրել թաց շորով: Ամսական մեկ անգամից վոշ պակաս պետք է պատերի ու տաստաղի փոշին սրբել:

Աշխատանքային ու բնակելի սենյակները հատակին ծխա-

խոսանքի մնացորդներ չպիտի գցել: Զի կարելի թքել հատակի վրա:

Մաքրելու ժամանակ աշխատանքային ու բնակելի սենյակները պետք է ողափոխվեն:

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԿԱՌՈՒՅՎԻ ՅԵՎ ՊԱՀՎԻ ՓԱՅՏԱԿԵՐՏ ԶՐՀՈՐԸ

Ջրհորի փայտակերտը պետք է լինի քիչ ու այնպես շինված, վոր գետնի յերեսի ջրերը չթափանցեն հորի մեջ ու չկեղտոտեն հորի ջուրը: Դա ապահովվում է նրանով, վոր ջրհորի պատերի շուրջը, գետնի յերեսից Ձ մետր խորությամբ ³/₄ մետր հաստությամբ կտվի շերտ է լցվում: Ջրհորի ջուրը պետք է դառի-թափ շինվի, թեքությունը հորից դեպի շուրջը, վոր ջուրը չլճանա հորի շուրջը և չկեղտոտվի հորը:

Փայտակերտը պետք է քիչ բերնակալ ունենա: Հորը պետք է ընդհանուր դուրս ունենա ջուր հանելու համար:

Ջրհորի շուրջը 40—50 մ. վրա չպետք է լինեն արտաքնոցներ, աղբանոցներ, գոմեր ու աղբակույտեր:

ԻՆՉՊԵՍ ՎՈՐՈՇԵԼ ՋՐԻ ՎՈՐԱԿԸ

Հորի ջրում, յեթե հորը վատ է շինված և հակասանիտաբական պայմաններումն է պահվում, կարող են գտնվել վորո՞վայնի տիֆի, արյունալուծ—գիղկենտերիայի և ստամոքսաղիքային այլ հիվանդությունների միկրոբներ:

Բացի այդ ջրի մեջ կարող են լինել հանքային խառնուրդներ, վոր պզտորություն են տալիս նրան, ջուրը կարող է կոշտ, դառնաղի լինել:

Վերջապես հորերի ջուրը պատերազմի ժամանակ կարող է թունավորված լինել կայուն թն-ով (իպրիտով):

Բոլորից լա՞ն իհարկե այն է, վոր ջուրը հետազոտվի լաբորատորիայում: Բայց միշտ էլ հնարավոր չի լինում դա անել: Այսպիսի դեպքերում սահմանափակվում են ջրի միայն հետևյալ հատկությունները վորոշելով՝ գույնը, քափանցիկությունը, հոտը յեվ համը:

Հավ խմելու ջուրը պետք է լինի վճիտ, անգույն, առանց վորև է հոտի ու հաճելի, թարմացուցիչ համ ունենա:

Ջրի պարզության վորոշումը: Ջուր են վերցնում մաքուր

բաժակի մեջ և բաժակը լրագրի վրա դնելով, ստուգում են, թե արդյո՞ք ջրի միջով կարելի յե կարգալ: Ջուրը բոլորովին պարզ է համարվում, յեթե բաժակի մեջ յեղած ջրի ամբողջ սյունի միջով կարելի յե լինում ազատ կարգալ լրագրը:

Ջրի գույնի վորոշումը: Ջուրը լցնում են մաքուր բաժակի մեջ և դա դնելով սպիտակ թերթի վրա, ջրին նայում են վերեվից բաժակի մեջ լցված ջրի ամբողջ սյուն միջով: Սպիտակ թղթի ֆոնի վրա ջրի գույնն ավելի նկատելի յե դառնում: Կեղտոտ ջուրը կարող է ունենալ դեղնավուն, կանաչավուն, կամ ել ծիածանի գույնին մոտիկ:

Հավ ջուրը վո՞չ մի գույն պիտի չունենա:

Ջրի հոտի վորոշումը: Ջուրը տաքացնում են փակված անոթի մեջ, մինչև վոր դա բոլորովին տաքանա (բայց յեռման աստիճանին չհասնի), ապա չեչիբում են և անոթը բանալով հոտ են քանին չհասնի), ապա չեչիբում են և անոթը բանալով կամ ամիակի շում: Վատ ջուրը կարող է նեխի, ծծմբաջրածնի կամ ամիակի հոտ ունենալ: Հավ ջուրը վոչ մի հոտ պիտի չունենա:

Ջրի համի վորոշումը: Ջրի համը հանձնարարվում է վորոշել նախապես տաքացնելով և միայն բոլոր մյուս հետազոտուելու նստից հետո: Համը փորձելիս ջուրը պիտի կուլ տալ:

Պղտոր ու հոտ ունեցող ջրի համը պիտի չհետազոտել: Վատ ջուրը կարող է աղի, դառն, հոտած կամ այլ համ տալ: Հավ ջուրը պիտի ունենա հաճելի, թարմացուցիչ համ:

ՋՈՒՐԸ ՎԱՐԱԿԱԶԵՐԾ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՆԱՍԱՐԱԿ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Կասկածելի (պղտոր) ջուրը կարելի յե խմել միայն անվճնա դարձնելուց հետո:

Ջուրն անփրաս դարձնելու լավագույն ձևը յեռացնելն է:

Ջուրն անփրաս են դարձնում նաև քլորակիր ոդնությամբ:

Ջրին քլորակիր ավելացնելը դա անփրաս դարձնելու նպատակով ջրի քլորացում է կոչվում:

Պղտոր ջուրը քլորացումից առաջ պետք է պարզացնել: Ջուրը պարզացնելու համար տարբեր սիստեմների քամիչներ կան: Ամենահասարակ քամիչը մաքուր, լվացված ավազով լցված փայտե տակաոն է: Այսպիսի տակաոնի մեջ լցնում են ջուրը, վորը ավազի ամբողջ շերտի միջով ծծվելով, պարզացած թափվում է տակաոնի ստորին յեղրից անցկացված ձորակից:

Ջուրը կարելի չէ պարզեցնել նաև ամանի ու լցնելով և 6-ից 12 ժամ թոզնելով: Դրա համար գործ է անվում սովորական բակ, վերի կողի պատի վրա ծորակ, իսկ հատակումն էլ անցք կա: Ծորակից բաց և թոզնվում պարզած շուրջ, իսկ հատակի անցքի միջոցով դուրս դրվում նստվածքը:

Մաքուր շուրջ քլորացման ժամանակ շատ ավելի պակաս քլորակիր է պահանջում, քան պղտորը:

Ջրի քլորացումը կատարում է հատուկ վարձեցրած պերսոնալը, վորը պիտի իմանա հաշվել, թե վորքան քլորակիր է պահանջվում ջրի ավյալ քանակի համար: Նա պետք է իմանա նաև պատրաստել քլորակիր պահանջվող լուծույթը:

Պատերազմական ժամանակ ջրի քլորացման համար քլորային տարրերիկները (ТАБЛЕТИ) են գործածվում: Յուրաքանչյուր տարրերիկը բավական է մեկ տափաշիչ (ФЛЯГА) շուր անվնաս դարձնելու համար: Տարրերիկները մարտիկներին արվում են գործածութունից անմիջապես առաջ:

ԱՐՏԱՔՆՈՑՆԵՐԻ ՅԵՎ ԿԵՂՏԱՋՐԻ ՇՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Աղտոտութունները և մարդկային արտաթորութունները լցնելու համար պետք է (յեթե կոյուզի չկա աղբահոր շինվի թրձված աղյուսից, բետոնից կամ լավ ձյութած փայտից: Վոր պեսզի աղտոտութունները չծծվեն աղբահորի պատերի և հատակի միջով ու չաղտոտեն հողն ու գրունտի ջրերը, աղբահորի պատերը կողքերից ու հատակից շրջապատում են կես մետր հաստությամբ կավաշերտով:

Կեղտաջրի հորերը (հեղուկ կեղտերի համար) շինում են արտաքնոցների աղբափուսերի պես: Արտաքնոցները և կեղտաջրի հորերը պետք է բնակելի շենքից վոչ պակաս քան 50—70 մետր հեռու լինեն:

Արտաքնոցներ և կեղտաջրի հորեր պահելու հետևյալ կանոնները պիտի պահպանել:

1. Արտաքնոցների ղոները կամ կեղտաջրերի հորերի կափարիչները պետք է միշտ քիչ փակած պահել:

2. Պետք է մաքրություն պահպանել և իր ժամանակին փոխադրել կեղտոտութունները:

3. Զկեղտոտել արտաքնոցի անցքերը, պիսուարները և հատակները:

4. Պիտուարները ժամանակ առ ժամանակ պիտի լվանալ յեռացրած ջրով:

5. Ներքին արտաքնոցները կանոնավոր ողափոխելու համար պետք է դրանց ջերմությունը 1—2 աստիճ: բարձր լինի բնակարանի ջերմաստիճանի:

Արտաքնոցներն անվարակ դարձնելու համար գործածվում է կարբոլյան թթույի 4 % լուծույթը, քլորակիրի 10 % լուծույթը կամ կրակաթը:

Կրակաթ պատրաստելու համար 10 մաս նոր հանգցրած կիրը լուծում են 40 մաս ջրի մեջ:

Կարբոլյան լուծույթ պատրաստելու համար 40 գրամ դրած կարբոլաթթուն լուծում են 100 գրամ ջրի մեջ:

ՍՆՆԴԻ ԱՌՈՂՋԱՊԱՇՈՒՅՈՒՆԸ

Մարդու կեբակուրը կազմված է սպիտներից, ճարպերից, ածխաջրատներից, ջրից և աղերից:

Սպիտներն այն նյութն են, վորոնք ծախսվում են որգանիզմի հյուսվածքների աճման և վերականգնման համար:

Ճարպերը մարդկային որգանիզմի համար ջերմության գըլխավոր աղբյուրն են հանդիսանում:

Ածխաջրատները մարդկային որգանիզմի եներգիայի գըլխավոր աղբյուրն են:

Սպիտները գըլխավորապես լինում են մսի, կաթի, ձվերի բաղադրության մեջ:

Ածխաջրատները լինում են բուսական սննդամթերքների՝ ալյուրի, շաքարի, բանջարեղենի և մրգեղենի բաղադրության մեջ:

Բացի սպիտներից, ճարպերից, ածխաջրատներից, ջրից և աղերից, կերակուրը պետք է լրացուցիչ հատուկ նյութեր պարունակի, վորոնք վիտամին են կոչվում:

Այս նյութերը գտնվում են անարատ կաթի, կարագի, ձվի դեղնուցի, լյարդի, թարմ կաղամբի, թարմ մրգերի, լիմոնի, նարինջի (ապելսինի) մեջ:

Վիտամիններից գուրկ կերակուրը գործածելը զանազան հիվանդություններ է առաջ բերում: Այսպես որինակ, յեթե մարդ թարմ բանջարեղենի մեջ պարունակվող վիտամիններ չգործածի, ապա լնդախտ (ցինդա) կառաջանա:

Սննդամթերքները պետք է լավորակ լինեն:

Սննդամթերքները պետք է լավորակ լինեն:

Սննդամթերքները պետք է լավորակ լինեն:

Մենդամթերքների լավորակութունը զանազան պատճառներից և կախված:

Այլուրի մեջ կարող և հատուկ սուենկ (սպորա) լինել, վորը շատ ծանր հիվանդութուն և առաջ բերում, վորի ժամանակ ջգածողութուններ են առաջանում, մեռնում են վերջավորութունները և հաճախ մահ են պատճառում:

Վոչլավորակ միս գործածելիս մարդ կարող և յերիզորզով, արիթմիայով, այլ և տուբերկուլոզով, խլնախտով (սապ), սիրի-րախտով և այլ վարակիչ հիվանդութուններով բռնվել:

Այս հիվանդութունները կանխելու համար սպանդանոցներում անասնաբուժական վերահսկողութուն գոյություն ունի: Վոչլավորակ միսը վոչնչացվում է: Վաճառքի յե դուրս գալիս միայն գրոշմած միսը:

Միսը կարող են կեղտոտել նաև ճանճերը, վորոնք մի շարք վարակիչ հիվանդութուններ են տարածում՝ վորովայնի տիֆ, դիֆտերիա, խոլերա:

Դրա համար ել սննդամթերքների պահեստներում, գատարոնոմիական խանութներում, ճաշարաններում, բուֆետներում և խոհանոցներում անհրաժեշտ և շարունակ պայքար մղել ճանճերի դեմ:

Հում կաթը կարող է մարդուն տուբերկուլոզով և այլ վարակիչ հիվանդութուններով վարակելու աղբյուր լինել: Կաթը յեփելիս նրա մեջ յեղած միկրոօրգանիզմը վոչնչանում են:

Ջուրը կարող է վարակված լինել վորովայնի տիֆի, խոլերայի, դիֆտերիայի և ստամոքսաղիքային այլ հիվանդութունների միկրոօրգանիզմով: Այս միկրոօրգանիզմը ջրի մեջ են ընկնում հիվանդութունների արտաթորութունների հետ: Այսպիսի ջուրը կարող է հիշյալ հիվանդութունների տարածման աղբյուր դառնալ: Դրա համար ել չի կարելի խմել հում ջուր, յեթե դա չի քննված և չի հաստատված գրա լավորակութունը:

ՄՆԵՆԴԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԼԱՎՈՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Լավ թխված հաճախի հացը պետք է թուլա գույնի, փերուն, վոչ հաստ, առանց ուռուցիկների, վոզորկի, աստիճանաբար դեպի միջուկն անցնող կեղև ունենա:

Միջուկը պետք է առաձգական լինի, հավասարաչափ ծակոտիներ ունենա և ջրմիած չլինի (без закала): Թթու ու հոտածի հոտ չպիտի ունենա: Հաճախի հացի համը դառը չպիտի լինի:

Այլուրը ատամի տակ պիտի չկրճկրճա, համ չպիտի տա ու թթու կամ հոտածի հոտ պիտի չունենա:

Հում միսը պիտի լինի առաձգական ու ձեռքի չկպչի: Թթու, փթած, նեխած հոտը վկայում է, թե միսը փչացած է: Մսի հոտն ամենից լավ զգացվում է, յերբ նրա վրա յեռման ջուր ենք լցնում: Մսի վրա ճարպը պիտի լինի թանձր, սպիտակ կամ դեղին գույնի:

Թարմ ձկան քիմուլատները պետք է վառ կարմիր իսկ թեփուկը վոզորկի, փայլուն լինի: Միսը պիտի լինի պինդ, վոսկորներին սերտորեն կպած: Մարած աչքերը, լորձուքապատ թեփուկը, դորը քիմուլատները պարզ նշաններ են, վոր ձուկը թարմ չի:

Պահածոների (կոնսերվների) փչացած լինելու հիմնական նշանը թիթեղամանի ուռած լինելն է:

ՄՆԵՆԴԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

Միսն ու հացը պետք է փոխադրվեն հատուկ սայլերով:

Միս փոխադրող սայլերը ներսից պետք է պատած լինեն ցինկած թիթեղով: Ներկայումս հաց ու միս փոխադրելու համար հատուկ փակ ավտոմեքենաներ են գործածվում:

Մենդամթերքներ տեղափոխելիս տարան պետք է մաքուր լինի ու փնասվածքներ չունենա:

Սայլերով փոխադրելիս մթերքները պետք է վերելից ու կողքերից ծածկված լինեն բրեզենտով կամ պարուսխնով:

Վճռականապես արգելվում է սայլապանների և այլ անձանց նստել սննդամթերքների վրա անգամ այն դեպքում, յեթե դրանք բրեզենտով են ծածկված:

Մենդամթերք բառնալով ու բեռնաթափելով զբաղված անձինք պետք է մաքուր խալաթ հագած լինեն: Մենդամթերքները ձինք պետք է մաքուր խալաթ հագած լինեն: Մենդամթերքները մի տեղից մյուսը ձեռքով փոխադրելիս չի կարելի դնել գետնի վրա կամ ել քարշելով տեղափոխել:

ՄՆԵՆԴԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՊԱՇՏՈՒՄԸ

Այն բոլոր պահեստները, վորոնցում մթերքներ են պահվում, պետք է որինակելի մաքրութուն ունենան:

Պահեստների ջերմաստիճանն ու խոնավութունը պետք է համապատասխանի այս տեղերում պահվող սննդամթերքների բնույթին: Շուտ փչացող մթերքները պետք է պահվեն սառցարկղերում կամ սառնարաններում:

Մենդամթերքները պետք է պաշտպանված լինեն փոշուց, կրծող կենդանիներից և միջատներից:

Պարենավորման շենքերը պետք է ապահովված լինեն համապատասխան սարքավորմամբ և ինվենտարով:

Պարենի պահեստներում աշխատող անձինք պետք է միշտ մաքուր հագնված լինեն և իր ժամանակին փոխեն ու մաքուր պահեն իրենց հատուկ հագուստը:

Այն մթերքները, վորոնք փչացել են պահելիս, պետք է անմիջապես մեկուսացնել մնացած մթերքներից և վոչնչացնել (կամ ել ուտիլիզացիայի հանձնել):

Պարենապահեստի շենքը շրջապատող բակը պետք է միշտ մաքուր պահվի:

Պարենապահեստի շենքերը պետք է հեռու լինեն աղբափոսերից, արտաքնոցներից, դոմերից վոչ պակաս քան 50—70 մետր:

ԽՈՂԱՆՈՑՆԵՐԸ, ՃԱՇԱՐԱՆՆԵՐԸ ՅԵՎ ԲՈՒՖԵՏՆԵՐԸ

ՄԱՔՈՒՐ ՊԱՇԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Խոհանոցները և ճաշարանները պետք է որինակելի կարգ ու մաքրություն ունենան:

Խոհանոցին և ճաշարանին պիտի հատկացվեն այնպիսի շենքեր, վորոնք բավականաչափ լուսավոր են և յով են սղափոթվում: Ճաշարանը պետք է հանդերձարան ունենա ճաշողների համար: Ճաշարանը պետք է ապահովված լինի լվացարաներով, ոճառով և ամեն որ փոթովոյ սրբիչներով, վոր հաճախորդները կարողանան նախքան ճաշելը ձեռքերը լվանալ:

Ճաշարաններում պետք է յետացրած ջուր լինի:

Ճաշարանները պետք է մաքրվեն նախաճաշից, ճաշից և ընթրիքից հետո, ըստ վորում ընթրիքից հետո պետք է մաքրվի հիմնականորեն՝ լվացվի հատակը, սեղանները պետք է լվանալ տաք ջրով ու սապոնով:

Բուֆետներում մթերքները պետք է պահվեն ապակեպատ վիարիներում: Խոհանոց արվող բոլոր մթերքները պետք է քըննվեն բժշկի կամ հատուկ այս նպատակի համար զատված բուժաշխատողի կողմից:

Թափուկներն ու կեղտաջրերը պետք է լցնել հատուկ կիսատակառների մեջ քիպ ծածկվող կափարիչներով:

Կողմնակի անձանց մուտքը խոհանոց պետք է արգելված լինի: Խոհանոցներում ու ճաշարաններում ծխելն արգելվում է

Խոհանոցների, ճաշարանների, բուֆետների և այլն աշխա-

տողները պետք է զիտենան առողջապահական կանոնները և դրանք խիստ կատարեն:

Հատուկ զգեստները պետք է միշտ մաքուր լինեն: Խոհարարներն ու հացթուխները պետք է բազանիք գնան ամսական 4 անգամից վոչ պակաս:

Տուբերկուլյոզի, քոսի, արախոմայի, ստամոքսաղիքային, վեներական և այլ հիվանդությունների տարածումը կանխելու համար հասարակական սնունդի ձեռնարկությունների աշխատողները պետք է բժշկի կողմից մանրազնին բժշկական քննություն յենթարկվեն տասնորյակում ամենաքիչը մեկ անգամ:

Ճաշարանների և բուֆետների մաքրություն մասին պետք է հոգ տանեն, վոչ միայն ճաշարանների ու բուֆետների աշխատողները, այլ և ճաշողները:

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մարդու մարմնի վրա փոշի և կեղտ է կուտվում, իսկ կեղտի մեջ կարող են վարակիչ հիվանդությունների միկրոօրններ լինել: Կեղտն առանձնապես յեղունգների տակն է հավաքվում, լինել: Կեղտն առանձնապես յեղունգների տակն է հավաքվում, դրա համար ել յեղունգները պիտի կարճ կտրել և մաքրել յեղունգատակերը:

Փոշին, մարդու կաշվի վրա ընկնելով, խառնվում է քրտինքի հետ և կպչուն մասսա յե կաղմում, վոր ծածկվում է մարմնի ծակոտիները և դրանով հենց դժվարացնում է մաշկով շըննի ծակոտիները:

Ամեն որ առավոտյան պետք է սապոնով լվանալ յերեսը, վիզը և ձեռքերը մինչև արմուկները: Քնելուց առաջ պիտի լվանալ վոտքերը: Տասնորյակում մեկ անգամից վոչ պակաս պիտի յեղունգները զնալ: Յեթի հնարավոր է պետք է հաճախ ջրցան (ДУШ) ընդունել:

Մազերը պետք է կարճ խուզել, և տասնորյակում վոչ պակաս քան յերկու անգամ լվանալ տաք ջրով ու սապոնով:

Մշտական խնամք են հանջում բերանն ու ատամները: Որական յերկու անգամ՝ առավոտյան ու յերեկոյան (քնելուց առաջ) պետք է բերանը վողողել տաք ջրով, իսկ ատամները մաքրել ատամի յողանակով ու փոշով, ըստ վորում յողանակը

պետք է ըսել ատանները յերկարութեամբ վերից-վար եւ վարից վեր:

ԱՐԵՎԻՑ ՈՐՏՎԵԼԸ

Արեւը ուժի եւ առողջութեան հզոր աղբյուր է: Դրա հետ միասին արեգակից վոչ-ճիշտ, վոչ-չափավոր սփռվելիս առողջութեանը վտանգ սպառնում մարմնի այրվածք, արեհարութուն, սրտի գործունեութեան խանգարում:

Դրա համար ել պետք է պահպանել հետեյալ կանոնները:

- 1) Առանց բժշկի խորհրդի արեւի վառնանք չընդունել:
- 2) Արեւի վառնանք ընդունել թիստ կերպով աստիճանականութեամբ պահպանելով, սկսած 5 րոպեից եւ ապա ամեն օր ավելացնելով 3—5-ական րոպե, հասցնել 1—1 ու կես ժամի:
- 3) Արեւի վառնանք ընդունելիս ծածկել գլուխը:
- 4) Արեւի ազդեցութեան յենթարկել մարմնի բոլոր մասերը հավասարաչափ կերպով (ժամացույցով թիստ դեկավարվելով) դեպի արեւը շուտ առաջ մարմնի տարբեր կողմերը:

ՋՐՈՎ ԼՈՂԱՆԱԼԸ

Ամառը լողանալը նպաստում է մարմնի մաքրութեան եւ ամրապնդում է ամբողջ օրգանիզմը:

Գետում լողանալու համար պետք է ընտրել այնպիսի տեղեր, վոր փոսեր չլինեն, ափը մաքուր լինի, հատակը հարթ ու ավազով ծածկված լինի: Ավելի լավ է արեգակով վառ լուսավորված ափի մոտ լողանալ:

Պետք է խուսափել ջրի ուժեղ հոսանք ունեցող վայրերից: Վնասակար է անոթի փորով լողանալը եւ, ընդհակառակը, ուտելուց անմիջապես հետո յել լողանալը վնաս է:

Չի կարելի քրտնած իրեն ջուրը գցել, անհրաժեշտ է նախապես հովանալ եւ ապա ջուրը մտնել:

Վնաս է ջրում մինչև մարմնի կապտելն ու մինչև դող զգալը մնալ:

Լողանալուց հետո պետք է այնքան սրբել մարմինը, մինչև վոր չորանա:

Մովային լույնքների համար բժշկի վերահսկողութունն է պահանջվում:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆիզիկական վարժութունները օրգանիզմն ամրապնդելու լավագույն միջոցն է հանդիսանում: Դրա համար ել ֆիզիկական կուլտուրային հսկայական ուշադրութունն է հատկացվում մեր խորհրդային յերկրում: Ֆիզիկական վարժութուններով, սպորտով պետք է պարապել կանոնավոր ու բանական կերպով: Պետք է շարունակ մարզվել եւ զարգացնել ֆիզիկական ուժը, դիմացկունութունն ու ճարպիկութունը:

Վոչ-ճիշտ մարզանքի դեպքում կամ յերբ մարզանքն աստիճանաբար չի կատարվում կարող են գերհոգնածութեան յերեւոյթներ առաջ գալ: Գերհոգնածութեան նշանները հետեյալներն են,— քաշի պակասում, անքնութուն, արյան պակասութուն, հետաքրքրութեան կորուստ դեպի սպորտի տվյալ տեսակը:

Գերհոգնածութեան բուժման լավագույն միջոցը տեւական հանգիստն է (մարզանքը դադարեցնել 15—20 օրով): Հանգստից հետո պետք է թիստ պահպանել մարզանքի աստիճանականութունը: Պետք է հիշել, վոր ծխելը, ալկոհոլ գործածելը եւ սեռական անժուժկալութունները գերհոգնածութեան յերեւան գալուն նըպաստող գործոններ են: Չի կարելի մարզանքով պարապել, յեթե կուշտ ուտելուց 2—3 ժամ չի անցել:

ՀԱԳՈՒՍՏԻ ՅԵՎ ԿՈՇԻԿՆԵՐԻ ՍՈՌՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հագուստը եւ կոշիկները ծառայում են մարդու մարմնի ջերմութեանը պահպանելու եւ մարմինն արտաքին վնասումներից պահպանելու համար:

Հագուստը պետք է համապատասխանի տարվա յեղանակին՝ ձմեռը պետք է մարմինը պաշտպանի սառելուց, իսկ ամառը— չափից ավելի տաքանալուց:

Հագուստը պետք է իր միջով օդը լավ անցկացնի: Սպիտակեղենը պետք է ծծի եւ իր միջով բաց թողնի քրտնիքն ու մարդկային մարմնի գոլորշիները:

Չգետալը պետք է լավ նստի մարմնի վրա: Եւ չսեղմի արյունատար անոթները, վիզը, կրծքի վանդակն ու փորը:

Չգետալը խնամք է պահանջում: Չգետալին կպչում է փոշի, կեղտ, իսկ փոշու եւ կեղտի մեջ կարող են վարակիչ հիվանդութունների միկրոօրգանիզմներ լինել: Դրա համար ել Չգետալը պետք է թյունների միկրոօրգանիզմներ լինել:

ամեն որ մաքրել փոշուց և կեղտից: Ձի կարելի շորերով անկողին մտնել:

Վտանամանը պետք է վոտքի չափով կարված լինի: Ներբանը պիտի առաձգական լինի: Շատ կարծր ու հաստ ներբանը հարուստ է վոտքը:

Կրունկը պետք է շատ բարձր չլինի: Դա պիտի ամենաշատը 3 սմ-ի հասնի:

ԲՄԱՎՈՐ ՏԻՖԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ


Վորովհետև վոշլտուլթյունը բժավոր տիֆի տարածվելու գլխավոր պատճառն է, ապա վոշլիները վոչնչացումը բժավոր տիֆը կանխելու հիմնական միջոցն է:

Վոշլիների վոչնչացման միջոցները հետևյալներն են:

- ա) իր ժամանակին մազերը թուզել:
 - բ) կանոնավոր կերպով բաղանիք զնալ (տասնորյակում մեկ անգամից վոչ պակաս, փոթելով սպիտակեղենը նաև անկողնի):
 - գ) զգեստը, անկողինը և սենյակը մաքուր պահել:
- Հանրակացարաններում, բարակներում կամ դպրոցներում վոշլի յերևալիս սանիտարական մշակում է կատարվում, վարք կայանում է հետևյալում:

1. Մարդկանց ամբողջ կազմը բաղանիք է տարվում ու մազերը թուզվում են, սպիտակեղենը (նաև անկողնի) փոթելով:

Մարդկանց սանիտարական մշակման համար ամենից լավն անցաթող տիպի բաղանիքներն են: Այսպիսի բաղանիքներում շորեր հանելու սենյակը, շորեր հագնելու սենյակից առանձին է շինված: Կեղտոտ սպիտակեղենը շորեր հանելու սենյակից ուղարկվում է լվացքատուն, իսկ զգեստը՝ դեղկամերա: Շորեր հանելու սենյակում մարդկանց սպիրում են: Լողանալուց հետո սանիտարական մշակման յենթարկվածներն անցնում են շորերը հագնելու սենյակը և բաղանիքի մյուս զոնով են դուրս գալիս, այլևս չվերադառնալով առաջ անցած սենյակներով (նկ 59, տես 105 էջում):



ՆԿ. 59. ԱՆՅԱԹՈՂ ՏԻՊԻ ԲԱՂԱՆԻՔԻ ՈՒՐՎԱԳԻԾԸ:

2. Բնակելի սենյակները, ինվենտարի և զգեստների դեղին-սեկցիա յե կատարվում, փոթվում են անկողինները: Բժավոր տիֆով հիվանդացած անձինք պետք է ուղարկվեն հիվանդանոցները, այս կերպ նրանց մեկուսացնելով սուղջներից: Այն սենյակը, վորում գտնվում եր տիֆով հիվանդացածը, այլ և վերջինիս իրերը պետք է դեղինսեկցիայի յենթարկվեն:

ՆԱԽԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ

Նախապահպանական պատվաստումներ ընդունած մարդիկ այլևս չեն հիվանդանում մի շարք վարակիչ հիվանդություններով:

Ներկայումս նախապահպանական պատվաստումներ են անում ծաղկի դեմ (բուրբի համար պարտադիր կարգով), վոբո-վաչնի տիֆի, պարատիֆի, բուլթեշի, դիֆտերիայի, կարկամախտի, կատաղուլթյան դեմ:

Խորհրդային իշխանությունը որենքներ է հրատարակել ծաղկի դեմ պարտադիր պատվաստման համար: Ըստ այդ որենքների ծաղիկը պարտադիր կարգով պատվաստվում է բուրբ քաղաքացիներին՝ մինչև մեկ տարեկան դառնալը, ապա 10—11 տարեկան հասակում և, վերջապես 20—21 տարեկան հասակում:

Պատվաստումները բուրբովին անվնաս են ասողություն համար և զգալի չափով պահպանում են հիվանդանալուց: Դրանք պետք է կրկնվեն վոբո ժամկետներից հետո, վոր հաստատվում է յուրաքանչյուր հիվանդություն համար:

Պատվաստված մարդը սովորաբար չի հիվանդանում այն հիվանդությամբ, վորի դեմ սովորած և պատվաստումը, իսկ յենթ

հիվանդանում ել ե, ապա անհամեմատ ավելի հեշտ և տանում
այդ հիվանդութունը, քան չպատվաստվածը:

ԴԵԶԻՆՑԵԿՑԻԱ ՅԵՎ ԴԵԶԻՆՍԵԿՑԻԱ

Դեզինֆեկցիա յե կոչվում այն միկրոօրգանիզմի լիակատար վո-
չնչացումը, վորոնք վարակիչ հիվանդութուն են առաջ բերում:

Դեզինֆեկցիան—ախտահանումը կատարվում և հետևյալ
յեղանակներով:

1) Բարձր բարխառնուրյամբ, յեռացնելով, տաք գոլորշով
կամ չոր տաք ոդով:

2. Քիմիական նյութերով սուլեմայով, ֆորմալինով, քլո-
րով, քլորակրով, կարբոլաթթույով և այլն:

Հիշյալ միջոցներով ախտահանելու համար կան հատուկ
ապարատներ և հարմարանքներ՝ դեզինֆեկցիոն կամերաներ,
հիդրոպուլտներ, պուլվերիզատորներ և այլն:

Դեզինսեկցիա յե կոչվում այն միջատների վոչնչացումը,
վորոնք մարդու պարազիտներ և աննդամթերքների ու շորերի
վնասարարներ են:

Շատ միջատներ վարակ հաղորդող են: Վոջիլները տարա-
ծում են բծավոր և հետադարձ աիֆը, մոծակները (անոֆիլեսա)
մալյարիան, ճանճերը աղիքային հիվանդութունները, սիբիրախ-
տը և տուբերկուլյոզը:

Միջատների դեմ պայքար ե մղվում հետևյալ յեղանակներով:

1) Շորեր յեվ սպիտակեղենը քափ տալով՝ պարազիտներն ու
միջատները հեռացնելու համար:

2) Տափ ջրով ու սապոնով մարմինը, շորերն ու սպիտա-
կեղենը լվանալով, ըստ վորում սպիտակեղենը նպատակահարմար
ե յեփեցնել:

3) Սպիտակեղենը յեվ շորերը տաք աղուկով աղուկելով:

4) Չոր տաք շոգի աղջեցությամբ (ոուսական վառարա-
նում), վորով վոչնչացում են սպիտակեղենի և շորերի վրա յեղած
միջատները:

5) Բոցի աղբեցուրյամբ՝ ճեղքերում և մահճակալներում
փայտոջիլները վոչնչացնելու համար (գողալամպով):

6) Պիմիակառն նյութերի (ծծումբ, քլորպիլերին, սոլվենա)
աղբեցությամբ վոջիլներին, փայտոջիլներին, լվերին և մյուս
միջատներին վոչնչացնելով:

Ճանճերի դեմ կոպելու և նրանցից պաշտպանվելու համար
գործ և ածվում կպչուն թուղթը, լուսամուտների ցանցապատու-
մը: Ճանճերի դեմ կոպելու լավագույն միջոցը բակը և սենյակնե-
րը մաքուր պահելն և, աղբը, թափուկները և գոմաղբն իր ժամա-
նակին հեռացնելն և: Մոծակներից, մալյարիա տարածողներից,
պաշտպանվելու համար լուսամուտները ցանցապատում են, լը-
ճերի ու ճահիճների յերեսը ծածկում են նավթով և կերոսի-
նով:

ԾՄՈՒՄԲՈՎ ԴԵԶԻՆՍԵԿՑԻԱ

Սենյակը և իրերը դեզինսեկցիա անելու համար գործ են
ածվում ծծումբի կոշտեր կամ ձողիկներ: Սենյակից հեռաց-
վում են մթերքները, ծաղիկները, մետաղյա իրերը: Լուսամուտնե-
վում են մթերքները, ծաղիկները, կպչվում են թղթով: Հա-
րը, ճեղքերը, վառարանները ծածկվում, կպչվում են ղնում,
տակի վրա ավազ և լցվում, ավազի վրա աղյուսներ են ղնում,
խսի դրա վրա դրվում և ծծումբ լցրած թավան: Սենյակի մեկ խոր-
մետրին վերցվում և 10 դր. ծծումբ: Ծծումբը թրջում են դեռա-
տուրառով և վառում են: Դրանից հետո հեքմետրի կերպով ծած-
կում են դրսի դուռը և սենյակն այսպես փակ թողնվում և 24
ժամ: 24 ժամից հետո սենյակը բաց են անում և ողափոխում են:

նույնպես և սանիտարական - պաշտպանական աշխատանքների (բժշկական քույրեր, սանիտարական հրահանգիչներ, ախտահանողներ, վարսավերներ) համար:

8) Մասսայական առողջացման աշխատանքների անցկացման կարգով, ինչպես և վարակիչ համաճարակային հիվանդությունների ծագման առաջն առնելու նպատակով Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ընկերությունները կազմակերպում են ախտահանման կետերի ու կայանների, ջրցանների (գուշերի) պովիլիոնների ու սարքավորման, ինչպես և վարսավորանոցների լայն ցանց:

9) Բնակչությունը լրացուցիչ, վորակյալ բուժ-օգնությունը ապահովելու համար Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ընկերությունները կազմակերպում են բուժ-պրոֆիլակտիկ հիմնարկությունների ցանց — հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, ատամնաբուժական և ատամնատեխնիկական կաբինետներ, սանատորիաներ, հանգստի տներ:

10) Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ընկերությունները բանում-ընդարձակում են այնպիսի արտադրական ձեռնարկություններ, վորոնք արտադրում են բժշկական և սանիտարական հիգիենիկ իրեղեններ. խոնավածուծ բամբակ, ախտահանիչ կամերաներ և ախտահանման մանր պարարտներ, ջրցան սաքավորում, ավտո-կլավներ, բժշկական կահույք:

Այս արտադրանքը անհրաժեշտ է Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ընկերությունների մասսայական առողջացման և բուժ-պրոֆիլակտիկ աշխատանքների համար, ինչպես խաղաղ, նույնպես և պատերազմի ժամանակ:

11) Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ընկերությունները մեծ աշխատանք են կատարում դպրոցականների սանիտարական լուրտուրական դաստիարակություն և առողջության ամրապնդման ասպարիզում (Յեպասպ-ի խմբակներ, դպրոցական սանպոստեր, պատանի սանհետախույզների ջոկատներ, պիոներների ճամբար-սանատորիաներ և հատուկ մանկական սանատորիաներ):

12) Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ընկերությունները ստեղծում են հզոր սանիտարական ավիացիա:

Աշխատանքների այս համառոտ թվարկումից յերևում է, վոր Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) խորհրդային ընկերությունները հանդիսանում են իսկական մասսայական հասարակական կազմակերպություններ, վոր պայքարում են 1) ՍՍՀ

Միության սանիտարական պաշտպանությունն ամրացնելու համար, 2) աշխատավորների աշխատանքն ու կենցաղն առողջացնելու համար, 3) նրանց սանիտարական-կուլտուրական մակարդակը անշեղորեն բարձրացնելու համար:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ (ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ) ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊՈՍՏԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

Սանիտարական պոստը Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) մասսայական առողջացման և սանիտարական-պաշտպանական ստորին կազմակերպությունն է:

Սանիտարական պոստերը կազմվում են Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպությունների կողմից («ՊԱՍՊ»-ի նշանակիրներից — ցեխերում, հանրակացարաններում, «ՊԱՍՊ»-ի նշանակիրներից — ցեխերում, հանրակացարաններում, բնակվարչություններում, կոլտնտեսություն-ճաշարաններում, բնակվարչություններում, կոլտնտեսություններում, խորհրտնտեսություններում, ՄՏ կայաններում, հանքահորերում (շախտերում) և յերկաթուղային ու ջրային տրանսպորտում:

Սանպոստը կազմված է լինում 4 հոգուց — սանպոստի պետից և 3 ողակայիններից: Սանպոստն — ըստ կառուցվածքի հանդիսանում է վորպես պատգարակային ողակ:

Սանպոստի պետ նշանակվում է Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպության կողմից զերպղանց պատրաստված «ՊԱՍՊ»-ի 2-րդ աստիճանի նշանակիչ ակտիվիստներից:

Սանպոստի ողակայիններ նշանակվում են «ՊԱՍՊ»-ի 1-ին աստիճանի նշանակիրների ակտիվից:

Սանպոստի պետը պատասխանատու յե սանպոստի ամբողջ աշխատանքի համար:

Սանպոստի պետը կազմում է սանպոստի աշխատանքների ծրագիրը: Սանպոստի աշխատանքի ծրագիրը մշակվում է Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ակտիվի ժողովում և հաստատվում Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպության կոմիտեյի կողմից:

Սանպոստի պետը բաշխում է պարտականություններն ողակայինների միջև և ողակայինների ամենօրյա հերթապահությունն և սանմանում (ցեխում, հանրակացարանում, բրիգադում և այլն):

Սանպոստի պետը տանում է սանպոստի աշխատանքների

Վերականգնողական ծրարներ 10 հատ
 Շինաներ-բեկակալներ (Փաներից պատրաստած) 5 »
 Լարան (ЖУТ) առաձգական կամ հյուսվածքային 3 »
 Թանգիֆի յերիզներ (բինտեր) 5 »
 Հասարակ բամբակ 250 գրամ
 Բամբակյա դնդիկներ փայտիկների վրա ամրացված 20 հատ
 Մկրատ մեծ—ուզիդ 1 »
 Նավթ (կամ բենզին) 100 գրամ

Այս դարսվածքը նախատեսվում է ուղղմական պայմաններում ուղտազործելու նպատակով կամ խազաղ ժամանակ այդ իրերի իսկապես անհրաժեշտ կարիքը զգալու դեպքում (հրդեհ, հեղեղում, յերկաթուղային աղետ և այլն):

Սանպոստերը առաջին ոգնություն ցույց տալու ժամանակ իրենց ամենուրեք կարիքների համար ուղտվում են հետևյալ իրերից և բուժամիջոցներից (այս իրեղեններն ու բուժամիջոցները կազմում են առաջին ոգնության դեղարկղը):

- | | |
|---|--|
| 1) Իրոգային թուրմը (настойка) | 10) սողայի 2%-ին լուծույթ, |
| 2) Առաջին ոգնություն վերականգնողական ծրար, | 11) Բենզին, |
| 3) Խոնավածուծ բամբակ, | 12) Այրվածքներին քսելու յուղ |
| 4) Թանգիֆի յերիզներ (բինտ), | 13) Վազելին |
| 5) Թանգիֆի, | 14) Դեղ ընդունելու համար փոքրիկ բաժակ, |
| 6) Լարան (ЖУТ) առաձգական կամ հյուսվածքային, | 15) Ձեռքեր լվանալու համար կարբոլյան սապոն, |
| 7) Նաշատրի ուղտրա, | 16) Սրբիչ, |
| 8) Վալերիանի կաթիլներ, | 17) Ձեռքի համար խոզանակ, |
| 9) Անանուխի կաթիլներ, | 18) Մկրատ: |

Սանպոստի հագեցումը և այդ հագեցման լրացումը կատարվում է այն սրբիկտի հաշվին, վորին կից գտնվում է սանպոստը (ձեռնարկություն, կոլտնտեսություն, բնակավայրություն և այլնի հաշվին):

Սանպոստի պետք պատասխանատու յե սանպոստի գույքի պահպանման և անփաստության համար և միջոցներ է ձեռք առնում դեղարկղը ժամանակին դեղորայքով լրացնելու համար:

Ցեխերում (ճաշարաններում, հանրակացարաններում, բընակավայրչություններում և այլն) սահմանվում է սանպոստի ողակայինների հերթապահություն:

Դեղարկղի բանալին պահվում է հերթապահ ողակայինի մոտ:

Հերթապահի ազգանունը պետք է գրված լինի սանպոստի տախտակի վրա:

ՍԱՆՊՈՍԻ ՏԱԽՏԱԿ

Կախվում է ցեխում աչքի ընկնող տեղում (ճաշարանում, հանրակացարանում և այլն):

Կարմիր Խաչի ՍԱՆՊՈՍ	№
Ցեխի (բնակավայրչ, ճաշարանի)
«.....» 193 թ. Հերթապահ
Սանպոստի պետ
Ողակայիններ՝ 1)
2)
3)

Հերթապահություն ժամանակ ողակայինը պարտավոր է ունենալ ձախ թևին Կարմիր Խաչի (Կարմիր Մահակի) նշանով թևակապ:

Հերթապահը իր հայտաբերած սանիտարական թերություններն ու ցույց տված առաջին ոգնություն բոլոր տեսակները մտցնում է որատետրի մեջ:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԳԻՏԵՆԱ ՅԵՎ ԿԱՏԱՐԻ ԿԱՐՄԻ ԽԱՉԻ (ԿԱՐՄԻ ՄԱՇԻԿԻ) ԱԿՏԻՎԻՍՏԸ

Կարմիր Խաչի (Կարմիր Մահակի) ակտիվիստը պետք է ձգտի դառնալ իր արտադրության (կոլտնտեսություն և այլն) ստախանովական աշխատողը: Կարմիր Խաչի ակտիվը պետք է բարձրացնի իր քաղաքական պատրաստակները: Կարմիր Խաչի ակտիվիստը պարտավոր է աննկուն և ան-

խոնջ զգոնությունն ցուցաբերել և մերկացնել ժողովրդի թշնամիներին — տրոցկիտական-բուլաբրինյան լրտեսներին, դիվերսանտներին, ֆրասարաբներին — Ֆաշիզմի գործակալներին:

Կարմիր թաշի ակտիվիստը ամենուրեք և ամեն տեղ պետք է սանիտարական-կուլտուրական վարքագծի որինակ հանգիստնա: Կարմիր թաշի ակտիվիստի դազգյանն ու աշխատանքի տեղը պետք է լինի որինակելի ու մաքուր: Բնակարանի անթերի մաքրությունը, հտակությունն ու մաքրակեցությունն այն պարտադիր պահանջներն են, վորոնք առաջադրվում են Կարմիր թաշի ակտիվիստին: Կուլտուրականությունն ու վարվեցողությունն իր շրջապատողների վերաբերմամբ պետք է դառնա Կարմիր թաշի ակտիվիստի որդանական հատկությունը:

Կարմիր թաշի ակտիվիստը պարտավոր է իր անձնական որինակով և դաստիարակչական միջոցներով ամբացնել իրեն շրջապատող կուլեկտիվի մեջ սանիտարական-կուլտուրական սովորույթներ, պայքարել առողջ, կուլտուրական աշխատանքի և կենցաղի համար:

Կարմիր թաշի ակտիվիստը պարտավոր է անշեղորեն բարձրացնել իր սանիտարական-պաշտպանական պատրաստությունը, հանձնել «ՊԱՍՊ»-ի I և II աստիճանի նորմաները:

Կարմիր թաշի ակտիվիստը պարտավոր է անհետաձգելի դեպքերում ցույց տալ առաջին բժշկական ոգնություն այն չափով, վոր չափով թույլ են տալիս իր կողմից յուրացրած գիտելիքներն ու ունակությունները:

Կարմիր թաշի ակտիվիստը պարտավոր է անպատճառ մասնակցել իր ձեռնարկության (կուլտուրասության, բնակավարչության, խորհրտեսության և այլն) Կարմիր թաշի սկզբնական կազմակերպության աշխատանքներին:

Նա պարտավոր է

- 1) Բացատրել աշխատավորներին Կարմիր թաշի (Կարմիր Մահիկի) նպատակներն ու խնդիրները:
- 2) Ներգրավել նոր անդամներ Կարմիր թաշի (Կարմիր Մահիկի) ընկերության շարքերը:
- 3) Ոժանդակի անդամավճարների հավաքման:
- 4) Աշխատել սանպոստի կազմում:
- 5) Ակտիվ կերպով մասնակցել սկզբնական կազմակերպության անդամների ընդհանուր ժողովներին:

6) Ոգնել Կարմիր թաշի (Կարմիր Մահիկի) անկյուններ և ցուցահանգեսներ կազմակերպելու գործին:

7) «ՊԱՍՊ»-ի խմբակների և բուժքույրերի դպրոցների լսողներ ներգրավել:

Կարմիր թաշի ակտիվիստը պարտավոր է աջակցել Կարմիր թաշի բժշկա-տնտեսական գործունեյության կարգացմանն ու ամբապնդմանը և աչալուրջ կերպով պահպանի սոցիալիստական սեփականությունը:

Կարմիր թաշի ակտիվիստը կարմիր թաշի աշխատանքներում պետք է լինի հարվածայնության և սոցմրցման նախամարտիկը և բոլոր ուժով աշխատի բարձրացնել աշխատավորութան աչքերում խորհրդային Կարմիր թաշի նեղինակությունը:



Յ Ո Ւ Յ Ա Կ

«ՊԱՍՊ»-Ի 1 ԱՍՏԻՃԱՆԻ ԿՐԾՔԱՆՇԱՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՉԱՄԱՐ ՏՐՎԵԼԻՔ ԴՆՈՐՄԱՆԵՐԻ

1. ԱՌԱՋԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

1. Իմանալ մարդու կմախքի կառուցվածքը, հիմնական վոսկորները և վերին ու ներքին վերջավորությունների հոդերի անվանումն ու դասավորումը:

2. Իմանալ վոսկրի ծածկված և բաց կտարվածքի նշանները և հոդերի դուրս ընկած լինելու նշանները:

3. Իմանալ մարդու արյան քանակը, մարդու սրգանիզմում ինչպես և ընթանում արյունը, զարկերակի և յերակների (վենաների) տարբերությունը, արյան նշանակությունը սրգանիզմի համար:

4. Ցույց տալ մարդու մարմնի մաշկի վրա սրտի և զարկերակի — քունքային, քներակային, յենթամարակային, ուսային, ազդրային, ծնկային մասերի դասավորման տեղը:

5. Գտնել և հաշվել յերակաղարկը — ճաճանչոսկրային, քունքային, քներակային զարկերակների վրա:

6. Իմանալ արյան մեծ կորուստների նշանների մասին, իմանալ զարկերակային, արենազարձ յերակային, մազանոթային արյունահոսությունների նշանները:

7. Իմանալ, ինչ բան է վերքը, վերքի տեսակները և վիրավորվելու դեպքում որգանիզմին սպառնացող վտանգները:

8. Իմանալ մարդու շնչառության գործարանների սխեման:

9. Կարողանալ դադարեցնել զարկերակային արյունահոսությունը սեղմելու միջոցով, քուղակապով, վոլյումով:

10. Իմանալ մարդու մարտդուծյան գործարանների սխեման:

11. Իմանալ խոշոր չափով արյուն կորցնելու դեպքում — արյան փոխներարկման նշանակությունը և ինչ բան է դոնորությունը:

12. Իմանալ առաջին ոգնություն ծրարի պարունակությունը, գիտենալ քաղաքացիական ձեռի առաջին ոգնության վիրա-

կապական ծրարի բացելն ու ոգտագործելը և իմանալ ոգգմական ձեռի առաջին ոգնություն վիրակապական ծրարի բացման ու ոգտագործման կանոնները:

13. Իմանալ, ինչ բան է մանրեաղերծ վիրակապական նյութեղենը և ինչպես ոգտվել ձեռքի տակ յեղած վիրակապական նյութեղենից մանրեաղերծ նյութեղենի բացակայությունը դեպքում:

14. Ճիշտ և արագ կատարել յերկրի (բինտի) վիրակապ գլխի, դաստակի, մատի, նախարազկի, կրնկի (վտանաթաթի), աչքի, հոդերի:

15. Կարողանալ գնել պարաստիկ ձեռի վիրակապ գլխին, քթի վրա, ներքին ծնոտին:

16. Կարողանալ կապել յետանկյուն զլխաշորի (КОСЫНКА) ոգնություն պլուխը, դաստակը, կրունկը (վտանաթաթ):

17. Կարողանալ ձիշտ կերպով կատարել վիրակապ և բեկակալ գնել ուսին, նախարազկին, ազդրին, ծնկին:

18. Իմանալ առաջին ոգնության կանոնները՝ կտարվածքների և վերջավորություն յերկայնաձգման դեպքում:

19. Կարողանալ ցույց տալ առաջին ոգնություն այրվածքների և ցրտահարություն դեպքերում:

20. Կարողանալ ցույց տալ առաջին ոգնություն — ջրահեղձին և ուշագնացություն դեպքում:

21. Կարողանալ կատարել արհեստական շնչառությունը ստ Սիլվեստրի և Շեֆֆերի:

22. Կարողանալ ցույց տալ առաջին ոգնություն արհեսաբություն և ջերմահարություն դեպքերում, երկարական հոսանքից առժելու դեպքում:

23. Կարողանալ ոգնություն ցույց տալ ընկնալորին ընկնելու ժամանակ:

24. Իմանալ առաջին ոգնություն ցույց տալու կանոնները թունավորման դեպքում (ալկալիական նյութերից, թթվուտներից, վատորակ սննդից):

25. Կարողանալ ոգտվել սանիտարական պայուսակի միջոցներից և առաջին ոգնություն դեղարկղից:

II. ՏՈՒԺԱՄՆԵՐԻ ՏԵՂԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ

26. Կարողանալ ձեռքերով հասարակ և բարդ «փականներ» կազմելով տուժածին փոխադրել յերկու հոգով:

27. Իմանալ սանիտարական պատգարակների կառուցվածքը և կարողանալ գրանց ճշտորեն բանալ և փաթաթել: Կարողանալ ձեռքի տակ գտնված նյութերից պատգարակ պատրաստել:

28. Կարողանալ ողակի լրիվ կազմով և յերկու հոգով տուժածին բարձրացնել զեանից և զնել նրան պատգարակի վրա:

29. Կարողանալ ողակի լրիվ կազմով փոխադրել վիրավորվածին պատգարակով (հարթ ճանապարհով, սանդուխտներով, արգելակների վրայով):

30. Իմանալ սանիտարական պատգարակի - սայլի վրա, սանիտարական ավտոմեքենա զնելու և զնացքի վազոն բեռնելու, փոխադրելու կանոնները:

III. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

31. Իմանալ Թ.Ն. (Թունավոր նյութեր) շնչահեղձությամբ թունավորվելու նշանները (քլոր, ֆոսգեն, քլորպիկրին) և կարողանալ, այդպիսի վնասվածքների դեպքում ցույց տալ առաջին սղնություն:

32. Իմանալ զրգոխ (արցունքաբեր և փռտացնող) Թ. Ն. տուժած լինելու նշանները և կարողանալ տուժածներին սղնություն ցույց տալ:

33. Իմանալ ընդհանուր-թունավոր նյութերից (Թ.Ն.) թունավորվելու (կապտաթթվի, ածխահոտի գազ) և կարողանալ ողնություն ցույց տալ գրանցից տուժելու դեպքերում:

34. Իմանալ իպրիտի ազդեցությունը մաշկի, աչքերի, շնչառության և սննդառության օրգանների վրա:

35. Կարողանալ հանել իպրիտի կաթիլը մաշկի վրայից և տեղը մշակել լուծույթներով: Կարողանալ աչքերը լվանալ իպրիտով ֆլավելու դեպքում:

36. Իմանալ ամբողջ մարմնի վրա իպրիտի կաթիլները ցայտելու դեպքում տուժածին սղնություն ցույց տալու կանոնները:

37. Կարողանալ սզտվել հակաիպրիտային ծրարից:

38. Իմանալ Թ. Ն. պաշտպանվելու անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցները:

39. Իմանալ Ե. Կ. հակազազի կառուցվածքը և ինչ Թ. Ն. -ից և նա պաշտպանում: Իմանալ հակազազ պահելու կանոնները:

40. «Պատրաստ» գրությունից 3 վայրկյանում հազնել հա-

կազազը: Հազցնել տուժածին հակազազը 5 վայրկյանի ընթացքում:

41. Կարողանալ ողտվել անսարք հակազազից:

42. Կարողանալ աշխատել հակազազով (առաջին սղնություն ցույց տալիս և տուժածներին փոխադրելիս) մինչև մեկ ժամ:

43. Կարողանալ բնակելի շենքը հարմարեցնել դազապատարանի:

44. Իմանալ սննդամթերքների և ջրի Թ. Ն. վարակումից պահպանելու կանոնները:

IV. Հ Ի Ք Ի Ն Ն Ա

45. Իմանալ, ինչ բան է խորանարդը և կարողանալ վորոշել շենքի տարածությունն ու խորանարդը:

46. Իմանալ ողափոխության նշանակությունը մարդու առողջապահությունը պահպանելու տեսակետից և աշխատանքային ու բնակելի շենքերի ողափոխության կանոնները:

47. Իմանալ աշխատանքային ու բնակելի շենքերի մաքրման կանոնները:

48. Իմանալ այն սանիտարական պահանջները, վորոնք առաջադրվում են դուզարանների և ազրի հորերի և արկղների կառուցման և պահպանման համար:

49. Կարողանալ տալ փայտակերտ ջրհորի կառուցման և այդ գրության սանիտարական զնահատականը: Կարողանալ վորոշել ջրի վորակը առանց լաբորատորական անալիզի: Իմանալ, շել ջրի վորակը առանց լաբորատորական անալիզի: Իմանալ, շել ջրի ինչպիսի հիվանդություններ են փոխարկվում վարակված ջրի միջոցով: Իմանալ ջրի անֆուս դարձնելու ամենահասարակ միջոցները:

50. Կարողանալ առանց լաբորատորական բնության վորոշել մսի, ձկնի, հացի պահածոների վատթարակությունը:

51. Իմանալ ինչպիսի հիվանդություններ կարող են փոխարկվել թունավորված սննդանյութերի միջոցով:

52. Իմանալ սննդի մթերքների պահպանման և փոխադրման կանոնները:

53. Իմանալ խոհանոցի, ճաշարանների, բուֆետների մաքրության պահպանման կանոնները և այն հիգիենիկ պահանջները, վորոնք առաջադրվում են խոհանոցի, ճաշարանի, բուֆետների սպասարկող անձնակազմին:

54. Իմանալ մաշկի, մազերի, յեղունկների, առամների, բերնի խոռոչի պահպանման կանոնները և կատարել այդ կանոնները:

55. Իմանալ հիգիենայի պահանջները, վորոնք առաջադրվում են անկողնի, հագուստի, կոշիկների պահպանման համար և կատարել այդ պահանջները:

56. Իմանալ արևային լողանք ընդունելու և լողանալու կանոնները:

57. Իմանալ ֆիզվարժությունների ժամանակ ինքնաստուգման ելեմենտները:

58. Իմանալ, ինչ բան և սանիտարական մշակումը: Իմանալ բացթողման տիպի բազնիքների կառուցման սխեման: Իմանալ, ինչ բան և դեզինսեկցիա և դեզինֆեկցիա:

V. ԿԱՐՄԻՐ ԽՍՁԻ ՅՅՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

59. Իմանալ ԽՍՀՄ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերության խնդիրներն ու գործունեությունը:

60. Իմանալ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի կառուցվածքը—սարուկառուցան, հագեցվածությունը և սանիտարական պատերի խնդիրները:

Գ Լ Խ Ա Ց Ա Ն Կ

I. Համաստան գիեղիվներ մարդու արգանիզի կառուցվածքի ու առնչությունները	3
Կմախք	3
Մկաններ	8
Արյուն և արյան շրջանառության որգաններ	9
Շնչառություն և շնչառական որգաններ	14
Մարսողության որգաններ	17
Էյարր, փայծաղ	18
Արտաթորման որգաններ	19
Մաշկը	20
Նյարդային սխեմա	22
Տեսողության որգան	23
Լսողության որգան	25
II. Առաջին բուժական ոգնություն	26
Վերքերի տեսակները	26
Վերքավորվածին սպառնացող վտանգը	26
Զարկերակային, յերակային—վենոզ և մազանոթային (капиллярное) արյունհոսություն	27
Ինչպես դադարեցնել զարկերակային արյունհոսությունը	28
Սեղմանի վրադնելը	29
Սեղման ինչով կարելի յե փոխարինել	32
Յերակային և մազանոթային արյունհոսության դադարեցնելը	32
Առանձին որգաններից արյունհոսության դադարեցնելը	32
Արյան փոխներարկում	33
Վերքերի վարակման նախազգուշացում	34
Վերքերի վարակման նախազգուշացում	35
Մաշկին ոգնության վերակազմակերպման ծրար	36
Վերակազմակերպման ծրարի պարունակությունը	37
Ինչպես ոգավել վերակազմակերպման ծրարից	37
Ինչպես կատարել հասարակ վերակազմակերպում	38


Գլխաշոր (каскина) գործարհելու յեղանակը	39
Գարսաթիկ կապ (праща)	40
Հրարձակ վերքերի դեպքում առաջին ոգնութիւնն ցույց տալը	41
Առաջին ոգնութիւնն բեկվածքներին, հոգախախտումներին, ջարդ- վացքներին և կապաններին ձգվելու դեպքերում	42
Վոսկրերի բեկվածք	42
Առաջին ոգնութիւնն վոսկրտիքի դանազան մասերում տեղի ունեցած կտորվածքներին դեպքում	45
Հոգախախտում (գուրս բնկնել)	47
Ջարդվածք	49
Կապերի ձգում	49
Առաջին ոգնութիւնն ցույց տալու համար տուժածի շո- րերի հանման կարգը	50
Այրվածքներ	50
Յրտահարութիւնն	51
Վնասվածքներ ելեկտրական հոսանքից	52
Արհեստական շնչառութիւնն	53
Արհեստական շնչառութիւնն ըստ Սելվեստրի	53
Արհեստական շնչառութիւնն ըստ Շեֆֆերի	54
Յւշադնացութիւնն	55
Ջերմահարութիւնն	56
Արեահարութիւնն	57
Առաջին ոգնութիւնն խեղդվածին	57
Բնկնալորութիւնն սոսա	58
Ածխահոտի գաղից (угар) թունաժորվելը և առաջին ոգնու- թիւնն	58
Թույներով թունաժորվածին ցույց տրվող առաջին ոգնութիւնը	59
Աղյուսակ առաջին ոգնութիւնն տարբեր թույներով թու- նաժորվելիս	61
III. Յուժածների փոխադրումը	65
Տուժածին ձեռքերի վրա փոխադրելը	65
Գատգարակներ	65
Հիվանդների պատգարակի վրա դնելն ու փոխադրելը	67
Գատգարակը սանիտարական ավտոմեքենային բարձելը	71
IV. Մաժիստրական-ֆիւլիական պատգարակներ	74
Մարտական թունաժոր նյութերի ազդեցութիւնը մարդու որ- դանիզմի վրա	74
Խեղդող Թ. Ն.	74

Արտառվաբեր Թ. Ն.	75
Համաթունող Թ. Ն.	76
Կապտաթթույով թունաժորվելու նշանները	77
Շմոլազաղով թունաժորվելու նշանները	77
Գրգռող (փշտացնող) Թ. Ն.	78
Մաշկային (պարարային) Թ. Ն.	79
Հակալիւրիտային անհատական ծրար	80
Սանիտարական մշակման կայան (Ս. Մ. Կ.)	81
Հակաքիմիական պաշտպանութիւն միջոցներ	82
Բ. Ն. Հակազաղի կաղմութիւնն	84
Հակազաղից ողտվելու կանոնները	87
Դադապատարան	88
Բոնակելի շնքերի հարմարեցումը գաղապատարանների համար	88
Մննդամթերքների պաշտպանումը Թ. Ն.-երկից	88
Բուժական գուլբը Թ. Ն.-երկից պաշտպանելը և գրա դեզազա- ցիան	89
V. Առաջապահութիւնն	90
Բնակարանների առողջապահութիւնն	90
Ոգափոխութիւնն	91
Ջեռացում	92
Լուսավորութիւնն	93
Աշխատանքային և բնակելի սենյակների մաքրելը	94
Ինչպիս պիտի կառուցվի և պահվի փայտապատ ջրհորը	94
Ինչպիս վորոշել ջրի վորակը	95
Ջուրը վարակագերմ գարձնելու հասարակ յեղանակները	96
Արաքնոցների և կեղտաջրի եռերի կառուցումը	97
Մանդի առողջապահութիւնը	98
Մննդամթերքների լաժորակութիւնն վորոշումը	98
Մննդամթերքների փոխադրումը	99
Մննդամթերքների պահումը	99
Ռոհանոցները, ճաշարանները և բուֆետները մաքուր պահելու կանոնները	100
Մնձնական առողջապահութիւնն	101
Արեկից ողտվելը	102
Ջրով լողանալը	103
Չիղիկական վարժութիւններ	103
Բժաժոր Թիֆլէ կանխելու միջոցները	104

Նախազանդանական պատմաստույթներ 105
 Դեզինֆեկցիա և դեզինսեկցիա 106
 Ծծումբով դեզինսեկցիա 107

4. Կարմիր թաչի յեւ Կարմիր Մահիկի բնկերությունների խնդիրներն ու գործունեությունը 108

Կարմիր թաչի (Կարմիր Մահիկի) սանիտարական պոստերի աշխատանքի խնդիրներն ու ձևերը 111
 Մանպոստի պարտականություններն ու աշխատանքը 112
 Մանպոստի հագեցումը 113
 Մանպոստի սանիտարական պայուսյակի դարավածքը 114
 Մանպոստի տախտակ 115
 Ինչ պետք է գիտենա և կատարի Կարմիր թաչի (Կարմիր Մահիկի) ակտիվիստը 115
 Ցուցակ «ՊԱՍՊ»-ի I ստաիճանի կրճքանշանը ստանալու համար տրվելիք նորմաների 118



50

ՀՀ Ազգային գրադարան



NL0937764

ԳԻՆԸ 2 Ռ. 50 ԿՈՊ.

2 ՔԿԲ 1939

11

28327